



# Ձեռք մեր հանապազորդ

ՀՈՒԼԻՍ | ՕԳՈՍՏՈՍ | ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023

ԼԴ ՏԱՐԻ

Գ ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքուկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն  
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: [amaa@amaa.org](mailto:amaa@amaa.org), Website: [www.amaa.org](http://www.amaa.org)

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն

Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)

Կայքէջ՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Հոգին մի՛ մարեք: (Ա. Թես. 5.19)

## **ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻՆ ՄԻԱՑԱԾ**

**Թ**եև գիտեի, որ ուժեղ փոթորկից հետո մեր տան էլեկտրական հոսանքն անջատվել էր (մեր թաղամասում դա հաճախ է պատահում), բայց սենյակ մտնելով՝ սեղմեցի լույսի կոճակը: Բնականաբար դա ոչինչ չփոխեց, ու ես դեռ մթի մեջ էի:

Իմանալով հանդերձ, որ հոսանքն անջատված է, դարձյալ լույս սպասելն ինձ մի հոգևոր ճշմարտություն հիշեցրեց: Հաճախ մենք զորություն ենք ակնկալում, նույնիսկ եթե չենք կարող ապավինել Սուրբ Հոգուն:

Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին նամակում Պողոսը գրում է.«մեր Ավետարանը ձեր մեջ միայն խոսքով չտարածվեց, այլև զորությամբ, Սուրբ Հոգով ու կատարյալ վստահությամբ» (1.5): Երբ մենք ընդունենք Աստծո ներումը, հավատացյալները նույնպես մեր կյանքի միջոցով կկարողանան անմիջականորեն հասնել Նրա Հոգու զորությանը: Այդ զորությունը մեր մեջ զարգացնում է այնպիսի հատկություններ, ինչպիսիք են սերը, ուրախությունը, խաղաղությունը, համբերատարությունը, քաղցրությունն ու բարությունը (Գաղ. 5.22-23), իսկ զբանք մեզ պարգևում են եկեղեցուն ծառայելու, ուսուցանելու, օգնելու և դեկավարելու ուժ (Ա.Կորնթ. 12.28):

Պողոսն իր ընթերցողներին զգուշացնում է, որ հնարավոր է՝ «Հոգին մարի» (Ա. Թես. 5. 19): Դա կարող է պատահել, երբ սահմանափակենք Հոգու զորությունը՝ անտեսելով Աստծո ներկայությունը կամ մերժելով Նրա համոզմունքը (Հովհ. 16.8): Ուստի չպետք է ապրել Նրանից անջատված, որովհետև Աստծո զորությունը միշտ հասանելի է իր զավակներին:

**Աղոթք** - Ամենակարող Աստված, օգնի՛ր ինձ՝ զգալու Քո Հոգու զորությունն իմ կյանքում: Ամեն:

**Հոգու ուժի լիակատար գալու լիակատար աղոթքով ամուր կառչեն՝ դրա աղբյուրին:**

Աստված մեր ապավենն է: (Սաղմ. 62.8)

## ՄԵՐ ԱՊԱՍԱՐԱՆԸ

Հյուսիսային Ամերիկայի այդ շրջանում սկզբում գոմեշներ էին արածում, որոնց հետևում էին տափաստանային հնդկացիները: Այնուհետև այլ բնակիչներ հաստատվեցին այդտեղ՝ իրենց նախիրներով ու բերքով: Այդ հողատարածքը հետագայում ծառայել է որպես քրիստոնեական արտադրություն վայր՝ Փերլ Հարբորն անունով, իսկ Երկրորդ համաշխարհայինի ու նույնիսկ սառը պատերազմի տարիներին՝ զենքերի ապառազմականացման վայր:

Մի օր այստեղ հայտնվեցին խոշոր արծիվներ և շուտով Կոլորադոյի Դենվեր քաղաքի ծայրամասում՝ վաթսուն քառակուսի կմ տարածքի վրա ծնունդ առավ վայրի բնություն ազգային ապաստարանը: Այժմ այն քաղաքային ամենամեծ ապաստարանն է, որտեղ ապահով ու պաշտպանված ապրում են երեք հարյուր տեսակ կենդանիներ՝ սև ոտքերով նժույգներից մինչև գոմեշներ, հսկայական արծիվներից մինչև բուկեր:

Սաղմոսերգուն ասում է. «Աստված մեր ապավենն է» (62.8): Որևէ երկրային ապաստանից շատ ավելի մեծ է Աստված: Նա է մեր իսկական ապաստարանը, որտեղ ապահովված է մեր պաշտպանությունը, «մենք նրանով ենք ապրում, շարժվում և կանք» (Գործք 17. 28): Նա՛ է մեր ապաստանը, որին կարող ենք վստահել «ամեն ժամանակ» (Սաղմ. 62. 8): Նա մեր սրբավայրն է, որտեղ կարող ենք համարձակորեն բերել մեր սրտից բխած բոլոր ազդեցիկները:

Աստված մեր ապաստարանն է: Ահա՛ թե ով էր Նա սկզբում, ով է հիմա, և ով է լինելու միշտ:

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, շնորհակալ եմ, որ Դու իմ ապահով ու պաշտպանված բնակավայրն ես: Ամեն:

**Ասված մեր աղասարանն է, հե՛սաբար մենք ամենայն վստահությամբ կարող ենք մեր սրտերը բանալ Նրա առաջ:**

Քո մերձավորին սիրի՛ր քո անձի պես: (Ղևտ. 19. 18)

## ՍԻՐԻՐ ԸՆԿԵՐՈՋԴ, ԴՐԱՑՈՒՂ

**Ե**րիտասարդական խմբում մի խաղ էինք խաղում, որի նշանակությունն այն էր, որ ընկերներին կամ հարևաններին ոչ թե փոխել է պետք, այլ սովորել սիրել: Խաղի մասնակիցները նստում են շրջանաձև, կենտրոնում մնում է մեկը, որը նստածներից մեկին հարցնում է, թե արդյո՞ք սիրում է իր ընկերոջը: Պատասխանողը պետք է որոշի՝ ուզո՞ւմ է իր ընկերոջը փոխարինել մեկ ուրիշով, թե՛ ոչ:

Չէի՞նք ուզենա իրական կյանքում նույնպես կարողանալ «ընկերներին» ընտրել, հատկապես այն պարագայում, երբ դժվարությամբ ենք չփվում մեր գործընկերոջ հետ, կամ մեր հարևանն է անտանելի: Սակայն նախքան դրական պատասխան տալը՝ պետք է սովորել ապրել մեր այդ դժվար ընկերների հետ:

Երբ խրայելցիները տեղափոխվեցին խոստացված երկիր, Աստված նրանց կարևոր հրահանգներ տվեց, թե ինչպես են ապրելու՝ որպես Իր ժողովուրդ: Նրանց ասվել էր. «Քո մերձավորին սիրի՛ր քո անձի պես» (Ղևտ. 19. 18), ինչը նշանակում էր չտարածել բամբասանք ու սխալ տեղեկություն, չստել ու չխաբել, ի չարը չգործադրել կողքինի անկարողությունը, չհայհոյել, վրեժխնդիր չլինել (Հմ. 9-18):

Թեև դժվար է սիրել բոլորին, բայց կարելի է գոնե դրսևորել սիրալիր վերաբերմունք, մինչև Տեր Հիսուսը գործի մեր մեջ և մեր միջոցով: Աստված կտա մեզ իմաստնություն ու կարողություն, երբ մենք ձգտենք ապրել որպես Իր ժողովուրդ:

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր ինձ, որ արտացոլեմ քո սերը իմ շրջապատի նույնիսկ դժվար մարդկանց հանդեպ: Ամեն:

**Մի՛ս էլ կլինեն դժվար ընկերներ ու հարևաններ, բայց Աստված ակնկալում է, որ նրանց ավելի սիրեն:**

Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձության, որովհետև փորձվելով կստանա կյանքի պսակը, որ Տերը խոստացավ իրեն սիրողներին: (Հակ. 1.12)

## **ԱՆՓՈՓՈՒՍ ԱՍՏՎԱԾ**

**Լ**ուսանկարում երևում է տիեզերագնաց Բազ Ալդրինի ոտնահետքը, որ նա 1969թ. թողել է Լուսնի վրա: Գիտնականների հավաստմամբ՝ տարիներ անց էլ ոտնահետքն անփոփոխ մնացել է, որովհետև առանց քամու ու ջրի՝ ոչինչ չի քայքայվում:

Աստծո ներկայութունը նույնպես անփոփոխ է ու մշտական: Հակոբոսը գրում է.«Ամեն բարի շնորհ և ամեն կատարյալ պարգև վերևից է՝ իջած լույսի Հորից, որի մեջ փոփոխում կամ փոփոխման ստվեր բնավ չկա» (Հակ.1.17): Առաքյալն ասվածը դնում է մեր մարտահրավերների համապատկերում.«Լիարժեք ուրախությո՛ւն համարեք, եղբայրնե՛ր, երբ տարատեսակ փորձանքների մեջ ընկնեք» (Հմ.2), որովհետև մենք սիրված ենք մեծ ու անփոփոխ Աստծո կողմից:

Դժվարության մեջ պետք է հիշել Աստծո մշտական տրամադրությունը: Թերևս կարող ենք մտաբերել «Մեծ է հավատարմությունը» օրհներգի խոսքերը.«Չկա քո մեջ փոփոխման ստվեր, ո՛վ Տեր, անփոփոխ ես, սերդ է անսահման: Ինչպես կայիր, այնպես էլ կլինես հավիտյան»: Այո՛, մեր Աստվածը մեր աշխարհի վրա թողել է Իր մշտական հետքը: Նա միշտ մեր կողքին է: Մեծ է Նրա հավատարմությունը:

**Աղոթք** -Հայր, ես հուսահատված եմ դժվարությունների պատճառով, անհանգիստ եմ իրադարձությունների զարգացմամբ, բայց գիտեմ, որ Դու՛ն այնտեղ ես և կապահովես: Օգնիր, որ Քեզ վստահելով՝ հանգստանամ: Ամեն:

**Այսօր դժվարությունների մեջ եմ, բայց Աստծո անփոփոխ ներկայությունը հասկանալը կօգնի մեզ դայքարել:**

Սի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ վերափոխվե՛ք ձեր մտքի նորոգությամբ: (Գոռն. 12.2)

## **ԸՆԴՕՐԻՆԱԿԵՆՔ ՀԻՍՈՒՍԻՆ**

**Ի** նդոնեզիայի և Ավստրալիայի Մեծ արգելախուլթի ջրերում բնակվում է ութոտնուկի մի տեսակ, որն այդ տեսակի մյուս կենդանիների նման վտանգի պահին ոչ միայն գուլյն է փոխում ու ձուլվում չրջապատին, այլև կարողանում է նմանվել ջրային այլ կենդանիների, ընդօրինակել նրանց շարժուձևը:

Ի տարբերություն նմանակող կամ ընդօրինակող ութոտնուկի՝ Հիսուսին հավատացողները կոչում ունեն երևալո՛ւ չրջապատող աշխարհում: Մենք կարող ենք վտանգ զգալ նրանց կողմից, ովքեր համաձայն չեն մեզ հետ, և փորձենք քողարկվելու համար նույնանալ նրանց հետ: Սակայն Պողոս առաքյալը հորդորում է.«Ձեր մարմինները մատուցե՛ք կենդանի զոհ՝ սուրբ և աստվածահաճո. դա է ձեր հոգևոր պաշտամունքը» (Հռոմ. 12.1): Մեր ընկերներն ու չրջապատը կարող են ճնշում բանեցնել մեզ վրա, որպեսզի «կերպարանվենք այս աշխարհի կերպարանքով»(Հմ.2): Բայց մենք, որպես Աստծո զավակներ, կարող ենք ցույց տալ, թե ում ենք ծառայում՝ մեր կյանքը համապատասխանեցնելով այն ամենին, ինչին հավատում ենք: Հնազանդվելով սուրբգրային իմաստնություններին ու արտացոլելով Նրա սիրառատ նկարագիրը՝ մեր կյանքով կարող ենք ցույց տալ, որ հնազանդություն պարզեցնելով միշտ ավելի մեծ են, քան որևէ կորուստ: Արդ, ինչպե՞ս պետք է այսօր ընդօրինակենք Հիսուսին:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հիսուս, խնդրում եմ՝ ինձ քաջություն ու վստահություն տուր, որ Քեզ ցույց տամ ուրիշների: Ամեն:

**Քանի որ որոշել եմ մեր խոսքերով ու արարներով ներկայացնել Հիսուսին, դառնում եմ Նրան գաղտնի՞ հավասացողներ և օտարան՞ում եմ մեր ընթացիկից ու բարեկամներից:**

Երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ: (Հռոմ. 5.8)

### **ՀՈՒՅՄ՝ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ ՀԵՏՈ**

**Ե**րբեք պատահե՞լ է, որ զայրացած մի բան ես արել, որի համար հետո զղջացել ես: Երբ որդիս թմրամոլության ճանկն էր ընկել, ես կոպտորեն խոսեցի նրա հետ, որ այդպիսի ընտրություն էր կատարել, բայց հետո սկսեցի տանջվել: Ի վերջո տղաս հանդիպեց հավատացյալների, որոնք նրա հետ խոսեցին կյանքի ու հույսի մասին, և ժամանակ ընթացքում նա ազատվեց այդ մոլուցքից:

Նույնիսկ Մովսեսի պես օրինակելի հավատավորն արել էր մի բան, որի համար զղջաց: Երբ Իսրայելի ժողովուրդը անապատում դառնորեն բողոքում էր ջրի պակասից, Աստված Մովսեսին ու նրա եղբայր Ահարոնին հրահանգեց.«Հավաքե՛ք ժողովրդին և նրանց աչքերի առաջ ասացե՛ք ապառաժին, և նա կտա իր ջուրը: Դու ապառաժից ջուր կհանես նրանց համար» (Թվեր 20.8): Սակայն Մովսեսը զայրացած արձագանքեց և Աստծո հրաշքը վերագրեց իրեն ու եղբորը (հմ.10): Նա ուղղակի չհնազանդվեց Աստծուն և «իր ձեռքը բարձրացրեց ու գավազանով երկու անգամ զարկեց ապառաժին» (հմ.11):

Թեև ջուրը հոսեց, բայց ողբերգական հետևանքներ էլ եղան: Ո՛չ Մովսեսին, ո՛չ էլ Ահարոնին թույլ չտրվեց մտնել Աստծո խոստացած երկիր: Բայց նա ողորմություն ցույց տվեց Մովսեսին՝ թույլ տալով, որ նա այն հեռվից տեսնի (27. 12-13):

Ինչպես Մովսեսի պարագայում, Աստված տակավին ողորմությամբ է հանդիպում մեզ: Հիսուսի մահվան ու հարության միջոցով նա սիրով մեզ ներում ու հույս է առաջարկում: Անկախ նրանից, թե մենք որտեղ ենք և ինչ ենք արել, եթե դիմենք Իրեն, նա մեզ կյանք կտա:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ հակառակ դժվարին հետևանքների՝ Դու ինձ հավիտենական հույս ես տալիս: Ամեն:

**Հակառակ մեր անհնազանդություններին՝ Աստված մեզ բազում բարիքներ է տալիս: Մեզ մնում է դրանց մասին դասնել ուրիշներին:**

Մովսեսն ասաց նրանց. «Սա այն հացն է, որ Տերը տվեց ձեզ՝ ուտելու»: (ԵԼՔ 16.15)

## **ՇՈՎՈՒԼԱԴԻ ՓԱԹԻԼՆԵՐ**

**Շ**վեյցարական Օլթեն քաղաքի բնակիչները զարմացել էին՝ տեսնելով, որ քաղաքը ծածկված է շոկոլադի փաթիլներով: Մոտակա շոկոլադի գործարանի օղափոխիչ համակարգի խափանման պատճառով այդ անուշեղենի մասնիկները ցրվել էին օդի մեջ: Իհարկե, շոկոլադի սիրահարներին համար դա երազանքի իրականացում էր դարձել:

Այս պատկերը հիշեցնում է Իսրայելի ժողովրդին Աստծո խոստացած դրախտային անձրևները, երբ նրանք ճամփորդում էին անապատում և ջրի ու սննդի պակաս ունեին: Ի պատասխան իսրայելցիների տրտունջների՝ Աստված խոստացավ «երկնքից հաց տեղացնել նրանց համար» (ԵԼ.16. 4): Հաջորդ առավոտյան անապատում բարակ փաթիլների մի շերտ հայտնվեց: Մոտ երկու միլիոն իսրայելցիներին հանձնարարվեց հավաքել այնքան, որքան անհրաժեշտ է այդ օրվա համար: Եվ անապատային թափառումների 40 տարիներին նրանք սնվում էին Աստծո ուղարկած մանանայով:

Մենք քիչ բան գիտենք մանանայի մասին, բացի այն, որ այն «գինձի սերմի պես սպիտակ էր, և համը մեղրով պատրաստված գաթայի նման էր» (Հմ.31): Թեև մանանան կարող է շոկոլադի նման գրավիչ չլինել, բայց Աստծո կողմից ժողովրդին տված քաղցրությունը հստակ է: Մանանան մեզ ցույց է տալիս Հիսուսին, որն իրեն ներկայացրեց որպես «կյանքի հաց» (Հովհ. 6. 48), որ ամեն օր աջակցում է մեզ և վստահեցնում հավիտենական կյանքի մասին (Հմ.51):

**Աղոթք** - Հայր Աստված, շնորհակալ եմ Հիսուսի խորին կարիքն զգացնելուդ և ամեն օր ինձ աջակցելուդ համար: Ամեն:

**Ասված հոգում է մեր բոլոր կարիքները և Հիսուսի՝ «կյանքի հաց» լինելը թող փառալուծի մեզ, որ վստահենք Իրեն:**



Հասկանալով, որ անուսում ու տգետ մարդիկ են, զարմացած էին, որովհետև նրանց ճանաչում էին իբրև Հիսուսի հետևորդների: (Գործք. 4.13)

### **ՀՈԳՈՎ ԱԶԱՏ**

**Օ**րվիլ ու Ուիլբեր Ռայթ եղբայրները ո՛չ քուլեջ էին գնացել, ո՛չ էլ օդաչուի վկայական ունեին: Նրանք հեծանիվ էին նորոգում և երազում թռչելու մասին: 1903 թ. դեկտեմբերի 17-ին նրանք հերթով չորս անգամ վարեցին իրենց պատրաստած թռչող սարքը: Ամենաներկար թռիչքը տևեց ընդամենը մեկ րոպե, բայց այն հեղափոխեց աշխարհը, որովհետև եղբայրները գտել էին թռչող ապարատ պատրաստելու գլխավոր սկզբունքը:

Պետրոսն ու Հովհաննեսը նույնպես չունեին քարոզչության արտոնագիր, չէին հաճախել աստվածաբանական ճեմարան: Նրանք ձկնորս էին, որոնք լցված էին Հիսուսի Հոգով և խիզախորեն հռչակեցին բարի լուրը. «Ուրիշ մեկի միջոցով փրկություն չկա, որովհետև երկնքի տակ չկա մարդկանց տրված ուրիշ անուն, որով մենք կարող ենք փրկվել» (Գործք 4.12): Ռայթ եղբայրների հարևանները միանգամից չգնահատեցին նրանց ձեռքբերումը: Այդ քաղաքի թերթը չհավատաց նրանց պատմությունը՝ նկատելով, որ եթե նույնիսկ դա ճիշտ է, թռիչքները չափազանց կարճ են նշանակալից համարվելու համար: Տարիներ պահանջվեցին, որպեսզի օդանավերը կատարելագործվեին և հասարակությունը ճանաչեր այդ մարդկանց գործի կարևորությունը: Կրոնական առաջնորդները չէին սիրում Պետրոսին ու Հովհաննեսին, ուստի հրամայեցին, որ նրանք դադարեցնեն Հիսուսի մասին պատմելը: Պետրոսն ասաց. «Մենք չենք կարող չասել այն, ինչ տեսել ենք ու լսել» (Հմ. 20): Դու կարող ես չլինել հաստատված ցուցակում: Գուցե նաև արհամարհված լինես: Հոգ չէ: Որովհետև եթե ունես Հիսուսի Հոգին, համարձակորեն կարող ես ապրել Նրա համար:

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, ես Քոնն եմ: Ինձ օգտագործի՛ր, ինչպես ուզում ես: Ամեն:

**Հաճախ անկարող ենք զգում մեզ, բայց աղավիհներով Սուրբ Հոգու մեճական ներկայությամբ՝ կարող ենք ընդունել մեզ առաջադրված մարտահրավերները:**

Լուծիր ամբարշտության կապանքները, արձակիր լծի կապերը. կեղեքվածներին ազատիր: (Ես. 58. 6)

## **ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՂԱՂԱԿ**

**Դ**եյվիդ Ուիլլիսը, երբ Վաթերսթոն գրախանութի վերնահարկից իջավ ցած, լուսերն արդեն անջատված էին, դռներն էլ՝ փակ: Հայտնվելով անելանելի վիճակում՝ նա թվիթերում գրեց.«Ողջույն, Վաթերսթոն, ես փակված եմ մնացել ձեր ցանցի Թրաֆալգար հրապարակի գրախանութում: Խնդրում եմ՝ օգնե՛ք ինձ»: Շատ չանցած՝ նրան ազատեցին:

Լավ է, երբ դժվարություն մեջ ունես օգնություն ստանալու միջոց: Եսային ասել է, որ երբ հայտնվում ենք մեր իսկ պատճառով առաջացած դժվարություն մեջ, կա մեկը, որը կպատասխանի օգնության մեր կանչին: Մարգարեն գրում է, որ Աստված դատապարտեց Իր ժողովրդին՝ իրենց կրոնական նվիրումը անպատասխանատու կերպով կիրառելու համար: Նրանք արտաքուստ հետևում էին կրոնական ցուցումներին, Աստծո պատվիրաններին, սակայն կեղեքում էին աղքատներին և իրենց ցանկություններին էին առաջնային համարում (Ես. 58.1-7): Սա դուր չեկավ Աստծուն, և նա փակեց աչքերն ու չլսեց նրանց ձայնը (1.15): «Լուծի՛ր ամբարշտության կապանքները, արձակի՛ր լծի կապերը. կեղեքվածներին ազատի՛ր: Հացդ բաշխի՛ր քաղցածին, թափառական թշվառներին տո՛ւն բեր և քո նմանից քեզ մի՛ ծածկիր» (58. 6-7): Այդ ամենը կատարելու պարագայում «դու կկանչես, և Տերը կպատասխանի, դու կաղաղակես, և նա կասի. «Ահա՛ ես»: Եթե դու քո միջից հեռացնես լուծը, դեն գցես մատնացույց անելն ու չարախոսությունները» (Հմ.9): Եկե՛ք մոտենանք աղքատներին՝ նրանց ասելով՝ ես այստեղ եմ: Որովհետև Աստված լսում է օգնության մեր կանչը և ասում. «Ահա՛ ես»:

**Աղոթք** - Սիրելի Դայր, շնորհակալ եմ, որ լսեցիր աղոթքներս: Խնդրում եմ օգնիր ինձ՝ լինել ուրիշների կողքին: Ամեն:

**Ասված սվել է ցնորհներ ու դարգևներ, որոնք կարող են բաժանել ուրիշներին:**

Իսկ ով կատարում է այն, ինչ ճշմարիտ է, գալիս է դեպի լույսը: (Ռոմ. 3.21)

### **ԽԱՎԱՐԻՑ՝ ԼՈՒՅՍ**

**Ո**չինչ չէր կարող թոթափել Ասկաշի ճնշվածությունը: Բեռնատարի վթարի հետևանքով ծանր վիրավորվելով՝ նա տեղափոխվել էր Հարավարևմտյան Ասիայի միսիոներական հիվանդանոց: Ութ վիրահատությունները վերականգնել էին նրա կոտրված ոսկորները, սակայն նա դեռ չէր կարողանում ուտել, որից էլ շատ էր նեղվում: Նրա ընտանիքը կախված էր իրենից, ուստի աշխարհը նրա համար մթնել էր:

Մի օր այցելուներից մեկը Ասկաշի համար կարգաց Հովհաննեսի Ավետարանը և աղոթեց նրա համար: Հուզված լինելով Հիսուսի միջոցով Աստծո ներման և փրկության պարզեի հույսից՝ նա հավատաց Նրան: Նրա ճնշվածությունը շուտով անցավ: Երբ տուն վերադարձավ, սկզբում վախենում էր ասել իր նոր հավատի մասին: Բայց երբ պատմեց Տեր Հիսուսի մասին, ընտանիքի անդամներից մի քանիսը նույնպես վստահեցին Նրան:

Հովհաննեսի Ավետարանը լույսի փարոս է խավարում: Դրանում կարգում ենք. «Ով նրան հավատում է, չի կորչի, այլ հավիտենական կյանք կունենա» (Հովհ.3. 16): «Ով լսում է իմ խոսքը և հավատում է ինձ ուղարկողին, հավիտենական կյանք ունի» (5.24): Լսում ենք Հիսուսին, երբ Նա ասում է.«Ես եմ կյանքի հացը. դեպի ինձ եկողը չի քաղցի, և ինձ հավատացողը երբեք չի ծարավի» (6.35): «Իսկ ով կատարում է այն, ինչ ճշմարիտ է, գալիս է դեպի լույսը» ( 3.21): Մեր կյանքում հանդիպած դժվարությունները կարող են մեծ լինել, բայց Հիսուսն ավելի մեծ է: Նա եկավ, որ մեզ տա «առատ կյանք» (10.10): Ասկաշի նման դու էլ հավատա՛ Հիսուսին՝ աշխարհի հույսին և ողջ մարդկության համար աշխարհ եկած լույսին:

**Աղոթք** - Սիրելի՛ երկնավոր Հայր, շնորհակալ եմ Որդուդ տված հույսի համար: Ամեն:

**Աժխարհի խնդիրները սղառում են մեզ և մտահոգում: Բայց Հիսուսի ներկայությունն ու դասգամը փառալերում են մեզ:**

Ամեն տուն որևէ մեկի կողմից է կառուցվում, իսկ նա, ով ամեն բան արարեց, Աստված է: (Եբ.3.4)

## **Ո՞Վ Է ԱՐԺԱՆԻ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ**

**Ա**ռուծախի միջնորդը երիտասարդ գույգին մանրամասն ցույց տվեց բոլոր հարմարութիւններով բնակարանը՝ պարտաճև սանդուղքից մինչև ընդարձակ ննջասենյակը, փայտե տախտակամածից մինչև գեղեցիկ գորգերը. լվացքի սենյակից մինչև գեղեցիկ կահավորված գրասենյակը: Նայելով բոլոր անկյուններն ու հիանալով՝ գնորդները շնորհակալութիւն հայտեցին և ասացին, որ սա իրենց երազած տունն է: Ի պատասխան՝ միջնորդն ասաց, որ իրենց գնահատանքի խոսքը ինքը կփոխանցի շինարարին, որովհետև գովասանքի է արժանի ոչ թե ցույց տվողը, այլ կառուցողը:

Միջնորդի այդ խոսքերն ասես կրկնեն եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակին.«տնից ավելի մեծ պատիվ ունի այն կառուցողը» (3.3): Այս խոսքերի հեղինակը Հիսուսի հավատարմութիւնը համեմատում էր Մովսես մարգարեի հետ (Հմ. 1-6): Թեև Մովսեսն արտոնութիւն ուներ Աստծո հետ դեմ առ դեմ խոսելու և նրան տեսնելու (Թվ. 12. 8), բայց նա Աստծո տանը «ծառա էր» (Եբ.3.5): Քրիստոսը՝ որպես Արարիչ (1. 2,10)՝ արժանի է պատվի, որպես «ամեն բան կառուցող» և որպես «Աստծո տան Որդի» (3. 4,6): Աստծո տունը Նրա ժողովուրդն է:

Երբ մենք հավատարմորեն ծառայում ենք Աստծուն, աստվածային շինարարը Հիսուսն է, որ արժանի է պատվի: Որևէ փառք, որ մենք ստանում ենք, որպես Աստծո տուն, ի վերջո պատկանում է Նրան:

**Աղոթք** - Տեր Գիսուս, Դո՛ւ ես արժանի ամեն գովասանքի: Թող կյանքս ու խոսքերս փառաբանեն քեզ այսօր: Ամեն:

**Սեր մեջ ամեն ինչ կառուցել է Աստված, ուստի Ինքն է արժանի փառքի ու գովասանքի, և ոչ թե մենք:**

Լվա՛ ինձ, և ես ձյունից սպիտակ կլինեմ: (Սաղմ. 51.7)

## ԼՎԱ՛ ԻՆՁ

**Ի**մ ավտոմեքենայի վրա գրված չէ՛ լվա՛ ինձ, բայց դրա կարիքը կար: Եվ ես զնացի ավտոլվացման կետ, որտեղ բավական մեծ հերթ էր, սպասարկումն էլ՝ դանդաղ: Բայց երբ մաքուր մեքենայով դուրս եկա սրահից, հասկացա, որ արժեք երկար սպասելը, մանավանդ որ երկար սպասեցնելու համար անվճար սպասարկեցին:

Ուրիշի հաշվին մաքրվելը Հիսուս Քրիստոսի ավետարանն է: Հիսուսի մահվան ու հարուժյան միջոցով Աստված ներել է մեր մեղքերը: Մեզանից ո՞վ չի զգացել «լոգանք ընդունելու» կարիք, երբ կյանքի կեղտն ու աղտեղուծությունը կպած են լինում մեզ, երբ պատված ենք լինում եսասիրական մտքերով ու արարքներով, որոնք վնասում են մեզ կամ ուրիշներին և խզում Աստծո հետ մեր հաշտությունը: Սաղմոս 51-ում Դավիթն աղաղակում է, երբ դիմազրավում է բազում փորձություններ ու մարտահրավերներ (տե՛ս Բ. Թագ. 12): Նա ասում է «Լվա՛ ինձ»-ի աղոթքը. «Մաքրի՛ր ինձ զոպայով, և ես մաքուր կլինեմ. լվա՛ ինձ, և ես ձյունից սպիտակ կլինեմ» (Հմ.7):

Անմաքուր ու մեղավոր ես զգում: Գնա՛ Հիսուսի մոտ և հիշի՛ր այս խոսքերը. «Եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար՝ մեր մեղքերը ներելու և մաքրելու մեզ ամեն անիրավությունից» (Ա.Հովհ. 1.9):

**Աղոթք** - Երկնքի՛ Աստված, Դու տեսնում ես կյանքիս յուրաքանչյուր բիծը, որ պետք է մաքրվի: Լվա՛ ինձ, ների՛ր և օգնի՛ր, որ քեզ պատվեմ: Ամեն:

**Կարի՛ք ունե՞՞նք Ասծուն խնդրելու, որ մեզ մաքրի ու ների: Բայց ի՞նչն է խանգարում Հիսուսի սված անվճար մաքրությունը խնդրելու:**

Սակայն նրանք կրկին ու կրկին ապականեցին իրենց բոլոր արարքները: (Սոփ.3.7)

## **ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Ե**րկու ընկերով վատ արարք էինք կատարել, և հիմա ճամբարի տնօրենին խնդրում էինք, որ ների մեզ: Նա լավ էր ճանաչում մեր ծնողներին, և բարեհոգաբար շեշտեց, որ մենք հուսախաբ ենք անում նրանց: Այդ խոսքերից մենք այնքան ազդվեցինք, որ ուզում էինք գետինը մտնել:

Աստված Սոփոնիա մարգարեին Հուդայի ժողովրդի համար պատգամ տվեց, որը նույնպես գործած մեղքերի համար անձնական պատասխանատվություն կրելու մասին էր (Սոփ. 1.1, 6-7): Նկարագրելով այն դատաստանները, որ ինքը բերելու է Հուդայի թշնամիներին (գլ. 2), Նա հայացք գցեց մեղքերի մեջ գալարվող Իր ժողովրդին (գլ.3) և հայտարարեց. «Վա՛յ ապստամբին և պիղծին, կեղեքող քաղաքին» (3.1): «Նրանք կրկին ու կրկին ապականեցին իրենց բոլոր արարքները» ( հմ.7):

Նա տեսել էր Իր ժողովրդի սառած սիրտը, հոգևոր անտարբերությունն ու սոցիալական անարդարությունը, մարդկանց ազահույնությունը, այդուամենայնիվ նրանց սիրալիկ էր խրատում: Եվ ամենևին կարևոր չէր, թե ովքեր էին «առաջնորդները»՝ «դատավորներ, թե մարգարեներ» (հմ.3-4), բոլորն էլ մեղավոր էին Նրա առջև:

Պողոս առաքյալը Հիսուսին հավատացողներին, որոնք շարունակում էին մեղքի մեջ մնալ, գրեց. «Աստված յուրաքանչյուրին ըստ իր գործերի հատուցում է տալու» (Հռոմ. 2.5-6): Ուստի Հիսուսի գործությունը եկե՛ք այնպես ապրենք, որ պատվենք մեր սուրբ ու սիրող Հորը և խուսափենք խղճի խայթոցներից:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ լավ ընտրություն կատարեմ քեզ համար: Ամեն:

**Անձամբ դասասխանացու եմ մեր գործած սխալների ու մեղքերի համար, որոնք ամոթով են թողնում մեր Աստուծուն:**

Մարդու սրտի խորհուրդը խոր ջրերի նման է: (Առ. 20.5)

## ԽՈՐ ՋՐԵՐ

**1** 992-ին Բիլլ Փինքնին միայնակ կատարեց շուրջերկրյա նավարկություն՝ անցնելով վտանգավոր ու բարդ ճանապարհներով: Բացի հետազոտական աշխատանքից՝ նրա նպատակներից մեկն էլ մանկավարժական էր. ուզում էր իր օրինակով ոգեշնչել երեխաներին, ցույց տալ, թե որքան հեռուն կարող են գնալ տրքնաջան աշխատելով ու պարտականություն ստանձնելով: Իր նավն անվանելով «Հանձնառություն»՝ նա աշակերտներին տանում էր նավարկության, թույլ տալիս, որ ղեկի լծակը պահեն իրենց ձեռքում, ինքնուրույն որոշ քայլեր կատարեն՝ ասելով. «Նրանք սովորում են իրավիճակի վերահսկում, ինքնատիրապետում ու խմբային աշխատանք: Այսինքն՝ այն բաները, որոնք անհրաժեշտ են կյանքում հաջողության հասնելու համար»:

Փինքնիի այս խոսքերը ասես ներկայացնում են Սողոմոնի իմաստությունների մի պատկերը. «Մարդու սրտի խորհուրդը խոր ջրերի նման է, բայց խոհեմ մարդն այն դուրս է հանում» (Առ. 20.5): Նա ուրիշներին հրավիրեց, որ ուսումնասիրեն իրենց կյանքի նպատակները, այլապես «որողայթ է մարդու համար առանց խոր մտածելու ասել «Աստծուն» ընծայված է» և ուխտելուց հետո կշռադատել» (Հմ. 25):

Փինքնին ուներ հստակ նպատակ: Նա 30 հազար ուսանողների ոգեշնչեց՝ դառնալով առաջին աֆրոամերիկացին, որ ճանաչվել է Ազգային առաջաստանավային Փառքի սրահում: Այդ ամենում նրա համար ամենակարևորն այն էր, որ երեխաները տեսնում են իրեն:

Եկե՛ք մենք էլ մեր կյանքի ընթացքը կարգավորենք Աստծո տված ցուցումներով ու իմաստուն խորհուրդներով:

**Աղոթք** -Հավատարիմ Աստված, ոգեշնչի՛ր ինձ, որպեսզի պարտավորվեմ աշխատել մեկ նպատակով, որ կփառավորի Բեզ: Ամեն:

**Մեր գործերն ու ծառայությունները որոշակի նոյանակ ունեն, որոնք ցանկություն են առաջացնում մեր ձեռքբերումները, որդես ծառանգություն, փոխանցելու հաջորդ սերնդին:**

Ամենը, ինչ էլ որ անեք՝ խոսքով կամ գործով, ամեն բան Տեր Հիսուսի անունով արեք: (Կող. 3.17)

### **ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՌՕՐՅԱՅԻ ՀԱՄԱՐ**

«Սուրբ ամեն պահի» ժողովածուի մեջ գետեղված աղոթքները տարբեր գործերի համար են, ներառյալ ամենասովորական առօրյա բաները՝ ասենք լվացք անելը, ճաշ եփելը և այլն: Այս գիրքն ասես հաստատումը լինի անգլիացի գրող, նկարիչ, քրիստոնեական գործիչ Չեսթրթոնի հետևյալ խոսքերի: «Դու աղոթում ես ուտելուց առաջ: Շատ լավ: Իսկ ես աղոթում եմ ուրվագծելուց, նկարելուց, լողալուց, սուսերամարտելուց, բռնցքամարտելուց, քայլելուց, խաղալուց, պարելուց և գրիչը թանաքի մեջ թաթախելուց առաջ»:

Այս խրատականքը վերափոխում է առօրյա գործունեության մասին իմ տեսակետը: Երբեմն ես գործերի այնպիսի բաժանում եմ անում, որ իմ կարծիքով հոգևոր արժեք ունեցողները առանձնացնում եմ: Օրինակ կարևորում եմ ընթրիքից առաջ հոգևոր խորհրդածություն կարդալը և աման լվալուց առաջ նման բան չեմ նախատեսում: Պողոս առաքյալը կողոսացիներին ուղղված իր նամակում ջնջեց այդ բաժանումը. «Ամենը, ինչ էլ որ անեք՝ խոսքով կամ գործով, ամեն բան Տեր Հիսուսի անունով արեք» (Կող. 3.17): Տեր Հիսուսի անունով ինչ-որ բան անելը նշանակում է այդ բոլոր պահերին պատվել Նրան և վստահություն ունենալ, որ Նրա հոգին օգնում է մեզ զորանալ այդ ամենն իրականացնելու համար:

«Ինչ էլ որ անեք»: Մեր կյանքի բոլոր սովորական գործերը ամեն պահի կարող են զորանալ Աստծո Հոգով և կատարվել այնպես, որ պատիվ բերեն Հիսուսին:

**Աղոթք** - Տեր Հիսուս, գորացրո՛ւ ինձ Քո Հոգով, որպեսզի կարողանամ պատվել Քեզ իմ այսօրվա բոլոր գործողություններով: Ամեն:

**Վերանանձ մեր առօրյա գործերից և դրանք կատարեն՝ աղալիներով Սուրբ Հոգուց սրված լիազորությամբ:**



Իրենց ցեղութեան մեջ Տիրոջն աղաղակեցին, և Նա փրկեց նրանց իրենց վշտերից: (Սաղմ. 107. 28)

## **ԱՂՈԹՔ ԵՎ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ**

**1** 982-ին Հովիվ Քրիստոսիան Ֆյուրերը երկուշաբթի երեկոյան *1* Լայպցիգի Սուրբ Նիկոլաս եկեղեցում աղոթքի հանդիպումներ սկսեց: Տարիներ շարունակ մի խումբ մարդիկ հավաքվում էին Աստուծոց խաղաղությունն խնդրելու համաշխարհային բռնությունների և Արևելյան Գերմանիայի ճնշող վարչակարգի դեմ: Թեև կոմունիստական իշխանությունները ուշադիր հետևում էին եկեղեցիներին, եկեղեցու անդամները հանգիստ էին այնքան ժամանակ, մինչև որ եկեղեցուց դուրս սկսվեցին զանգվածային հավաքներ: 1989 թ. հոկտեմբերի 9-ին յոթնասուն հազար ցուցարարներ հավաքվեցին ու խաղաղ ցույց անցկացրին: Արևելյան Գերմանիայի վեց հազար ոստիկաններ պատրաստ էին պատասխանել ցանկացած սադրանքի: Բայց ցույցը խաղաղ անցավ, և մեկ ամիս անց Բեռլինի պատը փլուզվեց: Այդ զանգվածային փոխակերպումն սկսվեց աղոթքի ժողովով: Երբ դիմում ենք Աստուծու և ապավինում Նրա իմաստնությունն ու զորությունը, ամեն ինչ սկսում է փոխվել: Իսրայելի նման, եթե «նեղության մեջ Տիրոջն աղաղակենք», կգտնենք այն Աստուծուն, որ միայն Ինքն է ի զորու փոխակերպել նույնիսկ մեր ամենասարսափելի դժվարությունները և պատասխանել մեր ամենազժվար հարցերին (Սաղմ. 107. 28): Աստված «հանդարտեցնում է մրրիկը» և «անապատը փոխում է ջրերի լճի և ծառավ երկիրը՝ ջրերի հոսանքի» (Հմ. 29, 35): Նա հույս է բերում հուսահատությունից և գեղեցկություն՝ ավերակներից: Աստված է, որ Իր ժամանակին (և ո՛չ մեր) կատարում է փոխակերպումը: Իսկ աղոթքն այն միջոցն է, որով մենք մասնակցում ենք Նրա կատարած փոխակերպմանը:

**Աղոթք** -երկնավոր Հայր, կարիք ունեմ Քո փոխակերպման աշխատանքին: Խնդրում եմ՝ փոխի՛ր այն, ինչը միայն Դու կարող ես փոխել: Ամեն:

**Ասված կատարում է իր փոխակերպող աշխատանքը, երբ մենք աղոթքով խոնարհվում ենք Իր առջև:**

Մտաբերում եմ այն անկեղծ հավատը, որ քո մեջ է, որ սկզբում կար քո Լորդա տատի ու քո Եվնիկե մոր մեջ. համոզված եմ, որ այն նաև քեզանում է: (Բ. Տիմ. 1.5)

## **Ո՞ՐՆ Է ԻՄ ՆՊԱՏԱԿԸ**

**Ա**յրի և թոշակառու Հարուլդը, մի օր տեսնելով, որ իր զավակներն զբաղված են իրենց ընտանիքներով, իրեն ավելորդ ու անպետք զգաց: Առհասարակ նա վերջերս հաճախ էր դասերն ասում.«Ես արդեն ծեր եմ, ապրել եմ լիարժեք կյանք, այլևս որևէ նպատակ չունեմ: Աստված կարող է իր ուզած պահին տանել ինձ»:

Սակայն մի դիպված փոխեց նրա կարծիքը: Հարևանը խնդիրներ ուներ իր զավակների հետ, և Հարուլդը աղոթեց նրա համար: Հետո Ավետարանի մասին պատմեց և հասկացավ, որ ինքը դեռ նպատակ ունի: «Քանի դեռ կան մարդիկ, որոնք չեն լսել Հիսուսի մասին, ես պետք է նրանց պատմեմ Փրկչի մասին»:

Երբ Հարուլդը արձագանքեց սովորական, ամենօրյա հանդիպմանը և կիսեց իր հավատը, հարևանի կյանքը փոխվեց: Բ. Տիմոթեոս 1-ում Պողոս առաքյալը հիշում է երկու կանանց, որոնց նույնպես Աստված օգտագործում է մեկ ուրիշի կյանքը փրկելու համար: Տիմոթեոսի տատը՝ Լոիզան և մայրը՝ Եվնիկեն, ունեին «անկեղծ հավատք», որը փոխանցել էին նրան (Հմ.5): Սովորական ընտանիքում եղած ամենօրյա իրադարձությունների միջոցով երիտասարդ Տիմոթեոսը ձեռք բերեց իսկական հավատ, որը պետք է ձևավորեր նրա հոգևոր աճը՝ դարձնելով Հիսուսի հավատարիմ աշակերտներից և ի վերջո Եփեսոսի եկեղեցու առաջնորդներից մեկը:

Անկախ մեր տարիքից, հենարաններից կամ հանգամանքներից՝ մենք նպատակ ունենք ուրիշներին պատմելու Տեր Հիսուսի մասին:

**Աղոթք** - Սիրելի Հիսուս, բա՛ց աչքերս ու սիրտս իմ շուրջը գտնվող մարդկանց համար, որոնք կարիք ունեն լսելու Քո սիրո մասին: Հնարավորություն տուր, որ նրանց պատմեմ Քո մասին: Ամեն:

**Կարող եմ փառալերել ուրիշներին, որ հավասան Հիսուսին:  
Աղոթեմ ու խնդրեմ Ասծուն, որ մեզ հնարավորություն տա  
Ավեսարանը բաժնեկցելու ուրիշների հետ:**

Երբ նա նեղության մեջ էր, փնտրեց իր Տեր Աստծուն և շատ խոնարհվեց իր հայրերի Աստծու առաջ: (Բ. Մնաց. 33.12)

### **ՃԻՇՏ ԲԱՆ ԱՆԵԼ**

**Բ**անտարկյալ Ձեյսոնից ստացած նամակը զարմացրեց ինձ ու կնոջս: Մենք մեծացնում ենք փոքրիկ շնիկներին, որոնք հետագայում դառնալու էին հաշմանդամություն ունեցող մարդկանց ծառայող շներ: Այդպիսի ձագերից մեկը մարզման հաջորդ փուլն անցել էր բանտարկյալների մոտ: Շանը վարժեցնող Ձեյսոնն իր նամակում ափսոսանք էր հայտնում իր անցյալի համար և գրում, որ Մնիքերը 18-րդ շունն է, որին ինքը մարզում է, և նա լավագույնն է: «Երբ տեսնում եմ, թե ինչպես է շունը նայում ինձ, զգում եմ, որ վերջապես ճիշտ բան եմ անում», - գրում էր Ձեյսոնը: Նա միակը չէ, որ ափսոսում է: Բոլորս էլ ունենում ենք ափսոսանքի առիթներ: Հուզայի թագավոր Մանասեն՝ նույնպես: Բ. Մնացորդացի 33-ում պատկերված են նրա վայրագությունները. նա «Բահադիմի համար զոհասեղաններ կառուցեց» (Հմ.3), «Իր որդիներին անցկացրեց կրակի միջով, գուշակություն, հմայություն ու դյուլթություն էր անում, կախարհներից խորհուրդ էր հարցնում» (Հմ. 6), այդ պիղծ ճանապարհով նա առաջնորդեց ամբողջ ազգին (Հմ.9): «Տերը խոսեց Մանասեի և նրա ժողովրդի հետ, սակայն նրանք ականջ չդրեցին» (Հմ.10): Եվ Տերը ուրիշ կերպ գրավեց նրա ուշադրությունը. «նրանց դեմ բերեց Ասորեստանի թագավորի զորագլուխներին, որոնք Մանասեին բռնեցին կարթերով, նրան կապեցին պղնձե կրկնակի ոտնակապերով ու տարան Բաբելոն» (Հմ.11): Այդ ժամանակ վերջապես Մանասեն ճիշտ բան արեց. «փնտրեց իր Տեր Աստծուն և շատ խոնարհվեց իր հայրերի Աստծու առաջ» (Հմ.12): Աստված ընդունեց նրա աղոթքը և վերադարձրեց նրան իր թագավորությանը: Մանասեն «իր տնից վերացրեց օտար աստվածներն ու կուռքերը, վերաշինեց Տիրոջ զոհասեղանը և դրա վրա մատուցեց խաղաղություն ու շնորհակալություն զոհեր» (Հմ.15-16): Ափսոսանքը սպառում է մարդուն: Աստված լսում է ապաշխարության մեր խոնարհ աղոթքը:

**Աղոթք** - Դայր, շնորհակալ եմ, որ միշտ պատրաստ ես լսելու անկեղծ աղոթքներս: Ամեն:

**Մեր սխալների համար կափսոսանք: Թույլ քանի, որ Աստված փոխի մեզ և օգնագործի Իրեն ծառայելու համար:**

Իր հանցանքները ծածկողը հաջողություն չի ունենա, բայց խոստովանողն ու դրանք լքողը գթություն կգտնի: (Առ. 28.13)

## **ԴԱՆԴԱՂ ՔԱՅԼՈՎ ԴԵՊԻ ԴՈՒՐՍ**

**Ո**ւխնաթոնը որդեգրել է մի խորամանկ ռազմավարություն, որ մենք անվանում ենք դանդաղ քայլել: Վերցնում է կոշիկն ու սկսում դանդաղ, իբր աննկատ քայլել: Շուտով այդպես աննկատ էլ դուրս է գալիս: Եվ այդ պահերին մենք ասում ենք. «Մայրի՛կ, Ուխնաթոնն ուղղակի կոշիկները քայլեցրեց դեպի դուրս»:

Պարզ է, որ երբեմն մենք էլ ենք մտածում, թե կարող ենք մեր մեղքերով «դանդաղ քայլել» Աստծո առաջ և Նա չի նկատի: Մենք այդ փոքրիկ զանցանքներին կարևորություն չենք տալիս, բայց նաև գիտենք, որ դրանք Աստծուն դուր չեն գալիս:

Ինչպես Ադամն ու Եվան արեցին պարտեզում, մենք էլ մեր մեղքի ամոթի պատճառով կարող ենք թաքնվել (Ծն. 3.10) կամ ձևացնել, թե այդպիսի բան չի եղել: Բայց Աստվածաշունչը մեզ հրավիրում է բոլորովին տարբեր մի բանի. վազել Աստծո ողորմության ու ներողամտության հետևից: Առակների 28.13-ը մեզ ասում է. «Իր հանցանքները ծածկողը հաջողություն չի ունենա, բայց խոստովանողն ու դրանք լքողը գթություն կգտնի» (Առ. 28.13):

Մենք չպետք է փորձենք դանդաղ քայլել մեղքի մեջ և հուսալ, որ ոչ մեկը չի նկատի: Որովհետև երբ մենք ինքներս մեզ, Աստծուն կամ մեր վստահելի ընկերոջը խոստովանենք ճշմարտությունը մեր արարքների մասին, «նա հավատարիմ է ու արդար՝ մեր մեղքերը ներելու մեզ և մաքրելու մեզ ամեն անիրավությունից» (Ա.Հովհ. 1.9):

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ իմ մեղքը վերջնական չէ: Հիշեցրո՛ւ, որ երբ Քեզ և ուրիշներին ասեմ ճշմարտությունը, կարժանանամ Քո ողորմությանն ու ներումին: Ամեն:

**Մեր մեղքերի մեջ մենք էլ եմք փորձում դանդաղ քայլել, բայց երբ խոստովանենք մեր մեղքերը, կգտնենք ազատություն:**

(Հիսուսը) ինքն իրեն ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց  
ցմաքս լինելով ու կերպարանքով մարդու պես հայտնվելով: (Փիլ. 2. 7)

## **ԸՆԴՈՒՆԵԼ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ**

**Ս**առեցված ուտելիքների ընկերություններից մեկի գործադիր  
տնօրենը, որպես գանձապահ, մասնակցեց «Թաքնված գոր-  
ծատեր» հեռուստատեսային նախագծին: Ամբողջովին նոր դի-  
մահարզարանքով ու կեղծամով նա սկսեց աշխատել իր ղեկա-  
վարած ընկերության բազմաթիվ խանութներից մեկում: Նրա  
նպատակն էր ներսից իմանալ, թե իրականում ինչպես են ընթա-  
նում ընկերության աշխատանքները: Եվ իր դիտարկումներն  
օգնեցին լուծել շատ հարցեր: Հիսուսն էլ մեր հարցերը լուծելու  
համար ընդունեց «խոնարհ ծառայի կերպարանք» (Փիլ. 2. 7):  
Նա դարձավ մարդ, քայլեց երկրի վրա, մարդկանց ուսուցանեց  
Աստծո մասին և ի վերջո մեր մեղքերի համար մեռավ խաչի վրա  
(Հմ.8): Այս զոհաբերությունը բացահայտեց Քրիստոսի խոնար-  
հությունը, երբ հնազանդորեն տվեց իր կյանքը՝ որպես մեր  
կյանքի ընծա: Նա մեզ նման քայլեց երկրի վրա և զգաց այն, ինչ  
մենք ենք զգում որպես մարդ արարածներ: Որպես Հիսուսին հա-  
վատացողներ՝ կոչված ենք հատկապես այլ հավատացյալների  
հանդեպ մեր հարաբերություններում (Հմ.5) ունենալու «նույն  
վերաբերմունքը», ինչ մեր Փրկիչն ունեցրել էր: Աստված օգնում է, որ  
մենք ընդունենք խոնարհությունը (Հմ.3) և Քրիստոսի մտածե-  
լակերպը (Հմ.5): Նա մեզ հուշում է ապրել որպես ծառաներ,  
որոնք պատրաստ են բավարարելու ուրիշների կարիքները և օգ-  
նություն ձեռք մեկնելու ուրիշներին: Քանի որ Աստված մեզ  
առաջնորդում է խոնարհաբար սիրելու ուրիշներին, մենք շատ  
ավելի լավ վիճակում ենք՝ ծառայելու և կարեկցաբար գտնելու  
ներանց դիմագրաված խնդիրների լուծումները:

**Աղոթք** - Սուրբ Աստված, շնորհակալ եմ Քեզ Հիսուսի գոհաբեր-  
ման համար: Խնդրում եմ տո՛ւր ինձ Քրիստոսի նտածելակերպը,  
երբ խոնարհաբար ծառայում եմ եղբայրներիս ու քույրերիս: Ամեն:

**Եթե Տեր Հիսուսի ցմաքս խոնարհաբար ատրեմք, կկարողանանք  
սիրով լուծել ուրիշների դիմագրաված կարիքներն ու խնդիրները:**

Կրակից հետո մի մեղմ ու նուրբ ձայն լսվեց: (Գ. Թագ. 19.12)

## **ԼՈՒԻԹՅԱՆ ՍԵՆՅԱԿ**

**Ե**թե դու սիրում ես լուռություն ու հանգստություն, Մինեսոտա նահանգի Մինիապոլիս քաղաքում կարող ես գտնել այդպիսի վայր: Օրֆիլդի լաբորատորիան «աշխարհի ամենալուռ տեղն» է կոչվում: Այդ սենյակը կլանում է ձայների 99, 99 տոկոսը: Այստեղ հայտնվողները անպայման նստում են, որպեսզի չապակողմնորոշվեն, և 45 րոպեից ավելի չեն կարողանում մնալ այդ լուռության մեջ:

Մեզանից քչերն ունեն այդպիսի լուռության կարիք: Բայց այս աղմկոտ ու բազմազբաղ աշխարհում երբեմն ուզում ենք խաղաղ անկյուն գտնել: Նույնիսկ մեր դիտած հաղորդումները, լուրերի թողարկումներն ու սոցցանցերը հոգնեցնում են, որովհետև դրանք լի են բառերով ու պատկերներով, որոնք առաջացնում են բացասական հույզեր: Իսկ դրանք կարող են նաև խլացնել Աստծո ձայնը:

Երբ Եղիա մարգարեն գնաց Քորեբ լեռան վրա Աստծուն հանդիպելու, Նրան «երկրաշարժի, հողմի ու կրակի մեջ չգտավ» (Գ. Թագ. 19. 11-12): Միայն այն ժամանակ, երբ «մի մեղմ ու նուրբ ձայն լսվեց», երեսը ծածկեց և դուրս եկավ քարայրից՝ հանդիպելու «Ամենակարող Աստծուն» (Հմ. 12-14):

Հնարավոր է, որ հոգիդ լուռություն է տենչում, բայց ավելի շատ կարող է Աստծո ձայնը լսելու ցանկություն ունենալ: Գտի՛ր քո կյանքում լուռ մի տեղ, որպեսզի երբեք չկարոտես Աստծո «նուրբ ձայնին» (Հմ.12):

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, հանդարտեցրո՛ւ սիրտս ու միտքս, որպեսզի այսօր պատրաստ լինեմ հանդիպելու Քեզ: Ամեն:

**Ասված ուզում է հաղորդակցվել մեզ հետ, հե՛տևաբար անհրաժե՛տ է Նրա հետ կանոնավոր շփվել:**

Գինով մի՛ հարբեք, որ անառակության է տանում, այլ Հոգով լցվե՛ք:  
(Եփ. 5.18)

### **ՀՈԳՈՎ ԼՑՎԱԾ**

**Ա**մերիկացի գրող ու քրիստոնեությունից հեռացած Աբրահամ Մլեքնայթը պատմում է, թե ինչպես է միջնակարգ դպրոցում սովորելու տարիներին ինքն ունեցել «Հոգով լցվելու փորձառություն»: Ճամբարում գտնվելիս բանախոսն իրեն հորդորել է հանձնվել Հոգուն, որպեսզի իր կյանքում թագավորի Քրիստոսը: Դրանից հետո նա նստել է ծառի տակ ու աղոթել. «Հա՛յր, ների՛ր իմ մեղքերը: Սո՛ւրբ Հոգի, նե՛րս արի և լցրո՛ւ ինձ»: Եվ կատարվել է շատ հզոր մի բան, որ նա այսպես է նկարագրում. «Այդ պահից սկսված կյանքս փոխվեց: Ոչ թե կատարյալ դարձավ, այլ՝ ուրիշ»: Նրա մոտ ցանկություն է առաջացել կարդալ Աստվածաշունչը, աղոթել, հանդիպել Հիսուսին հավատացողներին և ծառայել Աստծուն: Հարություն առած Հիսուսը, նախքան երկինք համբառնալը, իր ընկերներին ասաց. «Չհեռանա՛ք Երուսաղեմից, այլ Հոր խոստմանը սպասեք» (Գործք 1. 4): «Դուք զորություն կստանաք և իմ վկաները կլինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում, մինչև աշխարհի ծայրերը» (Հմ.8): Աստված Սուրբ Հոգին տալիս է, որպեսզի այն բնակվի բոլոր նրանց մեջ, ովքեր հավատում են Հիսուսին: Դա առաջին անգամ տեղի ունեցավ Պենտեկոստի օրը (տե՛ս Գործք 2): Դա կկատարվի, երբ որևէ մեկը վստահի Քրիստոսին: Աստծո Հոգին կշարունակի լցնել Հիսուսին հավատացողներին: Մենք նույնպես Հոգու օգնությամբ կստանանք փոխված բնավորության և ցանկությունների պտուղը (Գաղ. 5. 22-23): Եկե՛ք փառաբանենք ու շնորհակալություն հայտնենք Աստծուն՝ մեզ մխիթարելու, մեզ հետ համագործակցելու և մեզ սիրելու համար:

**Աղոթք** - Սիրո՛ղ Աստված, շնորհակալ եմ քո Հոգու պարգևի համար: Օգնի՛ր ինձ այսօր ավելի սիրել քեզ և ուրիշներին: Ամեն:

**Սուրբ Հոգու՝ մեր մեջ բնակվելը արբերություն կառաջացնի:  
Ողջունելով այդ օրհնությունը՝ նա ավելի կաշխատի մեր մեջ և  
մեր միջոցով:**

Միշտ գոհությամբ եմ հայտնում իմ Աստծուն՝ աղոթքներիս մեջ քեզ հիշելով: (Փիլ. 1.4)

### **ՀԻՇԵԼ ԱՂՈԹՔԻ ՄԵՋ**

**Մ**ալքոլմ Քլաուտը եղիսաբեթ Երկրորդ թագուհու կողմից արժանացավ 2021 թ. «Դրամի ողորմություն» ամենամյա մրցանակին: Քլաուտն արդեն հարյուր տարեկան էր և մրցանակի էր արժանացել իր կյանքի ընթացքում հազար Աստվածաշունչ նվիրելու համար: Բացի նվիրելուց՝ նա գրանցել էր այդ բոլոր մարդկանց անունները և կանոնավոր կերպով աղոթել նրանց համար: Քլաուտի՝ աղոթելու հավատարմությունը օրինակ է սիրո այն տեսակի, որ տեսնում ենք Նոր Կտակարանի Պողոսի նամակներում: Պողոսը հաճախ իր նամակներն ստացողներին վստահեցնում է, որ ինքը կանոնավորապես աղոթում է իրենց համար: Օր. իր ընկեր Փիլիմոնին գրում է. «Միշտ գոհությամբ եմ հայտնում իմ Աստծուն՝ աղոթքներիս մեջ քեզ հիշելով» (Փիլ.1.4): Տիմոթեոսին ուղղված նամակում ասում է. «Իմ աղոթքներում գիշեր ու զօր անդադար հիշում եմ քեզ» (Բ.Տիմ.1.3): Հռոմեացիներին վստահեցնում է, որ «անդադար» և «ամեն ժամ» հիշում է իրենց (Հռոմ.1.9-10): Գուցե մենք Մալքոլմ Քլաուտի նման չունենանք հազար մարդ, որոնց համար կաղոթենք, բայց եթե մեր ծանոթների համար էլ աղոթենք, Աստված կարձագանքի մեր աղոթքներին: Երբ Նրա Հոգին գործարար է ինձ, որպեսզի աղոթեմ որևէ մեկի համար, պարզեցի, որ նույնիսկ աղոթքի պարզ օրացույցը կարող է շատ օգտակար գործիք լինել: Ուղղակի բաժանել մարդկանց անունները օրերի կամ շաբաթների և հավատարիմ մնալ այդ բաժանումին: Եվ ուրիշներին մեր աղոթքներում հիշելը կդառնա սիրո դրսևորման մի գեղեցիկ ձև:

**Աղոթք** - Հայր, օգնիր ինձ հավատարիմ լինել աղոթքի մեջ՝ իմանալով, որ Դու միշտ լսում ես ինձ: Ամեն:

**Եթե աղոթեմք ուրիշների համար, մեմք էլ կօրհնվեմք ուրիշների կողմից մեզ համար աղոթով:**





Չենք կամենում, որ տրտմեք, ինչպես ուրիշները, որ հույս չունեն: (Ա. Թես. 4.13)

### **ՅՈՒՅՄ՝ ՎՇՏԻ ՄԵՁ**

**Լ**ուիզը մի աշխույժ ու ժիր աղջնակ էր, որ ժպիտ էր պարզեւում իրեն հանդիպած բոլոր մարդկանց: Յավոք, հինգ տարեկանում երեխային պատուհասած հիվանդությունը նրա մահվան պատճառ դարձավ: Դա մեծ ցնցում էր հատկապես Լուիզի ծնողներին՝ Դեյլի ու Փիթերի և բոլոր նրանց ճանաչողներին համար:

Բայց Դեյն ու Փիթերը իրենց մեջ ուժ գտան դիմանալու այդ դաժան փորձությանը: Երբ ես հարցրի Դեյին, թե ինչպես է դա ստացվում, նա ասաց, որ իրենք ուժ են ստանում՝ կենտրոնանալով այն մտքի վրա, որ Լուիզը գտնվում է Հիսուսի սիրող զբրկում: «Մենք ուրախանում ենք մեր աղջկա համար, որի ժամանակը լրացել է, և նա զնացել է հավիտենական կյանք: Աստծո շնորհքով և զորությամբ մենք կարող ենք անցնել վշտի միջով և շարունակել անել այն, ինչ նա վստահել է մեզ», - ասաց Դեյը:

Այս կնոջ մխիթարությունը Աստծո հանդեպ նրա վստահության մեջ է, որ նա բացահայտել էր Հիսուսով: Աստվածաշնչյան հույսը շատ ավելին է, քան զուտ լավատեսությունը: Այն բացարձակ վստահություն է՝ հիմնված Աստծո խոստման վրա, որ նա երբեք չի խախտում: Եվ տխրության մեջ կարելի է կառչել այդ հզոր ճշմարտությանը, ինչպես Պողոսը խրախուսեց նրանց, ովքեր վշտացած էին ընկերների հեռանալու պատճառով. «Տիրոջ խոսքի հիման վրա սա ենք ասում ձեզ, թե մենք՝ ողջերս, որ կմնանք մինչև Տիրոջ գալուստը, ննջեցյալներից առաջ չենք անցնի» (Ա. Թես. 4.15):

Թող որ այս պարզորոշ հույսը մեզ ուժ և մխիթարություն տա նույնիսկ վշտի մեջ:

**Աղոթք** - Դայր, շնորհակալ եմ Քո տված հույսի և մխիթարության համար: Չորացրո՛ւ ինձ այսօր, որպեսզի կարողանամ խրախուսել նաև ուրիշներին: Ամեն:

**Ասծո խոսումներով կարող եմ իմնեսու ուժ ստանալ և մխիթարել հարազատ կորուս ունեցող մեկ ուրիշին:**

Նրանց աչքերից պիտի սրբի ամեն արտասուք: (Չայտն. 21.4)

## **ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՎԻՇՏ**

«Ես չափում եմ ինձ հանդիպած յուրաքանչյուր վիշտ և համեմատում այն իմ վշտի հետ», - գրել է 19-րդ դարի ամերիկացի բանաստեղծուհի էմիլի Դիքոնսոնը: Բանաստեղծությունը հուզիչ պատկեր է այն մասին, թե ինչպես են մարդիկ կրում իրենց վիճակված ցավը: Այն եզրափակվում է մի մխիթարությունամբ, որ հեղինակը գտնում է Փրկչի վերքերի՝ Գողգոթայի «խոցող մխիթարություն» մեջ. «Ես հիանում եմ՝ մտածելով, որ ոմանք նման են ինձ, ունեն իմ վշտերից»:

Չայտնություն գիրքը նկարագրում է Տեր Հիսուսին՝ որպես «մորթված մի գառ» (5. 6, տե՛ս Հմ.12), որի վերքերը դեռ երևում են: Նա «մեր մեղքերն իր մարմնով խաչափայտի վրա բարձրացրեց, որպեսզի մեղքերից հեռանալով՝ արդարության համար ապրենք, նրա վերքերով բժշկվենք» (Ա. Պետ. 2. 24):

Չայտնություն գիրքը նկարագրում է մի ապագա, երբ Փրկիչը իր յուրաքանչյուր զավակի «աչքերից պիտի սրբի ամեն արտասուք» (21. 4): Հիսուսը չի նվազեցնում նրանց ցավը, այլ իսկապես տեսնում ու հոգում է ամեն մարդու առանձին վիշտը, հրավիրում նրանց նոր ու բուժիչ իրողությունների իր թագավորությունում, որտեղ «այլևս մահ չի լինելու, չի լինելու նաև ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ» (Հմ.4), որտեղ բուժիչ ջուրը հոսում է «ձրի տալու կենաց ջրի աղբյուրից» (Հմ. 6, տե՛ս 22. 2):

Քանի որ մեր Փրկիչը կրել է մեր բոլոր վշտերը, մենք կարող ենք հանդիստ ու բուժում գտնել Նրա արքայության մեջ:

**Աղոթք** - Սիրելի՛ Չայր, շնորհակալ եմ, որ տեսար, հասկացար ու կրեցիր իմ վիշտը: Ամեն:

**Ցավեր ու վեժեր մի՞ստ էլ կուներանք, բայց Աստծո խոսքը վստահեցնում է, որ Ինքը դժվարության մեջ կմխիթարի մեզ:**



Սուտեցել է ամեն ինչի վերջը, ուրեմն խոհեմ մնացեք և արթուն եղեք աղոթքների համար: (Ա.Պետ. 4.7)

## **ՆԱՎԱԲԵԿՎԱԾԻ ՀԱՎԱՏՔ**

**1** 965 թ. հունիսին տոնգացի վեց պատանիներ նավարկության դուրս եկան: Սակայն հենց առաջին օրը փոթորիկը կոտրեց նրանց նավի կայմն ու ղեկը, և նրանք օրեր շարունակ քշվեցին ու հասան անմարդաբնակ մի կղզի: Տասնհինգ ամիս անցավ, մինչև նրանք հայտնաբերվեցին:

Այդ ընթացքում նրանք բազում դժվարությունների դիմակայեցին: Կղզում գոյատևելու համար աշխատում էին, հարմարություններ ստեղծում, սնվելու համար մի փոքրիկ այգի էին հիմնել և նույնիսկ մարզասրահ էին պատրաստել: Երբ տղաներից մեկի ոտքը կոտրվեց, կապեցին փայտերով ու տերևներով: Վեճերն ու անհամաձայնություններն անպայման ավարտվում էին հաշտության մեջ, և ամեն օրն սկսում ու ավարտում էին երգ ու աղոթքով: Երբ տղաները ողջ դուրս եկան այդ փորձությունից, բոլորն ապշել էին, որովհետև նույնիսկ նրանց թաղումն էին արել: Առաջին դարում Հիսուսին հավատալը կարող էր մարդուն մեկուսացնելու առիթ դառնալ: Հավատի համար հալածանքն ու հաճախ ընտանիքից զրկվելը նավաբեկությանը համարժեք բան էր: Այդպիսի դեպքերի համար Պետրոս առաքյալի խրատականքն էր՝ «արթուն եղեք աղոթքների համար» (Ա.Պետ. 4.7), «միմյանց նկատմամբ ջերմ սեր ունեցե՛ք» (հմ. 8) և իրենց բոլոր հնարավորություններով ու միջոցներով գործն ավարտին հասցնել (հմ.11-12): Ժամանակի ընթացքում Աստված դուրս կբերի նրանց այդ չարհարանքներից, «կվերականգնի, կամրացնի, կգորացնի, հաստատահիմն կդարձնի» (5.10): Փորձություն ժամանակ անհրաժեշտ է «նավաբեկվածի հավատք»: Մենք միասին ու համերաշխ կաղոթենք ու կգործենք, և Աստված կուղղի մեզ ու կփրկի:

**Աղոթք** -Հայր, տո՛ւր ինձ «նավաբեկվածի հավատք», որպեսզի կարողանամ դիմագրավել բոլոր դժվարությունները: Ամեն:

**Փորձությունների ժամանակ ավելի լավ է օգնություն խնդրե՞լը, թե՞ խնդիրներին միայնակ դիմակայելը:**

Շնորհքով եք փրկվել հավատի միջոցով... ոչ թե գործերով: (Եփ. 2. 8-9 )

## **ՀԱՎԵԼՅԱԼ ՇՆՈՐՀՔԻ ԿԱՐԻՔ**

Հատուկ միջոցառման համար եկեղեցին էինք զարդարում, և պատասխանատու կինը բարկացավ ինձ վրա, որ այնքան էլ լավ չեմ աշխատում: Երբ նա հեռացավ իմ մոտից, մեկ ուրիշ կին ասաց. «Մի՛ անհանգստացի՛ր, մենք դա անվանում ենք ՀՇԿ՝ հավելյալ շնորհքի կարիք»:

Ծիծաղեցի, ու շուտով ես էլ սկսեցի այդ արտահայտությունն օգտագործել, երբ որևէ մեկի հետ բախում էր լինում: Տարիներ անց այդ նույն եկեղեցու սրբարանում լսեցի մի հովվի, որը պատմում էր, որ ինքը Աստծուն ծառայել է վարազույրների հետևում և առատաձեռն տվել է ուրիշներին: Եվ խնդրեցի Աստծուն, որ ների ինձ, որ երբեմն ՀՇԿ արտահայտությամբ պիտակավորել եմ մարդկանց, բամբասել: Հասկացա, որ ես իրոք ունեի հավելյալ շնորհքի կարիք, որպեսզի հասնեի Հիսուսի կամեցած չափին:

Եփեսացիներին ուղղված նամակում Պողոս առաքյալը նշում է, որ բոլորս «էությամբ բարկության արժանի որդիներ էինք» (Հմ.3): Բայց Աստված մեզ տվեց փրկության պարգևը, որին արժանանալու համար մենք ոչինչ չարեցինք և որը մենք երբեք չենք կարող վաստակել, «որպեսզի ոչ ոք չպարծենա» (Հմ. 9):

Մեր կյանքի ընթացքում երբ ենթարկվում ենք Աստծուն, Սուրբ Հոգին աշխատում է փոխել մեր նկարագիրը, որպեսզի մենք արտացոլենք Քրիստոսին: Յուրաքանչյուր հավատացյալ ունի հավելյալ շնորհքի կարիք: Բայց մենք կարող ենք երախտապարտ լինել, որ Աստծո շնորհը բավական է (Բ. Կորնթ.12.9):

**Աղոթք** - Դա՛յր Աստված, խնդրում եմ օգնի՛ր ինձ, որ նույնքան ազատ ու առատաձեռն շնորհք բաշխեմ ուրիշներին, որքան Դու ես ինձ տվել: Ամեն:

**Յե՛տ է դասել ուրիշներին հավելյալ շնորհք չունենալու համար, մոռանալով, որ մենք էլ ունենք այդ հավելյալ շնորհքի կարիք:**

Տերն ասաց Մովսեսին. «Յիմա կտեսնես, թե ինչ եմ անելու փարավոնին»:  
(Ել. 6.1)

## ԵՐԿԱՐ ԽԱՂ

**Ե**րբ Թունի երկրում հեղաշրջում եղավ, գինվորականությունն սկսեց հալածել ու ահաբեկել Հիսուսին հավատացողներին և սպանել նրանց պատկանող գյուղատնտեսական կենդանիները: Կորցնելով իրենց ապրուստի միջոցը՝ Թունի ընտանիքը ցրվեց տարբեր երկրներում: Ինը տարի Թունը մնաց գաղթականների ճամբարում՝ ընտանիքից հեռու: Նա գիտեր, որ Աստված իր հետ է, բայց այդ տարիներին ընտանիքի երկու անդամը մահացան, և Թունը հուսահատվեց: Հին ժամանակներում Իսրայելի ժողովուրդն էր ենթարկվում դաժան ճշնումների: Եվ Աստված Մովսեսին նշանակեց որպես այդ ժողովրդին Եգիպտոսից դուրս բերող: Մովսեսը դժվարությամբ հանձն առավ այդ գործը: Բայց երբ մտեցավ փարավոնին, վերջինն ավելի սաստկացրեց ճշնումներն ու ավելի ծանրաբեռնեց ժողովրդին (Ելք 5. 6-9) և ասաց. «Տիրոջը չեմ ճանաչում և Իսրայելին էլ թույլ չեմ տալիս» (Հմ.2): Ժողովուրդը բողոքեց Մովսեսին, նա էլ այդ բողոքը հասցրեց Աստծուն (Հմ.20-23): Ի վերջո Աստված ազատեց ժողովրդին: Նրանք ստացան իրենց երազած փրկությունը, բայց Աստծո ձևով ու ժամանակով: Իսկ Նա երկա՛ր խաղ է խաղում՝ սովորեցնելով մեզ Իր նկարագրի մասին և պատրաստելով ավելի մեծ բաների: Թունը գաղթականների ճամբարում եղած տարիներն արդյունավետ օգտագործեց և ստացավ Նյու Դելիի աստվածաբանական դպրոցի մագիստրոսի վկայական: Այժմ նա հովվություն է անում իր նման գաղթականների համար՝ ասելով. «Գաղթականի իմ պատմությունն է ինձ առաջնորդում՝ որպես Աստծո ծառա: Իր վկայություն մեջ նա մեջբերում է Մովսեսի երգը. «Տերն իմ զորությունն ու իմ գովասանքն է և իմ փրկությունը եղավ» (Ելք 15.2): Այսօր նույնը կարող ենք մենք ասել:

**Աղոթք** - Երկնավոր հայր, միշտ կարող եմ ապավինել Քեզ:

Ներիր ինձ, երբ կորցնում եմ ճշմարտությունը: Ամեն:

**Կարող եմ՝ աս հարցեր ունենալ Աստծուն: Վստահ լինենք, որ Նա կատարում է Իր խոստումները:**

Հիսուսը հեռանում էր ամայի տեղեր և աղոթում: (Պուկ. 5.16)

## **ԼՈՒԻԹՅՈ՞ՒՆ ԵՍ ՓՆՏՐՈՒՄ**

**Հ**արավային Վիրջինիայի Կանաչ գետափ անունով փոքրիկ շքաղաքը Ապալաչյան լեռներում թաղված փոքրիկ համայնք է, որն իր նման տասնյակ փոքր բնակավայրերից տարբերվում է մեկ հիմնական բացառությամբ: Այդտեղի բնակիչները չունեն համացանցից օգտվելու հնարավորություն: Դա արվել է, որպեսզի վայ Փայի ու բլջային կապի աշտարակները չխանգարեն տեղի աստղադիտարանի աշխատանքին, և այդտեղ միշտ ապահովվի կատարյալ լուռություն:

Երբեմն առաջ գնալու լավագույն միջավայրը լուռությունն է, հատկապես Աստծո հետ հարաբերվելիս: Հիսուսն ինքը դրա օրինակն էր ցույց տալիս, երբ իր Հոր հետ խոսելու համար առանձնանում էր: «Նա հեռանում էր ամայի տեղեր և աղոթում» (Պուկ. 5.16): Դա Քրիստոսի կանոնավոր սովորություններից էր, որը կարող է լավագույն օրինակը դառնալ մեզ համար: Եթե տիեզերքի Արարիչն էր գիտակցում Հորից իր կախվածությունը, ապա մենք որքա՛ն ավելի շատ ունենք Նրա կարիքը:

Աստծո ներկայությունը թարմանալու համար լուռ տեղ քաշվելը մարդուն կտա առաջ գնալու, վերանորոգվելու ուժ: Այսօր որտե՞ղ կարող ենք գտնել այդպիսի վայր:

**Աղոթք** - Հայր, երբեմն այս աշխարհի աղմուկը խլացնում է ինձ և ուշադրությունս շեղում Քեզանից: Օգնիր ինձ, որ գտնեմ մի լուռ տեղ՝ վայելելու Քո սուրբ ներկայությունը՝ աշխարհի աղմուկից հեռու: Ամեն:

**Որո՞ւ շեղումներ կարող են ընդհատել մեր աղոթքը, բայց խաղաղ մի սեղ զՏնելով՝ կարելի է կենսրոնանալ աղոթքի վրա և մոտենալ Ասծուն:**

Մարմնի այն անդամները, որոնք ավելի տկար են թվում, ավելի կարևոր են: (Ա. Կորնթ. 12.22)

## **ՆԵՐՔԵՎԻ ՏԱԽՏԱԿԱՄԱԾԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ**

**Ը**նկերս աշխատում է «Աֆրիկա գթություն» անունով հիվանդանոցային նավի վրա, որն անվճար բժշկական ծառայություններ է մատուցում զարգացող երկրներին: Անձնակազմը օրական սպասարկում է հարյուրավոր մարդկանց, որոնք անբուժելի հիվանդություն ունեն:

Հեռուտատեսային բազմաթիվ խմբեր են գալիս այստեղ, տեսախցիկներն ուղղում նավի զարմանալի բուժանձնակազմի վրա, երբեմն նաև տախտակամածից ներքև իջնում՝ հարցազրույց վերցնելու նրանցից: Իսկ ահա Մայքի արած աշխատանքը միշտ աննկատ է մնում: Ճարտարագետ Մայքն աշխատում է նավի կոյուղու համակարգում: Եթե նա չխնամի խողովակներն ու ջրհանները, որոնցով կեղտաջրերը հեռացվում են, «Աֆրիկա գթություն» նավի կենսատու գործողությունները կգաղարեն:

Հեշտ է ծափահարել նրանց, ովքեր քրիստոնեական ծառայության «վերին տախտակամածում են» և միաժամանակ աչքաթող անել ստորին հարկերում աշխատողներին: Երբ կորնթացիները արտասովոր շնորհներ ունեցողներին գերադասում էին մյուսներից, Պողոսը նրանց հիշեցրեց, որ Քրիստոսի գործում յուրաքանչյուրն ունի իր դերը (Ա. Կորնթ. 12.7-20) և դրանցից յուրաքանչյուրը կարևոր է՝ լինի դա հրաշքով բուժում, թե ուղղակի օգնություն (Հմ. 27-31): Իրականում որքան պակաս նշանակալից է այդ դերը, այնքան ավելի մեծ պատվի է արժանի (Հմ. 22-24): Եթե դու քեզ «ներքևի տախտակամածի» աշխատող ես համարում, ուրեմն գլուխդ բարձր պահիր, որովհետև քո գործը հարգված է Աստծո կողմից և անփոխարինելի է:

**Աղոթք** - Տե՛ր, կարևոր են Քեզ համար: Շնորհակալ եմ, որ ինձ նկատեցիր: Ուրիշները նկատում են, կամ ոչ: Ամեն:

**Մեր յարգանքերը ուրիշների ունեցածի հետ համեմատելիս հիշենք, որ Աստված մեր գործը միտանի է համարում, եթե նույնիսկ այն թույլ ու անկարևոր թվա:**

Ո՛վ Իսրայել, լսի՛ր այն կանոններն ու հրամանները, որ ես այսօր ասում եմ ձեզ. սովորե՛ք դրանք և գործադրե՛ք զգուշությամբ: (Բ. Օր. 5.1)

## **ՄՆԱԼ ԱՍՏԾՈՒ ՅԵՏ ԾԻՇՏ ՈՒՂՈՒ ՄԵՁ**

**Տ**արիներ առաջ Հյուսիսսարևմտյան Իսպանիայում 218 մարդ տեղափոխող շոգեքարշը դուրս եկավ ուելսերից, ինչի հետևանքով 79 հոգի զոհվեց, 66-ը տեղափոխվեց հիվանդանոց: Տեսագրությունից պարզվեց, որ մինչ ճակատագրական ոլորապտույտին հասնելը զնացքը շատ արագ է ընթացել: Թեև արագության թուլատրելի սահմանաչափն էլ դրված էր, սակայն Իսպանիայի ազգային երկաթուղային ընկերության երեսուն տարվա վետերան վագոնավարը անհասկանալիորեն չէր պահպանել այդ արգելքը, որի հետևանքով մարդիկ զոհվեցին:

Բ. Օրինաց 5-ում Մովսեսը Իր ժողովրդի համար վերանայում է Աստծո տված սկզբնական ուխտի սահմանները: Նա խրախուսում է նոր սերնդին կատարել այդ հրահանգները, որովհետև «Տերն այդ ուխտը մեր հայրերի հետ չարեց, այլ մեզ հետ» (Հմ.3), իսկ հետո վերահաստատում տասը պատվիրանները (Հմ.7-21): Կրկնելով դրանք և դասեր քաղելով նախորդ սերնդի անհնազանդությունից՝ Մովսեսը Իսրայելի ժողովրդին հորդորում է լինել խոնարհ, ակնածալի և հիշել Աստծո հավատարմությունը: Աստված Իր ժողովրդի համար ստեղծել էր մի ճանապարհ, որպեսզի նրանք չկործանեն իրենց և ուրիշների կյանքը: Եթե մարդիկ անտեսեին այդ ուղին, դա կլիներ իրենց կորուստը:

Այսօր, երբ Աստված առաջնորդում է մեզ, եկե՛ք Սուրբ Գիրքը դարձնենք մեր խորհրդատուն, մեր ուրախությունն ու մեր կյանքի պահպանը:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր ինձ, որ հնազանդության միջոցով ցույց տամ իմ սերը Քո հանդեպ: Ամեն:

**Երբեմն Աստծո ծանադարհները խիստ կարող են թվալ մեզ համար, բայց դեմք է գիսակցել, որ դրանք ցույց են տալիս Իր սերը մեր հանդեպ:**



Հիսուսը մանուկներին իր մոտ կանչեց ու ասաց.«Թո՛ւյլ տվեք մանուկներին ինձ մոտ գալ»։ (Դուկ. 18. 16)

## ՄԱՆԿԱՆ ՀԱՎԱՏՔ

**Ա**ղջկաս տասներկու տարի դայակությունն արած կիրն մեզ հետ էր ապրում: 86 տարեկանում նա կաթված ստացավ ու տեղափոխեցինք հիվանդանոց: Որպեսզի բժիշկներն իմանային նրա ուղեղի վնասվածության աստիճանը, պետք է դեռ սպասեին: Հիվանդը քիչ էր խոսում, ասած բառերից էլ ոչ բուլորն էին հասկանալի: Բայց երբ ինձ տեսավ, հարցրեց.«Ինչպե՞ս է Կայլան»: Նրա առաջին բառերը դստերս մասին էին, որին նա շատ էր սիրում:

Հիսուսը նույնպես շատ էր սիրում մանուկներին և նրանց առաջին տեղն էր հատկացրել, թեև իր աշակերտները դժգոհ էին: Որոշ ծնողներ փնտրում էին Քրիստոսին, որ Նրան ներկայացնեն իրենց երեխաներին, «մանուկներին նրա մոտ էին բերում, որպեսզի նրանց դիպչի: Աշակերտները, այդ տեսնելով, աստուծո էին նրանց» (Դուկ. 18. 15): Բայց «Հիսուսը մանուկներին իր մոտ կանչեց ու ասաց. «Թո՛ւյլ տվեք մանուկներին ինձ մոտ գալ» (Հմ.16): Նա ցույց տվեց, թե ինչպես կարելի է ստանալ Աստծո թագավորությունը. պարզապես Նրանից կախված լինելով, վստահելով և անկեղծությամբ:

Փոքրիկները հազվադեպ են ունենում գաղտնի մտքեր: Ինչ տեսնում ես, այն էլ ստանում ես նրանցից: Քանի որ մեր Երկնավոր Հայրը օգնում է մեզ վերականգնելու մեր մանկական վստահությունը, թող մեր հավատքն ու Իրենից մեր կախվածությունը բաց լինեն մանկան հավատքի նման:

**Աղոթք** - Հայր, օգնիր լինել մանկան նման բաց ու անկեղծ, որպեսզի կարողանամ արժանի լինել Քո թագավորությանը: Ամեն:

**Ասծո հետ հարաբերվելիս լինենք մանկան նման:**



Վա՛յ Իսրայելի հովիվներին... տկարներին չուժեղացրիք և հիվանդին չբժշկեցիք: (Եզ. 34. 2,4)

### **ՈՒԺԵՂՆ ՈՒ ԹՈՒՅԼԸ**

**Ա**յսօր Համալսարանի Սթեղ ընտանեկան մանկական հիվանդանոցը ԱյոՎա նահանգի Քիննիգ մարզադաշտի կողքին է: Հիվանդանոցի վերին հարկում հատակից մինչև առաստաղ պատահաններ են, որտեղից ամբողջությամբ երևում է մարզադաշտը: Եվ խաղերի օրերին հիվանդ երեխաներն ու նրանց ընտանիքի անդամները հավաքվում են այդտեղ՝ դիտելու խաղը: Հանդիպման սկզբից շատ չանցած՝ մարզիկներն ու խաղին ներկա հազարավոր մարզասերները շրջվում են դեպի հիվանդանոցն ու ձեռքով անում հիվանդներին: Այդ մի քանի բույսերին մանուկների աչքերը փայլում են: Ազդեցիկ և ուժեղ տեսարան է, երբ խաղացողները, լեփ-լեցուն մարզադաշտն ու նաև հազարավոր հեռուստադիտողներ նրանց հանդեպ ուշադրություն ու հոգածություն են դրսևորում: Սուրբ գրությունները նույնպես տկարներին ու ճնշվածներին օգնելու զորություն ունեն: Հաճախ անտեսում ենք նրանց, ովքեր ուշադրության կարիք ունեն (Եզ. 34.6): Եզեկիել մարզարեն հանդիմանում է Իսրայելի առաջնորդներին, որոնք եսասիրաբար անտեսում են օգնության կարիք ունեցողներին: «Վա՛յ Իսրայելի հովիվներին... տկարներին չուժեղացրիք և հիվանդին չբժշկեցիք» (Հմ. 2, 4): Հաճախ մեր նախապատվությունները, ղեկավարության որդեգրած փրկիսոփայությունը կամ տնտեսական քաղաքականությունը պակաս հարգանք է ցուցաբերում նեղության մեջ գտնվողներին: Իսկ Ասված մեկ այլ ճանապարհ է ցույց տալիս. «Ես ինքս... պիտի որոնեմ իմ ոչխարներին և նրանց ազատեմ այն բոլոր տեղերից, ուր նրանք ցրված են» (Հմ. 11-12):

**Աղոթք** - Դա՛յր, սովորեցրո՛ւ ինձ քեզ նման սիրել: Ամեն:

**Դաճախ եմք Տեսնում, որ իշխանություն ունեցողներն անՏեսում են սկարներին, բայց Ասված մեզանից՝ Իր զավակներից ակնկալում է, որ ուժադիր և հոգասար լինենք թույլերի հանդեպ:**

Միմյանց խոստովանե՛ք ձեր մեղքերը և միմյանց համար աղոթե՛ք, որ բժշկվե՛ք: (Յակ. 5.16)

## **ԱՆԿԵՂԾ ԵՎ ԽՈՑԵԼԻ**

Հավատակից ընկերներիցս մեկը հաղորդագրություն ուղարկեց, որով առաջարկում էր խնամատարության խմբի այս ամսվա հանդիպման ժամանակ անել այն, ինչ ասվում է Հակոբոսի 5. 16-ում, այսինքն՝ ապահովելով գաղտնապահության մթնոլորտ՝ «միմյանց խոստովանենք մեր մեղքերը և միմյանց համար աղոթենք, որ բժշկվենք»: Մի պահ չգիտեի՝ ինչ պատասխանել: Թեև մենք բոլորս իրար ճանաչում ենք, բայց լիակատար անկեղծ չենք, որ մեր բոլոր ցավերի ու անհանգստությունների մասին պատմենք միմյանց: Ի վերջո խոցելի լինելը այնքան էլ հաճելի բան չէ: Բայց ճշմարտությունն այն է, որ մենք բոլորս էլ մեղավոր ենք, բոլորս էլ մարտահրավերներ ունենք, և բոլորս էլ ունենք Հիսուսի կարիքը: Աստծո հիանալի շնորհքի և Քրիստոսից մեր կախվածության մասին անկեղծ խոսակցությունները խրախուսում են մեզ, որ շարունակենք վստահել իրեն: Հիսուսի հետ մենք կարող ենք այլևս չձևացնել, թե իբր անփորձանք կյանք ունենք: Այս մտքերից հետո ես համաձայնություն տվեցի ընկերոջս առաջարկին: Սկզբում ես էլ էի մի փոքր անվստահ, բայց երբ մեկը բացեց իր սիրտն ու անկեղծացավ, նրան հաջորդեց մյուսը: Անշուշտ, լռողներ էլ եղան: Մենք որևէ մեկին չպարտադրեցինք ու պահն ավարտեցինք Հակոբոսի 5. 16-ի երկրորդ մասով՝ միմյանց համար աղոթելով:

Քրիստոսի հանդեպ մեր հավատի պատճառով կարող ենք դառնալ խոցելի, իսկ Աստծուց և ուրիշներից՝ կախյալ, որպեսզի օգնի մեզ մեր տկարությունների ու մարտահրավերների մեջ:

**Աղոթք** -Յայր, շնորհակալ եմ, որ ինձ տեղավորել ես Քո ընտանիքում, որպեսզի կարողանամ աջակցություն գտնել և ավելի նմանվել Քրիստոսին: Ամեն:

**Մենք կարող ենք փառալերել իրար՝ միմյանց դասմելու եկեղեցու մեր սեղմ Երջանակի փորձառությունների մասին:**

Քո քղանցքը տարածիր քո աղախնի վրա, որովհետև դու իմ մոտ ազգական ես: (Յո. 3.9):

### ԱՊԱՍՏԱՆ ՏՎՈՂ ՄԱՐԴԻԿ

Հուզված գաղթական երեխաների պատմություններից՝ Ֆիլին Նու Սենդին որոշեցին տուն տանել նրանցից երկուսին: Օդանավակայանից վերցնելով երեխաներին՝ նրանք լուռ վարում էին մեքենան: Իրենք արդյո՞ք պատրաստ էին այս քայլին՝ ապաստան տալ տարբեր կրոն ու մշակույթ ունեցող երեխաներին:

Բոսոն ազդվել էր Հուլիոսի պատմությունից: Լսել էր, որ նա Նոյեմբերին աղակցելու համար թողել էր իր ժողովրդին: Եվ երբ նա եկավ իր արտը՝ բերք հավաքելու, Բոսոն այս օրհնությունը տվեց Հուլիոսին.«Թող Տերը հատուցի քո գործերի փոխարեն, և թող առատորեն քեզ տրվի քո վարձն Իսրայելի Աստծու կողմից, որովհետև դու եկար, որ ապաստան գտնես նրա թևերի տակ» (Հո. 2.12): Հուլիոսը Բոսոնին հիշեցրեց նրա տված օրհնություն մասին, երբ մի գիշեր ինքը ընդհատել էր նրա քունը: Կնոջ ոտնաձայնից արթնանալով՝ Բոսոն հարցրել էր. «Ո՞վ ես դու»: Կինը պատասխանել էր.«Ես քո աղախին Հուլիոսն եմ. քո քղանցքը տարածիր քո աղախնի վրա, որովհետև դու իմ մոտ ազգականն ես» (Հո. 3.9):

Եբրայերեն քղանցք բառը նաև թև է նշանակում: Բոսոն ապաստան տվեց Հուլիոսին՝ ամուսնանալով նրա հետ և նրանց թոռնորդին՝ Դավիթը, արձագանքելով նրանց պատմությանը, փառաբանեց Իսրայելի Աստծուն. «Ի՛նչ պատվական է քո ողորմությունը, ո՞վ Աստված, և մարդկանց որդիներն ապավինում են քո թևերի հովանուն» (Սաղմ. 36. 7):

**Աղոթք** -Յայր, ես ապաստան եմ գտնում Քեզ մոտ: Օգտագործիր ինձ՝ քո ապաստանը ուրիշների վրա տարածելու համար: Ամեն:

**Աղասան գտնելը լավ զգացումներ է առաջացնում: Իսկ ինչո՞ք՞ս կարող ես դո՛ւ ուրիշներին աղասան սրամաղրել:**



Մարիամը լավ բաժինն է ընտրել: (Ղուկ. 10. 42)

## **ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏԱԼ ԱՍՏԾՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆԸ**

**2009** թ. Սթենֆորդի համալսարանի հետազոտողների մի խումբ ուսումնասիրեց ավելի քան 200 ուսանողների պարտականությունների կատարման արդյունավետությունը: Պարզվեց, որ այն ուսանողները, որոնք միաժամանակ մի քանի գործով են զբաղված, ավելի վատ արդյունքներ են ցույց տվել, քան նրանք, ովքեր նախընտրում են մեկ աշխատանքը: Տարբեր գործերով զբաղվելը դժվարացնում է մարդու մտքերի կենտրոնացումը, ավելորդ ինֆորմացիա է հավաքում, որը նույնպես շեղում է միտքը: Իսկ դա լուրջ մարտահրավեր է:

Երբ Հիսուսն այցելեց Մարիամին ու Մարթային, վերջինը «զբաղված էր սպասավորելով» (Ղուկ. 10.40): Նրա քույր Մարիամը «նստեց Հիսուսի ոտքերի մոտ ու նրա խոսքերն էր լսում» (Հմ. 39): Երբ Մարթան խնդրեց Հիսուսին, որ քաջալերի Մարիամին՝ օգնելու իրեն, Նա պատասխանեց.«Մարթա՛, Մարթա՛, դու հոգս ես անում և շատ բաներով ես զբաղված: Բայց մի բան է հարկավոր. և Մարիամը լավ բաժինն է ընտրել, որ նրանից չպիտի վերցվի» (Հմ. 41-42):

Աստված ցանկանում է զբաղել մեր ուշադրությունը: Բայց Մարթայի նման մենք էլ հաճախ շեղվում ենք տարբեր գործերով ու խնդիրներով: Անտեսում ենք Աստծո ներկայությունը՝ չնայած այն բանին, որ միայն Ինքն է ապահովում մեզ համար անհրաժեշտ իմասնությունն ու հույսը: Նա է մեզ տալիս մարտահրավերները հաղթահարելու առաջնորդություն և ուժ:

**Աղոթք** -Սիրելի՛ Հայր, երբեմն փորձում եմ միաժամանակ մի քանի գործ անել: Օգնի՛ր հեռացնել այդ շեղումները և ավելի մոտենալ Քեզ: Ամեն:

**Մի Եւրֆ բաներ մեզ հեռացնում են Աստուց: Կարևոր է մեր ուշադրությունն ու կենտրոնացումը վերադարձնել Աստծո վրա:**

Ձեզ ազատելու են եգիպտացիների լծի տակից: (ԵԼՔ 6.6)

## **ԱՏՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԱԾ**

**Պ**ակիստանում աղյուսի գործարանում աշխատող Զամիլան ու իր ընտանիքը գործատիրոջը մեծ պարտքեր ունեին և աշխատավարձի մեծ մասը դրան էին տրամադրում: Բայց երբ բարեգործական մի կազմակերպությունից նվեր ստացան, նրանց վիճակը էապես բարելավվեց: Շնորհակալություն հայտնելով կազմակերպության ներկայացուցչին՝ Հիսուսին հավատացող Զամիլան բացականչեց.«Դու նման ես Մովսեսին, որն Իսրայելի ժողովրդին ազատեց ստրկությունից»:

Իսրայելի ժողովուրդը հարյուրավոր տարիներ եգիպտացիներին լծի ներքո էր: Նրանք «հառաչում և աղաղակում էին» և օգնություն խնդրում Աստծուց (ԵԼՔ 2. 23): Նրանց վիճակն ավելի ծանրացավ, քանի որ նոր փարավոնը հրամայեց ոչ միայն աղյուս պատրաստել, այլև հավաքել դրա համար անհրաժեշտ հարդը (5.6-8): Երբ իսրայելցիները շարունակեցին բողոքել, Աստված կրկնեց իր խոստումը. «ես պիտի լինեմ ձեր Աստվածը»(Հմ. 6.7): Նրանք այլևս ստրուկ չպիտի լինեին, որովհետև ինքը խոստացել էր նրանց փրկել «իր տարածած բազկով» (Հմ. 6):

Աստծո ցույց տված ուղղություններով Մովսեսը իսրայելի ժողովրդին դուրս բերեց Եգիպտոսից (ԵԼ. 6.14): Այսօր էլ Աստված շարունակում է մեզ փրկել իր Որդու՝ Հիսուսի խաչի վրա պարզած բազուկներով: Մենք այլևս ստրուկ չենք, այլ ազատ ենք:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ են իմ մեղքերից ազատելու նպատակով քո Որդուն ուղարկելուդ համար: Ամեն:

**Ասված իր Որդու միջոցով մեզ ազատում է մեր բոլոր մեղքերից: Մեզ մնում է այդ մասին դասմել ուրիշներիս, որոնք դեռ մեղքի ստրկության մեջ են:**

Լույսի որդիների պես ընթացեք: (Եփ. 5.8)

## **ՅԱԶԱՐԱՎՈՐ ԼՈՒՍԱՎՈՐ ԿԵՏԵՐ**

**Ա**լաբամայի հյուսիս-արևմուտքում գտնվող Դիսմալս կիրճը ամեն տարի մեծ թվով զբոսաշրջիկների է ընդունում: Շատերն ընտրում են մայիս-հունիս ամիսները, որովհետև հենց այդ շրջանում են լուսատուիկների թրթուրները դուրս գալիս ու մեծանում, որոնց հազարավոր կապույտ լուսարձակումները սքանչելի պատկեր են ստեղծում: Պողոս առաքյալը Քրիստոսին հավատացողներին հենց այդպիսի լուսատուներ է անվանում, երբ գրում է.«մի ժամանակ խավար էիք, իսկ հիմա լույս եք Տիրոջով» (Եփ. 5.8): Երբեմն մենք զարմանում ենք, թե ինչպես կարող է «մի փոքրիկ լույսը» փոփոխություն ու տարբերություն առաջացնել: Պողոսը դա անվանում է մենակատարություն, իսկ մեզ «լույսի որդիներ» (Հմ.8) և բացատրում, որ մենք «մասնակից լինենք սրբերին բաժին հասած ժառանգությանը լույսի մեջ» (Կող. 1.12): Աշխարհում լույս լինելը հավաքական ջանք է, Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու գործն է: Պողոսն այդ բանն ամրապնդում է պաշտամունք բարձրացնող մեր «փայլուն որդիներին» պատկերով, որպեսզի «միմյանց հետ սաղմոսներով, օրհնություններով ու հոգևոր երգերով խոսենք, մեր սրտերում Տիրոջը երգենք ու սաղմոս ասենք» (Եփ. 5.19): Երբ մենք, մտածելով, թե մեր կյանքի վկայությունը ընդամենը փոքրիկ կետ է կեսգիշերային սև պաստառի վրա, հուսահատվում ենք, կարող ենք Աստվածաշնչից հավաստիացում ստանալ, որ մենք մենակ չենք: Մենք միասին ենք, երբ մեզ Աստված է առաջնորդում: Եվ մենք փոփոխություն ենք առաջացնում ու լույս ենք ճառագում: Շողացող որդիների խումբը կարող է շատ հետաքրքիր լինել:

**Աղոթք-** Սիրելի՛ Հայր, խնդրում եմ՝ օգնիր ինձ, որ կարողանամ Քո լույսը շողացնել՝ Դիսուսին հավատացողների հետ: Ամեն:

**Մեր մենակությունը թող խրախուսի և օգնի մեզ, որդեսզի ամեն ջանք գործադրելով լինենք բոլոր մյուս հավասացյալների հետ Ասծո լույսը շողացնող զավակներ:**

Այլևս ո՛չ հրեա կա, ո՛չ էլ հույն, ո՛չ ծառա կա, ո՛չ էլ ազատ: (Գաղ. 3. 28)

### **ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԻՍՈՒՄՈՎ**

**Ա**ռևտրի վերլուծաբան ֆրենսիս էվանսն ուսումնասիրեց 125 ապահովագրական գործակալների՝ պարզելու նրանց հաջողության գաղտնիքը: Ջարմանալիորեն հիմնական գործոնը նրանց մասնագիտական հմտությունը չէր: Էվանսը պարզեց, որ փոխարենը հաճախորդներին գրավել են նույն մտածելակերպը, կրթությունը և նույնիսկ հասակը: Գիտնականներն այս երևույթն անվանում են համացեղություն, որը նշանակում է իր նմաններին նախապատվություն տալու միտում:

Համացեղությունը գործում է կյանքի այլ ոլորտներում ևս, երբ մարդիկ ընկերանում, ամուսնանում են իրենց նմանների հետ: Սակայն այդ երևույթը կարող է կործանարար լինել, եթե չվերահսկվի: Միայն «մեր տեսակի» մարդկանց նախընտրելու դեպքում հասարակությունը կարող է բաժանվել ազգային, քաղաքական ու տնտեսական ուղղություններով: Առաջին դարում հրեաներն ապրում էին հրեաների, հույները՝ հույների հետ, հարուստներն ու աղքատներն էլ հստակ բաժանված էին: Սակայն Պողոսը Հռոմ. 16. 1-16-ում Հռոմի եկեղեցին նկարագրում է որպես հրեա Պրիսկիդային և Ակյուղասին, հույն Եպենետոսին, ըստ երևույթին հարուստ ու «չատերի մասին հոգացող» Փիբեին, ստրուկներին իբրև հասարակ անուն տրված Փիզողոգոսին միավորող: Եվ այդ տարբեր մարդկանց միավորում էր Հիսուսը, որի մեջ «ո՛չ հրեա կա, ո՛չ էլ հույն, ո՛չ ծառա կա, ո՛չ էլ ազատ» (աղ. 3. 28): Իրենց տեսակի հետ հաղորդակցվելու մարդկանց ցանկությունը բնական է, բայց Հիսուսը մեզ ավելի հեռուն է ուղղորդում: Նա մեզ դարձնում է մի ժողովուրդ, որ տարբեր ենք շատ բաներով, բայց միավորված ենք իրենով:

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, փառաբանում եմ Քեզ, որ աշխատում ես միավորել մեր կոտրված աշխարհը: Ամեն:

**Շահ բան կարելի է անել կամրջելու համար ազգային ու սնտեսական բաժանումները:**



Մարդը որքա՛ն առավել է ոչխարից: (Մատթ. 12.12)

## **ԲԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ԱՍՏԾՈՆ ԶԱՄԱՐ**

**Վ**եցերորդ դասարանցիներից մեկը, նկատելով, որ դասընկերներին մեկը փոքր ածելիով կտրում էր ձեռքը, վերցրեց ու մի կողմ նետեց այն: *Ջարմանալիորեն փոխանակ գովասանքի արժանանար, նրան պատժեցին, որովհետև մոտը ածելի էին տեսել, որն արգելված էր դպրոցում: Իսկ այն հարցին, թե արդյոք կկրկնի՞ր՝ այդպիսի արարքը, նա պատասխանեց. «Եթե նույնիսկ դժվարություն հանդիպեմ, դարձյալ նույնը կանեմ»:* Ինչպես այս աղջկա՝ բարիք անելու փորձը պատժի արժանացավ, այնպես էլ Հիսուսի միջամտությունները նրան անախորժություններ պատճառեցին՝ հարուցելով կրոնական առաջնորդների գայրույթը: Չորացած ձեռքերով մարդկանց բուժելը փարիսեցիները որպես իրենց օրենքների խախտում մեկնաբանեցին: Հիսուսը նրանց ասաց, որ եթե Աստված թույլատրում է նույնիսկ շաբաթ օրը օգնություն ցուցաբերել փոսն ընկած ոչխարին, «մարդը որքա՛ն առավել է ոչխարից» (Մատթ. 12.12): Քանի որ Հիսուսը շաբաթ օրվա Տերն է, նա կարող է կարգավորել այն, ինչ թույլատրվում է և չի թույլատրվում (Հմ. 6-8): Եվ իմանալով հանդերձ, որ կարող է բարկացնել կրոնական առաջնորդներին, նա բուժեց մարդուն (Հմ. 13-14):

Երբեմն հավատացյալները կարող են «փորձանքի մեջ ընկնել»՝ անելով այն, ինչը պատվում է Տիրոջը: Նրանք կարող են օգնել կարիքավորներին և դրանով զայրացնել ոմանց: Իսկ Աստծո առաջնորդությունը շարժվելով՝ մենք ընդօրինակում ենք Տեր Հիսուսին և հայտարարում, որ մարդիկ ավելի կարևոր են, քան կանոններն ու ծեսերը:

**Աղոթք** -Սիրելի՛ Հիսուս, խնդրում եմ ինձ հետ պահիր կանոններից, որոնք խանգարում են սիրել ուրիշներին: Ամեն:

**Շահ կարևոր է բարություն դրսևորել ուրիշների հանդեմ՝ դասրաս լինելով նույնիսկ դրա համար փորձանքի մեջ ընկնել:**

Ես կկրեմ ձեզ: (Ես. 46. 4)

### **ՄԵՐ ԲՈԼՈՐ ՕՐԵՐԻ ԱՍՏՎԱԾԸ**

**Ա**նհաջող վերահատուծյունից հետո Ջոանի բժիշկն ասաց, որ հինգ շաբաթ անց ևս մեկ վերահատուծյուն է անհրաժեշտ: Որքան ժամանակը մոտենում էր, այնքան Ջոանի ու ամուսնու անհանգստությունն ավելանում էր: Նրանք տարեց էին և ապրում էին հեռու: Հետևաբար պետք է մեքենայով գնային անձանոթ քաղաք, հետևեին հիվանդանոցային բարդ համակարգին ու աշխատեին նոր մասնագետի հետ:

Թեև այս հանգամանքները ճնշող էին, սակայն Աստված հոգաց նրանց մասին ու միշտ նրանց հետ եղավ: Ճանապարհին ավտոմեքենան խափանվեց, բայց ճանապարհային քարտեզի շնորհիվ ժամանակին տեղ հասան: Հիվանդանոցում քրիստոնյա հովիվն աղոթեց նրանց համար և առաջարկեց իր օգնությունը: Աստծո աջակցությամբ Ջոանի վերահատուծյունը հաջող ելք ունեցավ: Միշտ չէ, որ մենք բժշկության կամ փրկության փորձառություն ենք ունենում, բայց Աստված միշտ հավատարիմ է ու միշտ խոցելի մարդկանց կողքին՝ լինեն նրանք երիտասարդ, թե տարեց: Դարեր առաջ, երբ Իսրայելի ժողովուրդը թուլացել էր Բաբելոնի լծից, Եսային նրանց հիշեցրեց, որ Աստված նրանց պաշտպանել է ի ծնե և շարունակելու է հոգալ իրենց մասին: Մարգարեի միջոցով Աստված ասաց.«Մինչև ձեր ծերությունն էլ ես եմ նա, մինչև այլևորություն կկրեմ ձեզ» (Ես. 46. 4):

Աստված մեզ չի լքի, երբ ամենաշատ ունենք Իր կարիքը: Նա կարող է ապահովել մեր կարիքները և հիշեցնել, որ մեզ հետ է մեր կյանքի բոլոր պահերին: Նա մեր բոլոր օրերի Աստվածն է:

**Աղոթք** -Սիրելի՛ Հայր, Դու վստահելի ես և բարի: Օգնի՛ր ինձ, որ անորոշության պահերին հեմվեմ Քեզ վրա: Ամեն:

**Մեր թուլությունների ժամանակ Աստված Իր աջակցությունն է սվել և հիմա ուզում է աշխատել մեր միջոցով, որդեսզի կարողանանք աջակցել ուրիշներին:**

Աստված մեր նկատմամբ իր սերը հայտնեց, երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ: (Յոհ. 5.8)

## Ո՞Վ ԵՄ ԵՄ

**Ռ**որքան թող Լինքոլնը՝ Միացյալ Նահանգների նախագահ Աբրահամ Լինքոլնի ավագ որդին, նույնիսկ հոր մահից տարիներ անց ապրում էր հոր ճնշող ստվերում: Նրա մտերիմ ընկեր Նիքոլըս Մըրրեյ Բաթլերը գրել է, որ Ռորբերտը հաճախ էր ասում.«Ոչ ոք չի ուզում ընդունել ինձ՝ որպես ռազմական գործիչ, Անգլիայի նախարար, գործարար, Փուլման ընկերության նախագահ: Բոլորի համար ես Աբրահամ Լինքոլնի որդին եմ»:

Այսպիսի զգացողությունները միայն հայտնի անձանց զավակներին հատուկ չեն: Ըստ արժանվույն գնահատված չլինելու զգացումը բոլորին կարող է ծանոթ լինել: Մեր իրական արժեքը ողջ խորությունը երևում է այն բանում, թե որքան է Աստված սիրում մեզ:

Պողոս առաքյալը մեզ ճանաչեց նրանով, թե ով ենք մեր մեղքերի մեջ և ով պիտի դառնանք Քրիստոսով, երբ գրեց.«Երբ մենք դեռ տկար էինք, Քրիստոսը որոշված ժամանակին մեռավ ամբարիշտների համար» (Հռոմ. 5.6): Աստված սիրում է մեզ մեր ով լինելու համար, նույնիսկ մեր ամենավատ ժամանակում: «Աստված մեր նկատմամբ իր սերը հայտնեց, երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ» (Հմ. 8): Աստված մեզ այնքան է սիրում, որ մեր մեղքերի համար Իր Որդուն ուղարկեց խաչվելու:

Ո՞վ ենք մենք: Մենք Աստծո սիրելի զավակներն ենք: Ո՞վ կարող է դրանից ավելին խնդրել:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ սիրում ես ինձ իմ ով և ինչ լինելու և այն բանի համար, որ Քո ներումն ու սերն իմն եմ: Ամեն:

**Հաճելի չէ ուրիշի սովերի ներքո մնալու զգացումը, բայց հիշենք, որ մենք Աստծո զավակներն ենք և ունենք մեր հասուկ սեղը:**

Որովհետև արդար է Տիրոջ խոսքը, և նրա բոլոր գործերը հավատարմությամբ են: (Մաղմ. 33. 4)

## ԱՍՏՎԱԾ ՄԻՇՏ ՀԱՎԱՏԱՐԻՄ Է

**Ե**րբ խավիերը նախակրթարանի սան էր, ես նրան մեքենայով տանում ու բերում էի: Մի օր այնպես պատահեց, որ ուշացա, և մեքենայից իջնելով՝ արագ վագեցի դեպի որդուս դասարան: Նա, պայուսակը գրկին, նստած էր ուսուցչուհու կողքին: «Ցավում եմ, որ ուշացա, լա՞վ ես», - հարցրի: «Այո՛, լավ եմ, բայց զայրացել եմ, որ ուշացար», - պատասխանեց որդիս: Այդպիսի դեպքեր շատ էին պատահել, և ես վախենում էի, որ տղաս հանկարծ կարող էր հուսախաբվել Աստծուց: Ուստի սկսեցի ջանասիրաբար սովորեցնել նրան, որ Աստված երբեք չի դբժում ու խախտում Իր խոստումները:

Մաղմոս 33-ը քաջալերում է մեզ գովեստներով ու փառաբանություններով տոնելու Աստծո հավատարմությունը (Հմ. 1-3), «որովհետև արդար է Տիրոջ խոսքը, և նրա բոլոր գործերը հավատարմությամբ են» (Հմ. 4): Աստծո ստեղծած աշխարհն օգտագործելով որպես Նրա զորության և Նրանից կախման մեջ լինելու շոշափելի ապացույց (Հմ. 5-7)՝ սաղմոսերգուն «աշխարհի բոլոր բնակիչներին» կոչ է անում երկրպագել Աստծուն (Հմ. 8): Երբ ձախողվում են մեր ծրագրերը, կամ հիասթափվում ենք մարդկանցից, կարող ենք նաև հուսախաբ լինել Աստծուց: Սակայն պետք է ապավինել Աստծո վստահելի լինելուն, քանի որ «Տիրոջ խորհուրդը հաստատ է հավիտյան» (Հմ. 11): Կարող ենք Աստծուն փառաբանել նույնիսկ այն դեպքում, երբ ամեն ինչ սխալ է ընթանում: Քանի որ մեր սիրառատ Արարիչը պահում է ամեն բան և բոլորին: Աստված հավիտյան հավատարիմ է:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, երբ այսօր հավատքով քայլում եմ, խնդրում եմ հիշեցրու՛ ինձ Քո անցյալի հավատարմության մասին: Ամեն:

**Երբ մեր ծրագրերը ձախողվեն կամ մարդիկ հուսախաբ անեն մեզ՝ դժվար կլինի Աստուն փառաբանելը: Բայց Ասված Իր ստեղծած աշխարհով աղացուցում է, որ Ինձը միշտ վստահելի է:**

Ամենքի հետ ամեն ինչ եղա, որ ինչ էլ լինի, ոմանց փրկեմ: (Ա. Կորնթ. 9.22)

## **ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄ**

**1** 800-ականների վերջին, երբ Մերի Սլեսորը նավարկութուն սկսեց դեպի աֆրիկյան Գալաբար կոչված երկիրը (այժմ՝ Նիգերիա), ոգևորված էր, որ շարունակելու է հանգուցյալ Դեյվիդ Լիվինգստոնի միսիոներական գործը: Սկզբում նա մնում էր միսիոներների հետ, սակայն հետո որոշեց իր պարտականութունը կատարել փոքր-ինչ այլ կերպ. նա տեղափոխվեց այն մարդկանց մոտ, ում ծառայում էր: Դա հազվադեպ երևույթ էր: Մերին սովորեց այդ մարդկանց լեզուն, ապրեց ու սնվեց նրանց նման: Նույնիսկ ստանձնեց տասնյակ լքված երեխաների հոգածությունը: Եվ մոտ քառասուն տարի հույս ներշնչեց ու ավետարան քարոզեց դրանց կարիքն ունեցողներին: Պողոս առաքյալը գիտեր մեր շրջապատի մարդկանց կարիքներն իսկապես բավարարելու կարևորությունը: Ա. Կորնթ. 12. 4-5-ում նա նշում է. «Պարզեները զանազան են, բայց պարզեողը նույն Հոգին է, ծառայություններն էլ զանազան են, բայց դրանք սովորը նույն Տերն է»: Այսպիսով նա ծառայեց մարդկանց՝ ըստ նրանց կարիքի. «տկարների հետ տկարի պես եղա,....ամենքի հետ ամեն ինչ եղա» (9. 22): Վերջերս մի եկեղեցի հայտարարեց, որ սկսում է «բոլոր կարողություններով» ծառայություն մատուցել, ինչը ենթադրում էր հաստատությունները հարմարեցնել այնպես, որ պաշտամունքը մատչելի լինի նաև հաշմանդամություն ունեցողներին: Դա նաև Պողոսի մտածելակերպն էր, որը գրավում էր սրտերը և թույլ տալիս, որ Ավետարանը ծաղկի համայնքում: Երբ մեր հավատով ապրում ենք մեր շուրջը գտնվող մարդկանց մեջ, թող Աստված առաջնորդի մեզ՝ նոր ու թարմ ձևերով նրանց ծանոթացնելու Հիսուսին:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ ինձ տո՛ւր իմաստնություն, որպեսզի գտնեմ ուրիշներին օգնելու ճիշտ ճանապարհը: Ամեն:

**Ասված մեք *urstերում դնում է ուրիշներին հասնելու եզակի միջոցներ: Մեզ մնում է իրականացնել այն:***

Սակայն մատուցակապետը չհիշեց Դովսեփին և մոռացավ նրան: (ԹՄՆ. 40. 23)

## ՄԻԱՅՆԱԿ, ԲԱՅՑ ՈՉ ՄՈՌԱՑՎԱԾ

**Թ**երևս բանտարկության ամենամեծ դժվարությունը մեկուսացումն է և միայնությունն է: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անկախ անազատության տևողությունից՝ բանտարկյալների մեծ մասը ընդամենը երկու անգամ են իրենց սիրելիների ու մտերիմների հետ հանդիպման իրավունք ստանում: Այսինքն՝ միայնությունը մշտական դաժան իրականություն է:

Այդպիսի ցավ էր զգում Հովսեփը, երբ հանիրավի մեղադրվել ու դատապարտվել էր անազատության: Բայց հույսի մի շող կար: Աստված օգնեց նրան ճիշտ մեկնաբանել փարավոնի երբեմնի վստահելի ծառա, բանտում իր հետ նստած մատուցակապետի երազը: Ասելով, որ նա կրկին կնշանակվի իր պաշտոնին՝ Հովսեփը խնդրեց, որ նա փարավոնի մոտ հիշի իր մասին և օգնի ազատվել (Մնն. 40.14): «Սակայն մատուցակապետը չհիշեց Հովսեփին և մոռացավ նրան» (Հմ. 23): Հովսեփը սպասեց ևս երկու տարի, և այդ ժամանակաշրջանում նա բացարձակ միայնակ չէր, որովհետև Աստված նրա հետ էր: Ի վերջո փարավոնի ծառան հիշեց իր խոստումը, երբ դարձյալ փարավոնի երազը մեկնաբանելու կարիք եղավ, և Հովսեփին ազատ արձակեցին (41. 9-14):

Անկախ այն հանգամանքներից, որոնք մեզ մոռացվածությունն ու միայնությունն զգացումներ կպատճառեն, մենք կարող ենք կառչել Աստծո հուսադրող խոստմանը, որ Նա տվել է Իր զավակներին.«Ես քեզ չեմ մոռանա» (Ես. 49. 15):

**Աղոթք** - Երկնավոր Հայր, օգնիր ինձ, որ երբ մեճակ ու մոռացված զգամ, դիմեմ Քեզ և հիշեմ, որ Դու միշտ ինձ հետ ես: Ամեն:

**Դաճախ կարող եմ մոռացվածության ցավ զգալ, բայց Աստծո մշական ներկայության գիտակցումը մխիթարում է մեզ:**

Հիսուսն ամոթ չի համարում նրանց եղբայրներ կոչել: (Եր. 2.11)

## **ՀԻՍՈՒՍԸ՝ ՄԵՐ ԵՂԲԱՅՐԸ**

**Բ**րիջեր Ուուլքերն ընդամենը վեց տարեկան էր, երբ շունը հարձակվեց կրտսեր քրոջ վրա, և ինքը բնազդաբար նետվեց առաջ՝ պաշտպանելու քրոջը: Շտապ բուժօգնություն և դեմքին բազմաթիվ կարեր ստանալուց հետո Բրիջերն այսպես էր բացատրում իր քայլը. «Եթե մեկը պիտի մեռնե, մտածեցի, որ ես եմ լինելու այդ մեկը»: Բարեբախտաբար, բժիշկներին հաջողվեց տղայի դեմքը վերականգնել: Իսկ նրա եղբայրական սերը, որ երևում է նաև քրոջը գրկած լուսանկարներում, ուժեղ է ու անսպառ:

Ընտանիքի անդամները միշտ էլ հսկում ու հոգ են տանում միմյանց մասին: Եղբայրները հայտնվում են հատկապես դժվարությունների և մենակության պահերին ու կանգնում մեր կողքին: Իրականում երբեմն մեր եղբայրներն էլ կատարյալ չեն և նույնիսկ կարող են վիրավորել մեզ: Բայց մենք ունենք մի եղբայր՝ Հիսուսը, որ միշտ մեր կողքին է: Երբայեցիներին ուղղված նամակում ասվում է, որ Քրիստոսը, որպես խոնարհ սիրո գրսևորում, միացավ մարդկային ընտանիքին՝ հաղորդակից լինելով «արյանն ու մարմնին, ամեն ինչով նմանվելով եղբայրներին» (2. 14:17): Որպես արդյունք՝ Հիսուսը մեր ամենախիսկական եղբայրն է, որը «ամոթ չի համարում մեզ եղբայրներ կոչել» (Հմ. 11):

Մենք Հիսուսին անվանում ենք Փրկիչ, Բարեկամ, Թագավոր: Եվ այդ բոլորը ճիշտ են: Հիսուսը նաև մեր եղբայրն է, որ զգացել է մարդկային ամեն մի վախ, փորձություն, հուսահատություն ու տխրություն և միշտ կանգնած է մեր կողքին:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր Հիսուս, մեծ հիացնունքով Քեզ իմ եղբայրն եմ համարում: Քայլի՛ր ինձ հետ, սիրի՛ր ինձ, սովորեցրո՛ւ ինձ: ճանապարհ ցույց տուր: Ամեն:

**Ունեն՛ք մեր լավ կամ վատ մարդկային եղբայրներն ու փույրերը, բայց մեր իսկական եղբայրը Հիսուսն է:**

Պետք է ամեն ժամ աղոթել ու չվհատվել: (Պուկ. 18.1)

### **ՏՈԿՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ**

**1** 917 թ. Փլորիդացի երիտասարդ դերձակուհի էնն Քոնոգեկորվել էր, որ ընդունվել է Նյու Յորքի ամենահայտնի նորաձևության դպրոցներից մեկը: Բայց երբ նա եկավ դասերին մասնակցելու, տնօրենը, պատճառաբանելով աղջկա սեամորթ լինելը, ասաց, որ նրա մասնակցությունը ցանկալի չէ: Հրաժարվելով հեռանալ՝ նա աղոթեց, որ Տերն իրեն օգնի մնալ: Տեսնելով էննի չվհատվելը՝ տնօրենը նրան թույլ տվեց մնալ, բայց առանձնացնելով սպիտակամորթներից և նրանց դասարանի դուռը բաց թողնելով, որ նա ուղղակի լսի:

Էննը վեց ամիս ավելի շուտ ավարտեց դասընթացը և ունեցավ շատ բարձրակարգ հաճախորդներ: Բավական է նշել, որ ԱՄՆ-ի առաջին տիկին ժակլին Քենեդիի հարսանեկան զգեստը ինքը կարեց, ընդ որում՝ երկու անգամ, որովհետև աշխատավայրի վերին հարկում ջրախողովակ էր պայթել ու փչացրել առաջին զգեստը:

Այդպիսի տոկունությունը զորեղ է հատկապես աղոթքով: Անվհատ այրու մասին առակում այրին կաշառակեր դատավորից անընդհատ արդարություն է խնդրում: Երկար ժամանակ մերժելուց հետո դատավորը մտածում է.«Քանի որ այս այրին ինձ հոգնեցնում է, նրա դատն անեմ, որ անվերջ չգա ինձ ձանձրացնի» (Ղուկ. 18. 5):

«Իսկ Աստված մի՞թե իր ընտրյալներին արդարություն չի անի, որոնք գիշեր-ցերեկ աղաղակում են նրան» (Ղուկ. 18.5) հարցին էլ Տերը պատասխանում է՝ կանի (Հմ.8): Երբ Նա ոգևորում է մեզ ու կոչ անում անվհատ աղոթել, երբեք տեղի չտալ, Աստված իր ժամանակին կատարելապես կպատասխանի:

**Աղոթք** - Սիրելի՛ Հիսուս, շնորհակալ եմ աղոթքներիս պատասխանելու համար: Ամեն:

**Պեսք է համառ ու անվհաս աղոթել, որովհետև Աստված լսում և ղափասխանում է մեզ:**



Արդ Քրիստոսի անունով ենք պատգամաբերություն անում, որպես թե Աստված ինքն է մեր միջոցով պատգամում. հանուն Քրիստոսի աղաչում ենք, հաշտվե՛ք Աստծու հետ: (Բ. Կորնթ. 5.20)

## **ԱՊՐԱՆՔԱՆԻՇԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԻՑ ԱՎԵԼԻՆ**

Համացանցի դարաշրջանում մրցակցությունը դարձել է կատաղի: Ընկերություններն օրեցօր ավելի են զարգացնում հաճախորդներին գրավելու իրենց ստեղծագործական միջոցները: Օրինակ՝ Սուբարու մեքենաշինական ընկերության սեփականատերերն ամեն ինչ անում են իրենց վարկանիշը բարձր պահելու համար: Մասնավորապես իրենց մեքենաների խանդավառ երկրպագուներին դարձրել են «ապրանքանիշի դեսպաններ»:

Ընկերության կայքէջում ասված է.«Սուբարուի դեսպանների խումբը բացառիկ նվիրված մարդիկ են, որոնք կամավոր իրենց սերն ու ոգևորությունն են տարածում Սուբարուի մասին և օգնում ձևավորելու ապրանքանիշի ապագան»: Ընկերությունն ուզում է, որ իր ապրանքանիշը դառնա մարդկանց ինքնության մի մասը, այնքան կարևոր ու ոգևորող, որ չկարողանան դրա մասին ուրիշներին չպատմել: Բ. Կորնթ. 5-ում Պողոսը նկարագրում է մեկ այլ «դեսպանի» ծրագիր, որը ուրիշներին հրավիրում է հետևել Հիսուսին.«Տիրոջ երկյուղն իմանալով՝ մարդկանց համոզում ենք» (Հմ.11), ապա ավելացնում.«Որովհետև Աստված էր, որ հաշտության խոսքը մեր մեջ դրեց: Արդ Քրիստոսի անունով ենք պատգամաբերություն անում, որպես թե Աստված ինքն է մեր միջոցով պատգամում. հանուն Քրիստոսի աղաչում ենք, հաշտվե՛ք Աստծու հետ» (Հմ.19-20): Շատ արտագրություններ են խոստանում բավարարել մեր կարիքները, պարզեել երջանկություն ու նպատակների իրագործում: Սակայն միայն մեկ՝ հաշտության պատգամն է, որ Քրիստոսին հավատացողներին վստահված է որպես իսկապես բարի լուր: Եվ մենք պարտավորություն ունենք այդ բարի լուրը հասցնելու հուսահատ աշխարհին:

**Աղոթք** - Սիրելի՛ Հիսուս, շնորհակալ եմ, որ ինձ հրավիրում ես Քո դեսպանը լինելու: Ամեն:

**Տե՛ր Հիսուսը մեզ հրավիրում է լինել Իր դեսպանները: Պե՛տ է ընդունել այդ կոչը և գործադրել այն:**

Կուրախանաք քո Տեր Աստծու առջև այն վայրում, որ կընտրի քո Տեր Աստվածն իր անվան բնակության համար: (Բ.Օր. 16. 11)

## **ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐ**

**Մ**եծ միջոցառումները զարմանալիորեն կարող են փոխել մարդկանց: Հետազոտող Դանիել Յուզկինն ու իր գործընկերները, Միացյալ Թագավորությունում և ԱՄՆ-ում տարածված հավաքների ժամանակ շփվելով ավելի քան 1200 մարդկանց հետ, եզրակացրին, որ մեծ փառատոները կարող են ազդել մարդկանց բարոյական կողմնորոշման վրա՝ նրանց նույնիսկ ստիպելով, որ իրենց ունեցած միջոցները կիսեն ուրիշների հետ: Նրանց ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկաների 63 տոկոսը փոխակերպվել են, ավելի են կապվել մարդկանց հետ, դարձել ավելի առատաձեռն իրենց մտերիմների, հարազատների և նույնիսկ անծանոթների հանդեպ:

Պաշտամունքի հավաքվելով՝ մենք ավելին ենք զգում, քան սովորական աշխարհիկ, ընկերական հավաքների ժամանակ, որովհետև այդ պահին շփվում ենք Աստծո հետ: Աստծո ժողովուրդն, անկասկած, ունեցել է այդ փորձառությունը, երբ հավաքվում էին Երուսաղեմում՝ նշելու իրենց սուրբ տոնը: Նրանք առանց ժամանակակից հարմարությունների՝ տարվա մեջ երեք անգամ ճամփորդում էին՝ ներկա լինելու «Բաղարջակերաց տոնին, Շաբաթների տոնին և Տաղավարահարաց տոնին» (Բ. Օր. 16.16): Այդ հավաքները հանդիսավոր հիշատակության, պաշտամունքի և ուրախության պահեր էին «Տեր Աստծո առջև» ընտանիքի, ծառաների, օտարականների և այլ մարդկանց առջև (Հմ.11):

Եկե՛ք հավաքվենք պաշտամունքի, որպեսզի օգնենք միմյանց՝ վայելելու Տիրոջն ու Նրա վստահելի հավատարմությունը:

**Աղոթք** -Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ հրավիրեցիր Քո ժողովրդին՝ միասին երկրպագելու Քեզ: Ամեն:

**Երբ հավաքվե՞նք ուրիշների հետ փառաբանելու, կզգանք Աստծո հետ մեր ունեցած կապը և կզիսակցե՞նք, որ նրանց ներկայությունը օրհնում է մեզ:**

«Ո՞վ է արդյոք սա, որ և՛ քամին, և՛ լիճը հնազանդվում են սրան»: (Մարկ. 4.41)

### **ՔՐԻՍՏՈՍԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

**2**013-ին մոտ վեց հարյուր հանդիսականներ դիտում էին, թե ինչպես է լարախաղաց Նիկ Վալենդան քայլում Մեծ ձորի՝ 450 մետր խորուժյամբ կիրճի լայնուժյամբ ձգված պարանի վրայով: Վալենդան, ոտքը դնելով 5 սմ հաստուժյամբ պողպատյա պարանի վրա և իր գլխին դրված տեսախցիկով տեսնելով ներքևի հովիտը, շնորհակալություն հայտնեց Հիսուսին այդ տեսարանի համար, ազոթեց և քայլեց այնքան հանգիստ, ասես մայթի վրայով էր քայլում: Մի պահ քամին սաստկացավ, և նա կանգ առավ ու թեքվեց: Բայց անմիջապես էլ ուղղվեց, վերագտավ հավասարակշռությունն ու շնորհակալություն հայտնեց Աստծուն, որ «հանդարտեցրեց պարանի ճոճվելը»: Իր յուրաքանչյուր քայլափոխին հետևողներին և հետագայում էլ իրեն դիտողներին ակրոբատը ցույց էր տալիս իր կախվածությունը Քրիստոսի զորությունից:

Երբ փոթորկալից ալիքները Գալիլիայի ծովում մոլեգնեցին, Հիսուսի աշակերտները վախեցան և դիմեցին Տեր Հիսուսին (Մարկ. 4. 35-38): Հիսուսը հանդարտեցրեց փոթորիկը, և աշակերտներն իմացան, որ Նա իշխանություն ունի քամիների և ամեն ինչի վրա (Հմ. 39-41): Աստիճանաբար նրանց մեջ սկսեց աճել Նրա հանդեպ վստահությունը: Նրանց անձնական այդ փորձառությունը կարող է օգնել ուրիշներին, որ ճանաչեն Հիսուսի հասանելի լինելն ու արտասովոր ուժը:

Կյանքի փոթորիկների մեջ հայտնվելիս կամ վտանգավոր կիրճերով անցնելիս վստահենք Քրիստոսի զորությանը:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ հանգստացնում ես սիրտս, երբ ես վստահում եմ Քեզ կյանքի փոթորիկներով անցնելիս: Ամեն:

**Ինչդեռ ուրիշների կյանքում Քրիստոսի զորությունը տեսնելը ամրացնում է մեր հավատը, աղոթքը կարող է մեզ օգնել, որ հավատքի վստահ քայլերով առաջ գնանք:**

Տերը Մովսեսի հետ խոսում էր դեմառդեմ, ինչպես մի մարդ կխոսեր իր բարեկամի հետ: (Ելք 33.11)

## **ԳՏՆԵԼ ԱԶԱՏ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

«**Լուսանցք**» վերնագրով իր գրքում գրկտ. Ռիչարդ Սվենսոնը գրում է.«Մենք պետք է շնչելու տեղ ունենանք: Մեզ հարկավոր է ազատություն՝ մտածելու և իրավունք՝ բուժելու համար: Մեր հարաբերությունները մեռնում են արագություն պատճառով:...Մեր երեխաները, որոնք տապալվել են մեր արագընթաց «բարի նպատակների» պատճառով, վիրավոր պառկած են գետնին: Արդյո՞ք Աստված հյուժման կողմնակից է: Մի՞թե Նա մարդկանց չառաջնորդեց դեպի հանդարտ ջրեր: Ո՞վ է կողոպտել անցյալի այդ լայն ու բաց տարածքները և ինչպե՞ս կարելի է դրանք վերադարձնել»: Սվենսոնը եզրակացնում է, որ կյանքում մեզ հարկավոր է պարարտ «հող», որտեղ կկարողանանք հանգստանալ Աստծով ու հանդիպել Նրան: Ազատ տարածքներ փնտրելը Մովսեսին էր հատուկ: Առաջնորդելով «համառ ու ապստամբ» մի ազգի (Ել. 33.5)՝ նա հաճախ էր հեռանում՝ հանգիստ և Աստծո առաջնորդություն գտնելու: Իսկ իր «ժողովի վրանում» (Հմ.7) «Տերը Մովսեսի հետ խոսում էր գեմառդեմ, ինչպես մի մարդ կխոսեր իր բարեկամի հետ» (Հմ.11): Հիսուսը նույնպես «հեռանում էր ամայի տեղեր և աղոթում» (Ղուկ. 5.16): Նրանք երկուսն էլ գիտակցում էին Հոր հետ ժամանակ անցկացնելու կարևորությունը: Մենք նույնպես պետք է մեր կյանքում լուսանցք մտցնենք՝ գտնենք որոշ լայն ու ազատ տարածքներ, որտեղ կարելի է առանձնանալ հանգստանալու և Աստծո ներկայությունն զգալու: Նրա հետ ժամանակ անցկացնելը կօգնի ավելի լավ որոշումներ կայացնելու, մեր կյանքում ավելի առողջ լուսանցքներ ունենալու, որպեսզի միջոց ու տարածք ունենանք Իրեն և ուրիշներին սիրելու:

**Աղոթք** - Հիսու՛ս, օգնի՛ր ինձ, որ ամեն օր Քեզ հետ անցկացնելու հանգիստ պահեր որոնեմ: Ամեն:

**Մեր կյանքի ամենօրյա հեփ մեջ caws կարևոր է մի դյախ կանգ առնել, որոնել հարմար վայր ու ժամանակ անցկացնել Աստծո հետ:**



Միմյանց քաջալերե՛ք և ամրապնդե՛ք: (Ա. Թես. 5.11)

### **ՀՈՐԴՈՐԵԼՈՒ ՊԱՐԳԵՎԸ**

**Կ**ինս, գլուխը ներս մտցնելով գուժեց, որ մեղուները «բազմանում են»: Ոչ մի մեղվաբույժ չէր ուզեմա այգալիսի լուր լսել: Ես դուրս վազեցի՝ տեսնելու, թե ինչպես են հազարավոր մեղուներ, փեթակից դուրս գալով, բարձրանում բարձր սոճիի գագաթը՝ այլևս չվերադառնալու համար:

Մի շաբաթ տևած փոթորկի պատճառով ուշացրել էի մեղուների բազմացման այդ շրջանի մասին տեղեկություններ հայթայթելը: Եվ եղանակների կարգավորվելուն զուգահեռ՝ մեղուները հեռացան: Իրականում, իհարկե, մեղուները բաժանվում էին նոր ու առողջ օջախ ստեղծելու համար: Փորձառու մեղվաբույժներից մեկը, տեսնելով իմ շփոթմունքը, ասաց.«Մի՛ նեղվիր, այգալես բոլորի հետ է պատահում»:

Հորդորելը հիանալի պարզե է: Դավիթը հուսահատված էր, քանի որ Սավուղը հետապնդում էր իրեն, որ սպանի: Սավուղի որդի Հովնաթանը քաջալերեց նրան՝ ասելով. «Մի՛ վախեցիր, որովհետև իմ հայր Սավուղի ձեռքը չպիտի գտնի քեզ, և դու թագավոր պիտի լինես Իսրայելի վրա, իսկ ես կլինեմ քո երկրորդը, և իմ հայր Սավուղն էլ գիտի այս բանը» (Ա.Թագ. 23. 17):

Մրանք զարմանալի անձնուրաց խոսքեր են գահին հաջորդը բարձրացողի համար: Հավանաբար Հովնաթանը հասկացել էր, որ Աստված Դավթի հետ էր, ուստի և ինքը խոսեց հավատի խոնարհությամբ:

Մեր շուրջն էլ կան մարդիկ, որոնք քաջալերանքի ու խրախուսանքի կարիք ունեն: Երբ մենք խոնարհվենք Նրա առաջ և խնդրենք, Նա մեր միջոցով կսիրի այդ մարդկանց:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, Դու ինձ տալիս ես հավիտենական քաջալերանք և բարի հույս: Օգնի՛ր, որ կարողանամ Քո սերը այսօր ցույց տալ որևէ մեկին: Ամեն:

**Մեր շուրջը քաջալերանքի կարիք ունեցող բոլոր մարդիկ կան:**  
**Ուսի մեզ մնում է խոնարհաբար ծառայել նրանց:**

Դժոխքի դռները նրան չեն կարողանա հաղթել: (Մատթ. 16.18)

## **ԱՍՏԾՈ ՅԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ**

**Ե**րիտասարդ մայրը երկու երեխաների հետ եկեղեցի հասավ այն պահին, երբ կիրակնօրյա պաշտամունքն ավարտվում էր: Ներկաներից մեկը հայտնեց, որ մոտակա եկեղեցում երկու պաշտամունք է տեղի ունենում, որոնցից մեկն սկսվելու է շուտով: Կինն ակնհայտորեն ուրախացավ, որ գոնե այդ մեկին կհասցնի ներկա լինել: Իսկ կնոջն ուղղորդող մտովի եզրակացրեց, որ եկեղեցին երբեք չի ավարտում իր գործը: Աստծո եկեղեցին մնում է հավիտյան:

Եկեղեցին զգայուն «շինություն» է: Պողոսն այն համարում է Աստծո հավատարիմ ընտանիքը և այսպես նկարագրում. «Ուրեմն այսուհետև այլևս օտար ու պանդուխտ չեք, այլ սրբերի համաքաղաքացիներ և Աստծո ընտանիքի անդամներ՝ առաքյալների ու մարգարեների հիմքի վրա շինված, որի անկյունաքարը Քրիստոսն է. նրա մեջ ամբողջ կառույցը ներդաշնակորեն միավորված աճում է, որպեսզի Տիրոջով սուրբ տաճար դառնա, որի մեջ դուք էլ նրա հետ կառուցվում եք իբրև Աստծու բնակարան Հոգու միջոցով» (Եփ. 2. 19-22):

Հիսուսն Ինքն է հիմնել Իր եկեղեցին՝ հավիտենականության համար: Նա հայտարարում է, որ չնայած Իր եկեղեցու առջև ծառայած մարտահրավերներին ու դժվարություններին՝ «դժոխքի դռները նրան չեն կարողանա հաղթել» (Մատթ. 16.18):

Մենք բոլորս, որպես Աստծո տիեզերական եկեղեցու մի մասր, որ կառուցվում է «Քրիստոս Հիսուսով, սերնդեսերունդ, հավիտյանս հավիտենից» (Եփ. 3.21), այս զորացնող ոսպնյակով պետք է նայենք մեր տեղական եկեղեցիներին:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր Հիսուս, շարունակիր կառուցել ինձ Քո մեջ՝ որպես Քո եկեղեցու մի մաս: Ամեն:

**Տեղական եկեղեցին մեզ դարձնում է երախտադար:**  
**Մեզ մնում է օգնել եկեղեցու համընդհանուր աճին:**

Քո եղբոր արյան ձայնը երկրից բողոքում է ինձ: (ԾՈ. 4.10)

## ՎԿԱՆԵՐ

Հենրի Լոնգֆելլոն իր «Վկաներ» բանաստեղծության մեջ նկարագրում է ստրուկների խորտակված նավը, սգում «չըզթալված կմախքների», անթիվ անանուն զոհերի համար: Բանաստեղծությունն այսպես է ավարտվում.«Սրանք ստրուկների դժբախտությունն են, որ փայլում են անդունդից, աղաղակում գերեզմաններից: Մենք վկաներն ենք»:

Բայց ո՞ւմ հետ են խոսում այդ վկաները: Մի՞թե նման լուռ վկայությունն իզուր չէ:

Կա՛ մի Վկա, որ տեսնում է այդ ամենը: Երբ Կայենն սպանեց իր եղբորն ու ձեռացրեց, թե տեղյակ չէ, Աստված նրան ասաց.«Քո եղբոր արյան ձայնը երկրից բողոքում է ինձ: Եվ հիմա դու անիծյալ լինես այն երկրից, որ իր բերանը բաց արեց եղբորդ արյունը քո ձեռքից ընդունելու համար» (ՄՆ. 4.10 -11):

Կայենի անունը մնում է որպես նախազգուշացում: Հովհաննես աշակերտը զգուշացրել է.«Ձլինե՛ք ինչպես Կայենը, որ չարից էր ու իր եղբորն սպանեց (Ա.Հովհ. 3.12): Աբելի անունը նույնպես մնում է, սակայն բոլորովին հակառակ կերպով: Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակն ասում է.«Հավատով Աբելը Կայենից ավելի լավ զոհ մատուցեց Աստծուն, որով վկայություն ստացավ, որ արդար է» (Եբ. 11.4):

Ինչպես Աբելը, այնպես էլ վաղուց մոռացված ստրուկների ոսկորները շարունակում են խոսել: Լավ կլինի, որ մենք հիշենք այդպիսի զոհերին և ընդգիմանանք՝ նման բաներ տեսնելով: Որովհետև նրա արդարությունը հաղթելու է:

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, Դու այն Աստվածն ես, որ տեսնում է:

Օգնի՛ր մեզ, որ տեսնենք ճնշումը և ցոյց տուր դրան դիմակայելու ուղիները: Ամեն:

**Ասված կոչ է անում, որ ականասես լինելով անարդարության ու բռնությունների՝ վկայենք դրանց մասին:**

Աստված մեզ երկչոտության հոգի չտվեց, այլ զորության, սիրո և ողջամտության: (Բ. Տիմ.1.7)

## ՄՐՏԱԲԱՑ ԱՌԱՏԱԶԵՆՆՈՒԹՅՈՒՆ

**Փ**արքեր Փալմերը ավարտական Հանդեսներից մեկի ժամանակ, շրջանավարտներին անձնվիրություն ու առատաձեռնություն գաղափարներով ոգևորելու համար, ասել է. «Չկա մեկը, որ կհպարտանա իր եսակենտրոն, ինքնասպասարկ և ինքնանպատակ կյանքով»:

«Միաժամանակ համարձակ ապրելը նշանակում է նաև ընդունել, թե որքան քիչ բան գիտենք և որքան հեշտ է ձախողվելը»,-շարունակել է բանախոսը:-Իրենց անձերը աշխարհին ծառայելուն նվիրելը պահանջում է զարգացնել դեպի մեր չիմացածն ու հավանական ձախողումները գնալու, սայթաքելուց ու ընկնելուց հետո ոտքի կանգնելու հաստատակամություն:

Միայն այն ժամանակ, երբ մեր կյանքը կառուցված կլինի շնորհի հիման վրա, մենք կկարողանանք քաջություն գտնել ընտրելու նման անվախ «սրտաբաց առատաձեռնությունը»:  
Ինչպես Պողոսը բացատրում է իր հովանավորյալ Տիմոթեոսին, մենք կարող ենք «վերակենդանացնել Աստծո շնորհը» (Բ.Տիմ. 1.6) և ապրել դրանով, երբ հիշենք, որ Աստծո շնորհն է, որ փրկում է մեզ և կոչում նպատակասլաց կյանքի» (Հմ.9): Նրա շնորհն է, որ մեզ քաջություն է տալիս մերժելու երկչոտ ապրելու փորձությունը և ընտրելու «զորության, սիրո և ողջամտության» (Հմ.7) ուղին: Հենց այդ շնորհն է, որ օգնում է ընկնելուց հետո ոտքի կանգնել ու շարունակել ապրել՝ մեր կյանքը հիմնելով Նրա սիրո վրա (Հմ. 13-14):

**Աղոթք** - Դայր, փառք Քեզ, որ չես ընդունում երկչոտ ապրելը: Օգնի՛ր մեզ՝ թեքվելու դեպի Քո տված քաջությունը: Ամեն:

**Երկչոտ ատրելակերպն ընտրելիս իմանանք, որ Աստծո շնորհն ու զորությունը կօգնեն մեզ համարձակ ատրելու համար:**



Յրեաներն ասում էին. «Տե՛ս ինչպե՛ս էր նրան սիրում»: (Յո՞ղի. 11. 36)

## **ԲԱՐԵԿԱՄԻ ՊԵՍ**

**Ա**րդեն քանի տարի ես ու իմ երկար տարիների ընկերը չէինք տեսել իրար: Այդ ընթացքում նա նույնիսկ քաղցկեղով էր հիվանդացել ու բուժվում էր: Ընկերոջս անսպասելի ճամփորդությունը դեպի մեր շրջան ինձ հնարավորություն տվեց տեսնել նրան: Հանդիպեցինք ճաշարանում և երկուսիս աչքերն էլ լցվեցին: Շատ ժամանակ էր անցել, երբ մենք վերջին անգամ այստեղ էինք, և այժմ մահն էր թաքնված մի անկյունում՝ մեզ հիշեցնելով կյանքի կարճություն մասին: Մենք լաց լինելով հիշում էինք մեր արկածները, չարություններն ու սիրով, կարոտով լի անցած տարիները:

Այդ պահին արցունքների հետ այնքա՛ն սեր էր հորդում մեր սրտերից:

Հովհաննուս ավետարանում պատմվում է, որ Հիսուսն էլ լաց եղավ: Երբ հրեաները նրան ասացին.«Տե՛ր, արի՛ ու տե՛ս» (11.34), նա կանգնեց իր լավ ընկեր Ղազարոսի գերեզմանի առջև ու «արտասովեց» (35): Սա ցույց է տալիս, թե Քրիստոսը ինչպես է հասկանում մեր զգացմունքները: Արդյո՞ք այդ հուզիչ պահին շատ ավելի բաներ են եղել, որոնք չի արձանագրել Հովհաննեսը: Հնարավոր է: Սակայն հրեաների արձագանքը, թե «Տե՛ս ինչպե՛ս էր նրան սիրում» (36), լիովին բավարար հիմք է, որպեսզի երկրպագենք Բարեկամին, որ գիտե մեր բոլոր թուլությունները: Հիսուսը մարմին, արյուն ու արցունք է: Հիսուսը Փրկիչն է, որ սիրում է ու հասկանում:

**Աղոթք** - Յիսու՛ս, շնորհակալ եմ, որ փրկում ես ու կիսում արցունքներս: Ամեն:

**Մեր Տերը՝ Յիսուսը, մարդասեր Փրկիչ է: Ուսի փառալերվենք ու իմանանք, որ նա հասկանում ու կիսում է մեր արցունքները:**

Բազմության մեջ օրհներգելու եմ քեզ: (Մաղմ. 22.22)

## **ԽՈՆԱՐՅՎԱԾ, ԲԱՅՑ ՅՈՒՍԱԼԻ**

**Պ**աշտամունքի ավարտին հովիվը Լաթրիսին հրավիրեց առաջանալ ու ողջունել մարդկանց: Այդ պահին ոչ մեկը չէր սպասում այդ մարդուց հրաշալի խոսք լսել: Նա եկել էր Կենտուկիից, որտեղ 2021-ի դեկտեմբերին տեղի ունեցած փոթորիկը խել էր ընտանիքի յոթ անդամների կյանքը: Սակայն նա ասաց.«Ես դեռ կարող եմ ժպտալ, որովհետև Աստված ինձ հետ է»: Ծանր փորձություն ենթարկված, ջարդված մարդու վկայությունը իրականում խրախուսանք էր նրանց համար, ովքեր դիմագրավում էին անձնական մարտահրավերներ:

22-րդ սաղմոսում Դավիթի խոսքերը, որ խորհրդանշում են Հիսուսի չարչարանքները, նեղված ու հուսալքված մարդու խոսքեր են, որից շրջվել է Աստված (Հմ.1), որին բոլորը նախատում ու անարգում են (Հմ.6-8), որը շրջապատված է գիշատիչներով (Հմ.12-13): Նա թույլ էր ու չարիքով շրջապատված (Հմ.14-18), բայց ոչ հուսահատ: «Բայց դու, ո՛վ Տեր, մի՛ հեռացիր, ո՛վ գորուծյուն, շտապի՛ր ինձ օգնության» (Հմ.19):

Քո մարտահրավերները գուցեև նման չեն Դավիթի կամ Լաթրիսի մարտահրավերներին, բայց նույնքան իրական են: Հետևաբար 24-րդ համարի բառերն էլ նույնքան իմաստալից են.«Որովհետև նա չանարգեց և չարհամարհեց խեղճի խեղճությունը և իր երեսը չձածկեց նրանից, իսկ երբ նա աղաղակեց նրան, նա լսեց»: Երբ զգանք Աստծո օգնությունը, եկե՛ք օրհներգենք Նրան, որպեսզի ուրիշներն էլ կարողանան լսել այդ մասին (Հմ.22):

**Աղոթք** - Երկնավոր Հայր, Քեզ եմ բերում իմ անօգնական վիճակը: Նոր լույս ներշնչիր սրտիս մեջ և օգնի՛ր, որ գովաբանեմ Քո սուրբ անունը: Ամեն:

**Օգտակար է Աստծո բարիքների մասին տյանել, որդեսուզի կարողանանք դրանց հետ հաղորդակցվել:**



Իմ սրտում դրել էի հանգստյան մի տուն կառուցել Տիրոջ ուխտի տապա-  
նակի ու մեր Աստծու ոտքի պատվանդանի համար: (Ա. Մնաց. 28. 2)

## ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԶԱԽՈՂՈՒՄԸ

**Օ** կլահոմայի միջնակարգ դպրոցի բարձրդասարանցիներն  
ամբողջ տարին գումար էին հավաքել ճամփորդելու հա-  
մար: Սակայն օգանավակայան ժամանելով՝ նրանցից շատերը  
պարզեցին, որ տոմս են գնել կեղծ ավիաընկերություններից և  
այժմ հայտնվել են փակուղում: Աշակերտներն ստիպված եղան  
փոխել իրենց ծրագրերը, բայց և որոշեցին «առավելագույնս  
օգտվել այդ իրավիճակից»: Նրանք երկու օր վայելեցին մոտա-  
կա հրաշալի զբոսավայրերը, որ ստացան որպես փոխհատու-  
ցում: Ծրագրերի ձախողումը կամ փոխվելը կարող է հուսահա-  
տեցնել մարդկանց: Հատկապես, երբ դրանց համար ժամանակ,  
գումար կամ զգացմունքներ են ներդրվել: Դավիթ թագավորը  
նպատակադրվել էր հանգստյան տուն կառուցել Տիրոջ համար  
(Ա.Մնաց. 28.2), բայց Աստված նրան ասաց.«Դու իմ անվան  
համար տուն չպիտի կառուցես...Քո Սողոմոն որդին է կառու-  
ցելու իմ տունն ու իմ դավիթները» (Հմ. 3,6): Դավիթը չհու-  
սահատվեց: Այլ փառաբանեց Նրան իր որդի Սողոմոնին թա-  
գավոր ընտրելու համար և նրան տվեց սրահի, սենյակների,  
գանձարանների և նույնիսկ իր մտքում եղած կառույցների  
հատակագծերը (Հմ. 11-13): Ապա Սողոմոնին ասաց. «Զորա-  
ցի՛ր, քաջասիրտ եղի՛ր և կատարի՛ր. մի՛ վախեցիր, որովհետև  
Տեր Աստվածը՝ իմ Աստվածը, քեզ հետ է» (Հմ. 20): Երբ մեր  
ծրագրերը չեն իրականանում, անկախ դրա պատճառներից,  
կարող ենք մեր հուսահատությունը բերել Աստծու մոտ, որով-  
հետև «Նա մեզ հոգ է տանում» (Ա.Պետ. 5.7): Նա օգնում է  
չնորհքով հաղթահարել բոլոր հուսախաբույթյունները:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ խոստումներդ ու  
ծրագրերդ չեն ձախողվում: Օգնի՛ր ինձ, երբ իմ ծրագրերն են  
ձախողվում: Ամեն:

**Հաճախ է դասահում, որ բաս ներդրումներ դասանջած  
ծրագրերը ձախողվում են: Աղավիհներով Աստուն՝  
կվերականգնենք հույսը:**

Տերը տվեց, Տերն էլ առավ: Տիրոջ անունը թող օրհնյալ լինի: (Յոհ.1. 21)

## **ԿՈՐՑՆԵԼ ԱՄԵՆ ԲԱՆ**

**Կ**ամուրջներ, հուշարձաններ և մեծ շենքեր չափազերելով՝ Սեզարը որոշակի հարստություն էր կուտակել և որոշեց նոր նախաձեռնություն սկսել: Վաճառեց իր առաջին առևտրային գործը և գումարը դրեց բանկում: Շուտով, սակայն, կառավարությունը բռնազրավեց մասնավոր բանկերի բոլոր շարժական գույքերը, և մեկ վայրկյանում Սեզարի ողջ խնայողությունը հօգս ցնդեց:

Անարգարությունը չդարձնելով բողոքելու պատճառ՝ Սեզարը Աստծուն խնդրեց իրեն ցույց տալ առաջ գնալու ճիշտ ճանապարհը: Եվ ամեն ինչ սկսեց նորից:

Մի սարսափելի պահի Հոբբը կորցրեց շատ ավելին, քան իր ստացվածքը: Կորցրեց ծառաներից շատերին և իր բոլոր գավակներին (Հոբ. 1.13-22): Հետո կորցրեց առողջությունը (2.7-8): Հոբբի արձագանքն այս ամենին մնում է որպես մշտական օրինակ. նա աղոթեց և ասաց. «Տերը տվեց, Տերն էլ առավ: Տիրոջ անունը թող օրհնյալ լինի» (1.21): Գլուխը եզրափակվում է այսպես.«Այս ամենում Հոբբը չմեղանջեց և Աստծու հանդեպ անզգամություն չարեց» (Հմ. 22):

Հոբբի պես Սեզարը նույնպես ընտրեց Աստծուն վստահելը: Արդյունքում մի քանի տարում նա ստեղծեց նոր առևտրային գործ, որն ավելի հաջող ընթացք ունեցավ, քան առաջինը: Նրա պատմությունը նման է Հոբբի պատմության ավարտին (տե՛ս Հոբ 42): Բայց Սեզարը, եթե նույնիսկ երբեք չվերականգնվեր տնտեսապես, նա գիտեր, որ իր իսկական գանձը այս երկրի վրա չէ (Մատթ. 6. 19-20): Նա վստահում էր Աստծուն:

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, խնդրում եմ ինձ այսօր մի բան սովորեցրու Քո սիրո մասին, որովհետև շատ բան կա, որ ես չեմ հասկանում: Ամեն:

**Մեծ ու փոքր կորուստներ կունենանք, որոնք կհուսահատեցնեն մեզ, բայց մեր մխիթարությունն այն է, որ Ասված մեզ հետ է:**

ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ: (Մատթ. 11. 28)

## **ԵՐԲ ՀՈԳՆԱԾ ԵՍ**

**Ա**շխատանքային օրվա ավարտին լուռ նստած էի համա-կարգչի դիմաց: Պետք է որ ոգևորված լինեի այն աշխատանքով, որն այսօր ավարտել էի: Սակայն այդ զգացումը չու-նեի: Ուսերս ցավում էին անհանգիստ ծանրաբեռնվածու-թյամբ: Միտքս զբաղված էր խնդրահարույց մի հարցով, ու-զում էի փախչել մի տեղ, հեռուստացույց նայել: Ես փակեցի աչքերս ու շշնջացի՝ Տե՛ր: Այնքան հոգնած էի, որ ուրիշ բան չէի կարող անել: Ամբողջ հոգնածությունս ամփոփ-վեց այդ մի բառի մեջ, և ես անմիջապես հասկացա, որ Տիրոջ մոտ եմ գնալու:

«Ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթ. 11. 28),- ասում է Հիսուսը: Ո՛չ գիշերային քունը, ո՛չ հեռուստացույցի առջև դադարը, ո՛չ էլ որևէ խնդրի լուծումից առաջացած թեթևություն զգացումը չեն կարող տևական հանգստի աղբյուր լինել, որովհետև դրանք բոլորը կախված են մեր հանգամանքներից:

Ի հակադրություն դրա՝ Հիսուսի տված հանգիստը մնայուն է ու երաշխավորված Նրա անփոփոխ նկարագրով: Նա միշտ բարի է և նույնիսկ դժվարությունների ժամանակ մեզ տալիս է իսկական հանգիստ: Որովհետև մենք գիտենք, որ ամեն ինչ Նրա վերահսկողության ներքո է: Մենք կարող ենք վստահել ու հնազանդվել Նրան, դժվար իրավիճակներում դիմանալ և նույ-նիսկ զարգանալ միայն Իր պարգևած զորություն շնորհիվ:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, հիշեցրո՛ւ ինձ, որ իսկական հանգիստը միայն Քո մեջ է: Ամեն:

**Երբ հոգիդ հոգնած է, գնա Տե՛ր Հիսուսի մոտ, և նա քեզ կհանգստացնի:**

Դու, որ ուղիղ ես, հարթում ես արդարի շավիղը: (Ես. 26.7)

## ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԾԱՆԱԴԱՐՅԻ ՎՐԱ

**Բ**իպ բեյսբոլ խաղի մասնակիցները կույրերն են, որոնց գործողությունները կախված են ձայնային ազդանշանով գնդակից ու պատվանդանից: Տարբեր աստիճանի կուրություն ունեցողները ընդգրկվում են նույն խմբում և կատարում տարբեր գործառույթներ. երբ հարվածողը ճոճում է գավազանը, և այն դիպչում է գնդակին, նա վազում է դեպի պատվանդանը: Հարվածողը դուրս է մնում, եթե դաշտում գտնվողներից մեկը, նախքան նրա՝ հաջորդ պատվանդանին հասնելը կբռնի գնդակը: Խաղացողներից մեկն ասել է, որ խաղի լավագույն մասնայն է, երբ ինքը «ազատություն զգալով՝ վազում է», որովհետև գիտի, որ կա հստակ ճանապարհ և ուղղություն:

Եսայի մարգարեն ասում է, որ Աստված «ուղիղ է, հարթում է արդարի շավիղը» (Ես. 26.7): Երբ գրվում էին այս խոսքերը, իսրայելցիների ճամփան հարթ չէր, նրանք աստվածային դատաստան էին տեսնում իրենց անհնազանդության համար: Եսային նրանց հորդորեց, որ քայլեն հավատքով և հնազանդությունամբ, ընտրեն թեկուզ դժվար, բայց հարթ շավիղը, որ Նրա «անվան ու հիշատակի համար» մտահոգվելը (Հմ.8) դարձնեն իրենց սրտերի կենտրոնացումն ու առանցքը:

Որպես հավատացյալներ՝ մենք սկսում ենք ավելին իմանալ Աստծո մասին և հնազանդորեն հետևելով Նրա շավիղներին՝ կառուցել մեր վստահությունը Նրա հավատարմության հանդեպ: Մեր կյանքի ուղին միշտ չէ, որ հարթ է, և կարող ենք վստահ լինել, որ Աստված մեր կողքին է ու ճանապարհ է բացում մեզ համար: Հնազանդությամբ վազենք Աստծո՝ մեզ համար բացած լավագույն ճանապարհով:

**Աղոթք** - Դայր Աստված, երախտապարտ եմ այն ազատության համար, որ ես զգում եմ Քո բարի ճանապարհին: Խնդրում եմ շարունակի՛ր ինձ ցույց տալ Քո ճանապարհը: Ամեն

**Հնազանդության ի՞նչ ֆայլեր են անհրաժեշտ, որդեսզի կարողանամ ադաիով ընթանալ Ասծո բացած բարի ճանադարիով:**

Երբ հոգիս մաշվում է իմ մեջ, դու այն ժամանակ ճանաչում ես իմ ընթացքը: (Սաղմ. 142. 3)

## ԱՆԾԱՆՈԹ ԵՐԹՈՒՂԻ

**Վ**արանում էի՝ միանա՞լ Բրայրնի վագքին, թե ոչ: Օտար երկրում լինելով՝ չէի պատկերացնում՝ որտեղ և ինչ հեռավորություններ ենք վագելու: Ինքը լավ վագորդ էր, հետ չմընալու համար հանկարծ արագ չգնա՞մ ու վնասեմ ոտքս: Այս մտքերին հաղթեց վստահությունը Բրայրնի հանդեպ, քանի որ նա լավ գիտեր մեր անցնելիք ճանապարհը: Արահետը անհարթ էր, ոլորապտույտ, որոշ տեղերում անցնում էր խիտ անտառի միջով: Բարեբախտաբար, Բրայրնն անընդհատ շրջվում էր նայելու և զգուշացնելու ինձ առջևում գտնվող դժվար հատվածների մասին: Հավանաբար աստվածաշնչյան հերոսներն էլ այսպիսի ապրումներ են ունեցել անծանոթ վայրերով անցնելիս. ինչպես Աբրահամը Քանանի երկրում, Իսրայելի ժողովուրդը՝ անապատում և Հիսուսի աշակերտները, որ բարի լուրը տարածելու առաքելությունն էին անում: Նրանք պատկերացում չունեին, թե ինչպիսին է լինելու իրենց ճամփորդությունը, բացի նրանից, որ իհարկե դժվար է լինելու: Կար մեկը, որ առաջնորդում էր նրանց և գիտեր ճանապարհը: Նրանք պիտի վստահեին, որ Աստված հաղթահարելու ուժ կտա և կհոգա իրենց բոլոր կարիքները: Իրենք կարող էին հետևել Նրան, որովհետև նա հստակ գիտեր, թե ինչ է սպասվում առաջիկայում: Այս հավաստիացումը մխիթարեց Դավթին, երբ նա փախուստի մեջ էր: Չնայած մեծ անորոշությունը՝ նա ասաց Աստծուն. «Երբ հոգիս մաշվում է իմ մեջ, դու այն ժամանակ ճանաչում ես իմ ընթացքը» (Սաղմ. 142. 3): Կյանքում լինում են պահեր, երբ մենք վախենում ենք սպասվելիքից: Բայց պետք է իմանանք ու հիշենք, որ մեզ հետ քայլող Աստվածը գիտե ճանապարհը:

**Աղոթք** - Դայր, ես չգիտեմ, թե ինչ է լինելու հետո, Դու գիտես: Իսկ ես գիտեմ, որ Դու կհոգաս ու կառաջնորդես իմ քայլերը: Ամեն:

**Մեր կյանքում շատ անհանգստացնող բաներ կան, բայց հիշե՛մ, որ Աստված քայլում է մեզ հետ և գիտե, թե ինչ կա առջևում:**

Աշխարհում նեղություն պիտի ունենաք, բայց քաջալերվե՛ք, որովհետև ես հաղթել եմ աշխարհին: (Գովհ. 16. 33)

## **ԱՍԾՈՒ ԶԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

«**Կյանք**» ամսագրի 1968 թ. հունիսի 12-ի համարում տպագրված էր քաղաքացիական պատերազմի պատճառով սովամահոթյան եզրին հայտնված նիգերիական Բիաֆրա պետության մանուկների լուսանկարը: Մի երիտասարդ, անչափ վշտացած այդ պատկերով, ամսագրի օրինակը ցույց տվեց մի հովվի ու հարցրեց. «Աստված զիտե՞ այս մասին»: Դրական պատասխան ստանալով՝ տղան հայտարարեց, որ իրեն չի հետաքրքրում այդպիսի Աստվածը: Այս հարցն անհանգստացնում էր ոչ միայն մանուկներին, այլև մեզ՝ բոլորիս: Աստծո առեղծվածային իմացությունը զուգընթաց՝ ես ուզում էի, որ այդ տղան լսեր նաև այն հերոսական պատմությունը, որ Աստված շարունակում է գրել նույնիսկ այնպիսի վայրերում, ինչպիսին նախկին Բիաֆրայի պետությունն է: Հիսուսն այս պատմությունը պարզեց Իրեն հետևողների համար, որոնք կարծում էին, թե դժվարությունների մեջ Նա պիտի պաշտպանի իրենց: Քրիստոսը նրանց պատասխանեց. «Աշխարհում նեղություն պիտի ունենաք»: Նաև ասաց, որ քաջալերվեն, որովհետև Ինքը «հաղթել է աշխարհին» (Հովհ. 16. 33): Աստծո պատմության վերջին գլխում անարդարությունները պիտի վերանան և բոլոր նեղությունները պիտի բուժվեն: Ծննդոցից Հայտնություն գրքերը ներկայացնում են Աստծո պատմությունը, որը վերացնում է նույնիսկ ամենամեծերևակայելի չարիքն ու շտկում բոլոր սխալները: Պատմությունը ներկայացնում է այն սիրառատ Մեկին՝ Տեր Հիսուսին, որի հետաքրքրությունը մեր հանդեպ անկասկած է: Թող որ այսօր մենք հանգստանանք Նրա խաղաղությունում ու ներկայությունում:

**Աղոթք** -Յայր, ինձ համար դժվար է շտկել բոլոր չարիքները: Բայց վստահ եմ, որ Դու դա կանես: Ամեն:

**Մեր կյանքի ղազմությունները կարող են ողբերգական լինել, սակայն Գիտուք խոստացել է փրկարար վերջաբան գրել:**



Դու ես իմ սիրելի Որդիմ, որ ունի իմ բարեհաճությունը: (Մարկ. 1.11)

## **ՃԱՆԱԶԵԼ ԱՍՏԾՈՒՄ**

**Ի**ռլանդիա կատարած այցելությունս ժամանակ ինձ ապշեցրել էր այն, որ ամենուր առփույտ է պատկերված: Փոքրիկ, կանաչ եռատերև այգի բույսեր կարելի է գտնել խանութներում առկա գրեթե ամեն ինչի վրա՝ հագուստ, գլխարկ, զարդեր և այլն:

Այս բույսն այստեղ սերնդեսերունդ ընդունված է ոչ այնքան բերքառատությամբ, որքան Երրորդության բացատրության պարզ միջոց լինելու համար: Քրիստոնեական այն համոզմունքը, թե Աստված մեկ էություն է և հավիտյան գոյություն ունի երեք տարբեր անձանց՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու մեջ, այս բույս-խորհրդանիշի միջոցով մեկնաբանվում է յուրովի. նույն նյութից բաղկացած բույսն ունի երեք տարբեր տերևներ:

Երրորդություն բառը Աստվածաշնչում չկա, բայց ամփոփում է այն աստվածաբանական ճշմարտությունը, որ տեսնում ենք Մբ. Գրքի հատվածներում, որտեղ Երրորդության բոլոր անձերը միաժամանակ ներկա են: Երբ Հիսուսը՝ Որդի Աստվածը մկրտվում է, Սուրբ Հոգին երկնքից «աղավնակերպ» իջնում է, և լսվում է Հայր Աստծո ձայնը. «Դու ես իմ սիրելի Որդին» (Մարկ. 1.11):

Հիսուսին հավատացող իռլանդացիներն օգտագործել են առփույտը, որովհետև ուզում էին օգնել մարդկանց, որպեսզի նրանք ճանաչեն Աստծուն: Երբ ավելի լիարժեք հասկանանք Երրորդության գեղեցկությունը, կճանաչենք Աստծուն և կմեծանա «հոգով ու ճշմարտությամբ» (Հովհ. 4.24) Նրան երկրպագելու մեր կարողությունը:

**Աղոթք** - Զայր, Որդի՛ և Սուրբ Զոգի, երկրպագում եմ Քեզ, որպես մեկ Աստծու, որը գործում է միասնական և սեր ու փրկություն է տարածում բոլոր մարդկանց վրա: Ամեն:

**Սուրբ Երրորդությունը ներկայացնող խորհրդանիշները կօգնեն հասկանալ իրենց իմաստը և հավասալ, որ Աստված մեկն է:**

Ակնհայտ է, որ դուք եք Քրիստոսի նամակը,....գրված ոչ թե թանաքով, այլ կենդանի Աստծու Յոզով: (Բ.Կորնթ. 3.3)

### **ՕՐՅՆՅԱԼ ԴԻՄԱԿԸ**

**Ե**րբ համաճարակի ժամանակ դիմակ դնելու պարտադրանքը թուլացավ, աշխատում էի մի տեղ անպայման դիմակ ունենալ, որպեսզի հարկ եղած դեպքում (ինչպես օր. աղջկաս դպրոցում, որտեղ դեռ պահանջում են) օգտագործեմ: Մի օր դրա կարիքն եղավ, և ես մեքենայիս մեջ ընդամենը մեկ դիմակ գտա, որի վրա գրված էր՝ Օրհնյալ:

Ես նախընտրում եմ առանց գրառման դիմակներ դնել, նաև կարծում եմ, որ իմ գտածի վրայի գրառումը շատ է կիրառվում, բայց այլընտրանք չունեի և դրեցի այդ դիմակը: Քիչ էր մնում վրդովմունքս ցույց տայի ընդունարանի աշխատակցին, բայց հագելի զսպեցի ինձ հենց դիմակիս վրա գրված բառի պատճառով: Չէի ուզում կեղծավոր երևալ ու անհամբերություն ցուցաբերել մի անձի հանդեպ, որը փորձում էր ինչ-որ բարդ համակարգ բացատրել:

Թեև դիմակիս վրա գրված բառն ինձ հիշեցրեց Քրիստոսին իմ վկայությունը, Սբ. Գրքի խոսքերը պետք է սրտումս լինեն՝ որպես իսկական հիշեցում ուրիշների հետ համբերատար լինելու համար: Ինչպես Պողոսն է գրում կորնթացիներին.« Ակնհայտ է, որ դուք եք Քրիստոսի նամակը,....գրված ոչ թե թանաքով, այլ կենդանի Աստծու Հոգով, ոչ թե քարե տախտակների վրա, այլ սրտի մարմնեղեն տախտակների վրա» (Բ.Կորնթ. 3.3): Սուրբ Հոգին, որ «կենդանացնում է» (Հմ.6), կօգնի մեզ ապրելու «սեր, ուրախություն, խաղաղություն և համբերատարություն» (Գաղ. 5.22): Մենք իսկպես օրհնյալ մեր մեջ Նրա ներկայությամբ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հիսուս, օգնի՛ր ինձ, որ այսօր ում էլ որ հանդիպեմ, պատմեմ, թե ինչ է նշանակում ապրել Քեզ համար: Ամեն:

**Մեր խոսքերն ու գործերը ի՞նչ են ասում ուրիշներին: Ինչո՞ւ կարող ենք այսօր մեր արարքներով ներկայացնել Քրիստոսին:**

Բայց երբ մեր Փրկիչ Աստծու քաղցրությունը և մարդասիրությունը հայտնվեց, նա մեզ փրկեց: (Տիտ. 3. 4-5)

## **ԾԱՅՐԱՅԵՂ ԲԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ա**րագ սննդի կետի աշխատակից Քեյվին Ֆորդը քսանյոթ տարվա ընթացքում ոչ մի անգամ չէր բացակայել աշխատանքից: Որպես երկարամյա անբասիր ծառայության գնահատանք՝ համեստ նվեր էին պատրաստել նրա համար, որն ստանալիս Ֆորդը խոնարհ երախտագիտություն հայտնեց: Այդ մասին տեսանյութի հրապարակումից հետո հազարավոր մարդիկ, ի նշան նրա հանդեպ բարություն, սկսեցին գումար հավաքել: «Դա նման էր երազի, երազանքի իրականացման, երբ մեկ շաբաթում 250 հազար դոլար հավաքվեց», - արձագանքեց պարտաճանաչ մարդը:

Հուզայի աքսորված Հովաքին թագավորը նույնպես ծայրահեղ բարություն արժանացավ: Երեսուներոթ տարվա տարագրությունից հետո Բաբելոնի թագավորը «նրան հանեց բանտից, նրա հետ քաղցրությամբ խոսեց և նրա գահը Բաբելոնում եղող մյուս թագավորների աթոռից բարձր դրեց» (Եր. 52. 31-32): Հովաքինին տրվեց նոր պաշտոն, նոր հագուստ և նոր տուն: Ասել է, թե նրա նոր կյանքը լիովին ապահովվեց թագավորի կողմից:

Այս պատմությունը ցույց է տալիս, թե ինչ է տեղի ունենում հոգևորապես, երբ Հիսուսի մահվանն ու հարությունը հավատացողները ազատվում են Աստծուց իրենց օտարացումից: Նրանք Աստծո անսահման բարություն շնորհիվ խավարից ու մահից բերվում են լույսի ու կյանքի:

**Աղոթք** -Յայր, շնորհակալ եմ Քո ներողամտության համար: «Յիսուսը վճարեց այդ ամենը, ես պարտական եմ Նրան: Նրա շնորհիվ մեղքի բոսորագույն բիծը ճերմակեց»: Ամեն:

**Մարդկային բարության ո՞ր գործերն են հիշեցնում Աստծո բարության մասին: Ինչո՞ք ես դասասխանում Աստծո բարությանը, որը քեզ ողջունում է Իր ընձանիքում՝ հիմնվելով Տեղի Յիսուսի ասածի վրա:**

Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ: (Հռոմ. 8.31)

## **ԱՄԵՆ ԲԱՆ ԻՄ ԴԵՍ Է**

«Այս առավոտ մտածում էի, որ մեծ կարողություն ունեմ: Հիմա չգիտեմ՝ մեկ դուրս ունեմ, թե ոչ»,- այս խոսքերն ասել է ԱՄՆ-ի 18-րդ նախագահ Ուլիսես Գրանթը, երբ իր առևտրային գործընկերը շորթել էր նրա ամբողջ խնայողությունները: Դրանից ամիսներ անց Գրանթի մոտ քաղցկեղ ախտորոշվեց: Մտահոգված լինելով իր ընտանիքի կարիքները հոգալով՝ նա ընդունեց Մարկ Տվենի առաջարկը՝ հրատարակել իր հուշերը, որոնք ավարտեց մահից ընդամենը մեկ շաբաթ առաջ:

Աստվածաշունչը պատմում է դժվարությունների մեջ հայտնված մեկ այլ մարդու մասին: Հակոբը վստահ էր, որ «մի գիշատիչ գազան հոշոտել է իր որդի Հովսեփին» (Ծն. 37. 33): Մյուս որդուն՝ Շմավոնին բանտարկել էին օտար երկրում, և նա վախենում էր, որ Բենիամինին նույնպես կխլեն իրենից: Ու նա վհատված աղաղակեց.«Այս բոլորը ինձ վրա է գալիս» (42.36):

Բայց այդպես չէր: Հակոբը չգիտեր, որ Հովսեփը ողջ և առողջ է, որ Աստված «վարագույրների հետևում» աշխատում էր վերականգնելու իր ընտանիքը: Այս պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է Նրան վստահել, նույնիսկ այն պարագաներում, երբ Նրա ձեռքը չի երևում:

Գրանթի «Հուշեր» գիրքը մեծ հաջողություն ունեցավ, և նրա ընտանիքը ապահովվեց: Մեր տեսլականը սահմանափակ է, Աստծունը՝ ոչ: Իսկ Հիսուսը, որպես հույսի արտահայտություն, ասել է. «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ» (Հռոմ. 8.31): Թո՛ղ որ այսօր վստահենք Նրան:

**Աղոթք** - Գեղեցիկ Փրկիչ, օգնի՛ր ինձ, որ հայացքս Քե՛զ վրա պահեմ, և ոչ իմ խնդիրների: Դու միշտ հավատարիմ ես: Ամեն:

**Հավասանք, որ Աստված մեր դժվարություններից հետո բարիք կբերի: Մեզ մնում է վստահել Իրեն:**

Ամեն ինչն էլ վնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսին գերազանց ճանաչելու համեմատ:....որպեսզի Քրիստոսին շահեմ և նրա մեջ գտնվեմ: (Փիլ. 3. 8-9)

## **ԵՍ ՈՉ ՄԵԿՆ ԵՄ: ԴՈ՞Ւ ՈՎ ԵՍ**

«**Ես ոչ մեկն եմ, դո՞ւ ով ես**», - բառերով սկսվող բանաստեղծությունն մեջ էմիլի Դիքոնսոնը զվարճալի մարտահրավեր է նետում այն բոլոր մարդկանց, որոնք ջանքեր են գործադրում «ինչ-որ մեկը» լինելու համար, իսկ ինքն ընտրում է երանելի անանունություններից մեկը: «Որքա՛ն տխուր է լինել ինչ-որ մեկը: Որքա՛ն տաղտկալի է, գորտի նման ամբողջ հունիսին հիանալ տիղմով»: Ինչ-որ մեկը լինելու անհրաժեշտությունից ազատվելու միջոց գտնելը ինչ-որ կերպ կրկնում է Պողոս առաքյալի վկայությունը: Տեր Հիսուսին հանդիպելուց առաջ նա ուներ Հիսուսին վկայողների տպավորիչ մի ցանկ, որոնք ակնհայտորեն «վստահություն ունեին մարմնի վրա» (Փիլ. 3.4):

Բայց Հիսուսի հետ հանդիպելը փոխեց ամեն ինչ: Երբ Պողոսը տեսավ, թե Քրիստոսի զոհաբերության սիրտ լույսի ներքո որքան կեղծ էին կրոնական հաջողությունները, խոստովանեց.«Ամեն ինչն էլ վնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսին գերազանց ճանաչելու համեմատ:.... որպեսզի Քրիստոսին շահեմ և նրա մեջ գտնվեմ» (Փիլ. 3. 8-9): Նրա միակ փառասիրությունն էր «ճանաչել Նրան և Նրա հարությունը, մասնակից լինել Նրա չարչարանքին, կերպարանակից՝ Նրա մահվանը» (Հմ.10): Իրականում տխուր բան է ինքնուրույն փորձել «ինչ-որ մեկը» դառնալ: Բայց ճանաչել Տեր Հիսուսին և մոռանալ իր անձը Նրա անձնվեր սիրտ և կյանքի մեջ, կնշանակի դարձյալ գտնել ինքներս մեզ (Հմ.9), լինել ազատ ու ամբողջական:

**Աղոթք** - Սիրող Հայր, շնորհակալ եմ, որ կարիք չունեմ «ինչ-որ մեկը լինելու» փորձեր անելու, որպեսզի սիրես ու ընդունես ինձ: Ամեն:

**Մեր մարդկային բնագոյով փորձում ենք հաջողություններ արձանագրել ու դառնալ «ինչ-որ մեկը»: Սակայն կարող ենք Քրիստոսի մեջ գտնել ինքներս մեզ՝ ազատվելով հոյաբանությունից ու ինքնագովությունից:**

Իր ողորմութիւնը չպակասեցրեց ողջերից ու մեռածներից: (Հռ. 2.20)

## **ՎԱՐԵԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ**

**Վ**ալերին վիժումից ամիսներ անց որոշեց ավելորդ իրերը վաճառել: Կողքի փողոցից արհեստավոր Ջերալդը որոշեց մանկասայլակը գնել: Իմանալով կնոջ կորստի մասին՝ Ջերալդը որոշեց Վալերիի համար մի հուշանվեր պատրաստել: Մեկ շաբաթ անց նա մի գեղեցիկ նստարան նվիրեց կնոջը: «Աշխարհում կան լավ մարդիկ, ահա՛ ապացույցը», - հուզված սասց Վալերին:

Հռուլթն ու Նոյեմին նույնպես մեծ կորուստ ունեցան: Նոյեմիի ամուսինն ու երկու որդիները մահացան, և այժմ նա ու իր այրի հարսը չունեին իրենց մասին հոգացողներ (Հռ. 1.1-5): Ծիշտ այդ պահին հայտնվեց Բոոսը: Երբ Հռուլթը գնաց արտ՝ հացահատիկի մնացորդ հավաքելու, արտի տերը՝ Բոոսը, տեսավ ու հետաքրքրվեց նրանով և իմանալով՝ ազնվորեն վարվեց (2. 5-9): Հռուլթը զարմացած հարցրեց. «Ինչի՞ց է, որ ես չնորհ եմ գտել քո աչքերի առաջ, չէ՞ որ ես մի օտար կին եմ» (Հմ.10): Նա պատասխանեց. «Ինձ պատմել են այն ամենը, ինչ քո մարդու մեռնելուց հետո դու արել ես սկեսուրիդ համար» (Հմ.11):

Հետո Բոոսն ամուսնացավ Հռուլթի հետ և հոգ տարավ Նոյեմիի մասին (Ելք 4): Նրանց ամուսնուծթյունից ծնվեց Դավիթի և Հիսուսի նախահայրը: Քանի որ Աստված Ջերալդին ու Բոոսին օգտագործեց ուրիշների վիշտը վերափոխելու համար, մեր միջոցով էլ կարող է բարուծթյուն ու կարեկցանք դրսևորել ցավի մեջ գտնվող ուրիշ մարդկանց հանդեպ

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմ քեզ, որ ցուցաբերելով մեծ կարեկցություն՝ Քո Որդուն ուղարկեցիր ինձ փրկելու: Ամեն:

**Ե՞րբ ես վերջին անգամ բարություն արել կամ սսացել: Ո՞րն է եղել արդյունքը:**

Նրանք, իսկույն իրենց ուռկանները թողնելով, գնացին նրա հետևից: (Մատթ. 4. 20)

## ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԸ

Համագումարների պալատի լույսերն անջատվեցին, հազարավոր համալսարանականներս խոնարհեցինք գլուխներս, և բանախոսը մեզ առաջնորդեց նվիրման աղոթքով: Երբ նա ողջունեց արտասահմանում միսիոներություն անելու կոչին հետևողներին, զգացի, որ իմ ընկերուհի Լիննեթը քաշեց աթոռը: Գիտեի, որ նա ուզում էր ապրել ու ծառայել Ֆիլիպիններում: Ես ոտքի կանգնելու մղում չէի զգում: Բայց երբ իմացա Միացյալ Նահանգների կարիքները, ես էլ ուզեցի Աստծո սերը բաժնեկցել իմ հարազատ երկրում: Տասը տարի անց Բրիտանիայի իմ հարեանների մեջ սկսեցի ծառայել Աստծուն: Պատկերացումներս փոխվեցին, մտավախություններ ունեի իմ հետագա կյանքի վերաբերյալ մինչև այն պահը, երբ հասկացա, որ Աստված ինձ հրավիրել է արկածախնդրություն, որը շատ տարբեր է իմ սպասածից: Հիսուսը հաճախ էր զարմացնում իրեն հանդիպողներին, ինչպես ձկնորսներին: Երբ Քրիստոսը նրանց տվեց մարդկանց որսորդ լինելու առաքելությունը, Պետրոսն ու Անդրեասն «իսկույն իրենց ուռկանները» (Մատթ. 4. 20)», իսկ Հակոբոսն ու Հովհաննեսը՝ «նավն ու իրենց հորը թողնելով գնացին նրա հետևից» (Հմ. 22): Նրանք Հիսուսի հետ մեկնեցին նոր արկածախնդրություն, վստահեցին Նրան՝ առանց իմանալու, թե ուր են գնում: Աստված, իհարկե, շատերին է կանչում Իրեն ծառայելու այնտեղ, որտեղ որ են: Անկախ նրանից, մնում ենք, թե գնում, մենք բոլորս էլ կարող ենք ակնկալությունամբ նայել Նրան, որպեսզի զարմացնի իր հրաշալի փորձառություններով և Տիրոջ համար ապրելու հնարավորություններով, այնպիսի ձևերով, որոնց մասին երբևէ չէինք կարող երագել անգամ:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հիսուս, եզակի ու զարմանալի ձևերով մարդկանց կանչում ես, որ հետևեն Քեզ: Սովորեցրո՛ւ ինձ ճանաչել Քո ծայնը և արձագանքել Քո կոչին: Ամեն:  
**Երբ դասնություններ լսեմք այն մասին, որ Աստված անընդհատ աշխատում է, կզարմացնի՞ դա մեզ: Ինչդե՞ս դե՞ս է դասասխանել:**

Մարդկանց լեզուն ոչ որ չի կարող հնազանդեցնել: (Դակ. 3. 8)

## **ԸՆԴՈՒՆԵԼ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ**

**Մ**ենք մտանք գոմ, որտեղ ընկերս՝ Միչելը, աղջկաս ճի վարել էր սովորեցնում: Նա ցույց տվեց, թե ինչպես պետք է սանձը դնել ձիու բերանը, ապա ականջների վրայով ձգելով՝ բացատրեց, թե որքան կարևոր է սանձը: Այն ձիավորին հնարավորություն է տալիս կառավարել ձիու արագությունն ու ուղղությունը:

Ձիու սանձը, ինչպես մարդու լեզուն, փոքր է, բայց շատ կարևոր: Երկուսն էլ մեծ ազդեցություն ունեն. սանձի դեպքում՝ ձիու ընթացքի, լեզվի դեպքում՝ մարդու խոսքերի վրա (Հակ. 3.3,5):

Մեր խոսքերը կարող են տարբեր ուղղություններով գնալ: «Նրանով օրհնում ենք Տիրոջը և Հորը, նրանով նաև անիծում ենք մարդկանց, որ Աստծո նմանությունը են ստեղծված (Հմ.9): Սուրբ Գիրքը զգուշացնում է, որ շատ դժվար է վերահսկել մեր խոսքերը, քանի որ բառերը բխում են մեր սրտից (Ղուկ. 6.45): Բարեբախտաբար, յուրաքանչյուր հավատացյալի մեջ բնակվող Աստծո Հոգին տալիս է համբերատարություն, բարություն և ինքնատիրապետում (աղ. 5.22-23): Երբ մենք համագործակցում ենք Հոգու հետ, փոխվում են մեր սրտերն ու խոսքերը: Հայհոյանքը փոխվում է գովքի, սուտն իր տեղը զիջում է ճշմարտությանը, քննադատությունը դառնում է խրախուսանք:

Լեզուն ընտելացնելը միայն ճիշտ բառեր ասելը չէ: Խոսքը Սուրբ Հոգու առաջնորդությունն ընդունելու մասին է, որպեսզի մեր խոսքերն առաջացնեն այն բարությունն ու քաջալերանքը, որ անհրաժեշտ է մեր աշխարհին:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, խնդրում եմ փոխի՛ր սիրտս, որպեսզի իմ խոսքերը քաջալերեն ուրիշներին և հարգեն Քեզ: Ամեն:

**Մեր խոսքերից երևում է մեր վերաբերմունքը: Սուրբ Հոգու հետ համագործակցությունը մեծադեպ կազդի մեր խոսքի վրա:**



Երանի՜ նրան, որ հավատաց, որովհետև կկատարվեն այն բաները, որոնք Տիրոջ կողմից ասվել են իրեն: (Պուկ.1.45)

## **ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ԽՈՍՏՈՒՄ**

**Ե**րբ երեխա էի, ամեն ամառ 200 կմ ճանապարհ էի անցնում մեկ շաբաթ վայելելու տատիկիս եւ պապիկիս ներկայությունը: Շատ ժամանակ պահանջվեց մինչև հասկանալս, թե ինչքան մեծ իմաստություն էի ամբարել իմ մեջ այս երկու սիրելի մարդկանց հետ հարաբերվելիս: Նրանց կյանքի փորձառությունն ու Աստծու հետ քայլելը այնպիսի հեռանկարներ էին բացել իմ առջև, որ իմ երիտասարդ միտքը չէր կարող պատկերացնել: Նրանց հետ Աստծու հավատարմության մասին խոսելը սովորեցրեց ինձ, որ Աստված վստահելի է և կատարում է իր յուրաքանչյուր խոստում: Հիսուսի մայր Մարիամը դեռահաս էր, երբ հրեշտակն այցելեց իրեն: Գաբրիելը բերել էր անհավանական ու ճնշող մի լուր, որը սակայն Մարիամն ընդունեց մեծագույն պատրաստակամությամբ (Ղուկ. 1. 38): Բայց Մարիամի այցելությունն իր տարեց ազգական Եղիսաբեթին, որը նույնպես հրաշագործ Հղիության մեջ էր (Սուրբ գրքերի որոշ հեղինակներ կարծում են, որ նա կլիներ 60 տարեկան), մխիթարեց նրան, քանի որ Եղիսաբեթը խանդավառությամբ հաստատեց Գաբրիելի խոսքերը, թե հենց Մարիամն է խոստացյալ Մեսիայի մայրը (Հմ. 39-45): Երբ աճում ու զարգանում ենք Քրիստոսով, ինչպես իմ տատն ու պապը, սովորում ենք, որ Աստված պահում է իր խոստումները: Նա կատարեց Եղիսաբեթին եւ նրա ամուսնուն՝ Զաքարիային զավակ պարգևելու խոստումը (Հմ. 57-58): Եվ այդ որդին՝ Հովհաննես Մկրտիչը, դարձավ հարյուրավոր տարիներ առաջ Աստծո տված այն խոստման նախաբանը, որը փոխում է մարդկության ընթացքը: Խոստացված Մեսիան՝ աշխարհի Փրկիչը, գալիս է (Մատթ. 1. 21-33):

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, շնորհակալ եմ վստահելի լինելուդ ու խոստումներիդ պահելուդ համար: Ամեն:

**Վստահե՞նք Հայր Ասծուն և ուրախանանք Նրա սված խոստումների համար, որոնք կատարվում են ըստ Իր ժամանակի:**

Ձեր մեջ ո՞վ է իմաստուն և խելացի, թող իր բարի վարքով ցույց տա հեզուքյամբ կատարված գործերը, որ իմաստություն է տալիս: (Գալ. 3. 13)

## **Ո՞Ր ԻՍԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ**

**2018-ի Սբ. Հարություն տոնից առաջ մի ահաբեկիչ մտավ շուկա, սպանեց երկու մարդու և պատանդ վերցրեց մի կնոջ: Երբ կնոջն ազատելու ջանքերը ձախողվեցին, ոստիկանը ահաբեկչին առաջարկեց ազատ արձակել կնոջն ու նրա փոխարեն իրեն պահել որպես պատանդ: Առաջարկը ցնցող էր, քանի որ դա հակասում էր ժողովրդական իմաստնությունը:**

Որեւէ մշակույթի «իմաստությունը» կարելի է իմանալ հայտնի մարդկանց մեջբերումներով, որոնք տեղադրվում են սոցիալական ցանցերում: Դրանցից մեկն ասում է. «Ամենամեծ արկածը քո երազների կյանքով ապրելն է»: Մեկ ուրիշը. «Նախ սիրի՛ր դու քեզ և մնացած ամեն բան իր տեղը կգտնի»: Կամ երրորդը. «Արա՛ այն, ինչ որ պետք է անես քեզ համար»: Եթե ոստիկանը հետևեր նման խորհուրդներին, ինքն իրեն կզներ առաջին տեղում և կփախչեր: Հակոբոս Առաքյալն ասում է, որ աշխարհի մեջ կա երկու տեսակի իմաստություն՝ «երկրային» և «երկնային»: Առաջինը դրսևորվում է եսասիրական փառասիրություններով և անկարգությունով (Հակ. 3. 14-16), երկրորդը՝ խոնարհությամբ, հնազանդությամբ և խաղաղությամբ (Հմ. 13, 17-18): Երկրային իմաստությունն ինքն իրեն դնում է առաջին տեղում, երկնայինը՝ մարդկանց սովորեցնում և տանում խոնարհ գործերի ճանապարհով (Հմ. 13): Ահաբեկիչն ընդունեց ոստիկանի առաջարկը: Պատանդին ազատեց, իսկ ոստիկանը զնդակահարվեց, և այդ Հարություն տոնին աշխարհն ակնատես եղավ, թե ինչպես մի անմեղ մարդ մեռավ ուրիշի համար:

Երկնային իմաստությունը տանում է խոնարհ գործերի, քանի որ ամեն բանից վեր դնում է Աստծուն (Առ. 9. 10):

**Աղոթք** - Ամենաիմաստուն Աստված, խնդրում եմ տո՛ւր ինձ այնպիսի իմաստություն, որը տանում է դեպի սիրով կատարված գործերի: Ամեն:

**Աեխարհը մեզ առաջարկում է աեխարհային «իմասություն»:**  
**Մեզ մնում է գնահատել և արժևորել առաջարկված իմաստությունը:**

Համբերի՛ր և սպասի՛ր Տիրոջը: (Սաղմոս 37.7)

## **ՀԱՆԴԱՐՏ ՄԱԱ**

**Ե**րբ տեղավորվեցի լողավազանում, մարմինս սկսեց հանգի՛ստ ծփալ ջրի երեսին, սենյակը մթնեց, իսկ մեղմ երաժշտությունը, որ հնչում էր, դադարեց: Կարդացել էի, որ ջրավազանները բուժիչ են, իջեցնում են ճնշումն ու թեթևացնում անհանգստությունը: Բայց սա իմ տեսածներից ոչ մեկին նման չէր: Ինձ թվում էր, թե աշխարհի քառսը դադարել է գոյություն ունենալ, և ես հստակ լսում եմ ներքին մտքերս: Այդ փորձառությունից դուրս եկա հավասարակշռված ու երիտասարդացած, հիշելով, որ լռության մեջ ուժ կա՛:

Մենք կարող ենք էլ ավելի հանգստանալ Աստծու լռության մեջ, որն էլ կթարմացնի մեր ուժը, կտա անհրաժեշտ իմաստություն, որպեսզի դիմազրավենք առօրյա մարտահրավերներին: Երբ հանդարտ ենք և կարողանում ենք լռեցնել աղմուկն ու հեռացնել մեր կյանքի շեղումները, Աստված զորացնում է մեզ, որպեսզի հստակ լսենք Նրա մեղմ ձայնը (Սաղմ. 37. 1):

Թեև զգայարանները հանգստացնելու սենյակները հանդարտություն ձևաբան բերելու միջոցներից մեկն են, սակայն Աստված առաջարկում է Իր հետ անարդել ժամանակ անցկացնելու ավելի պարզ միջոցը: Նա ասում է. «Երբ դու աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր դուռդ և ծածուկ աղոթի՛ր քո Հորը...» (Մատթ. 6. 6): Աստված կառաջնորդի մեր քայլերը և թույլ կտա, որ Իր արդարության պայծառությունը փայլի մեր միջոցով, եթե կյանքի մարտահրավերների պատասխանները փնտրենք Աստծո ներկայություն լռության մեջ (Սաղմ. 37. 5-6):

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, գիտեմ, որ կյանքի արագընթաց վազքի մեջ եմ: Օգնի՛ր, որ հանդարտվեմ և Քեզ հետ ժամանակ անցկացնելու հարմար տեղ գտնեմ: Ամեն:

**Որոշ բաներ խլում են մեր ժամանակը, սակայն կարող ենք շատ քիչ հասկացնել Աստծո հետ հանդարտ ժամանակ անցկացնելու համար:**

Նա պաշտպանում է որբի ու որբեայրու իրավունքը, որ սիրում է պանդուխտին: (Երկ. Օրենք 10. 18)

### **ՈՂՋՈՒՆԵԼ ՕՏԱՐԱԿԱՆԻՆ**

**Ե**րբ ուկրահնացի հազարավոր կանայք ու երեխաներ, պատերազմից փախչելով, հասան Բեռլինի երկաթուղային կայարան, զարմացան՝ տեսնելով գերմանացիներին, որոնք ձեռքի պաստառներով ապաստան էին առաջարկում իրենց բնակարաններում: «Կարող ենք հյուրընկալել երկու հոգու», - գրված էր պաստառներից մեկի վրա: «Կարող եմ տրամադրել մեկ սենյակ», - գրված էր մեկ ուրիշի վրա: Երբ մի կնոջ հարցրին, թե ինչո՞ւ է այդպիսի առաջարկ անում անձանոթներին, նա պատասխանեց, որ երբ իր մայրը փախչում էր նացիստներից, ապաստանի կարիք ուներ, և ինքն էլ ցանկանում է օգնել նման կարիք ունեցող ուրիշներին: Երկրորդ Օրենքի գրքում, Աստված խրայելիցիներին կոչ է անում հոգ տանել նրանց մասին, որոնք հեռու են իրենց հայրենիքից: Ինչո՞ւ, որովհետև Աստված որբի, այրիի և օտարականի պաշտպանն է (Հմ. 10. 18) և խրայելիցիները գիտեին, թե ինչ են զգում խոցելիները. «...որովհետև դուք էլ էիք պանդուխտ եգիպտացիների երկրում» (Հմ. 10.19): Կարեկցության հոգին պետք է դրդեր խնամելու եկվորներին: Բայց կա նաև այս երևույթի հակառակ կողմը: Երբ սարեփթացի այրին իր տան մեջ ընդունեց օտարազգի Եղիային, ինքն օրհնվեց (Գ.Թագ. 17. 9-24): Աստված հաճախ է օգտագործում հյուրընկալութունը ոչ միայն հյուրին, այլև հյուրընկալին օրհնելու համար: Օտարականներին տան մեջ ընդունելը դժվար է, բայց գերմանացի ընտանիքները եղան օրհնության իսկական շահառուներ: Երբ խոցելի խմբերի կարիքներին մենք էլ պատասխանենք Աստծու կարեկցությամբ, ապա կզարմանանք այն պարզեաների համար, որոնք Աստված կտա մեզ՝ նրանց միջոցով:

**Աղոթք** -Սիրելի՛ Յայր, տո՛ւր ինձ քո սրտի չափ մի սիրտ, որ այրուն, որբին և խոցելիին սիրով ընդունեն: Ամեն:

**Բարի Աստված հոգում է այրիների, որբերի ու օտարականների կարիքները: Եկե՛ք այս շաբաթ մե՛նք էլ «ողջունենք» որեւէ օտարականի:**

Հանդարտ մնացեք և ճանաչե՛ք, որ ես եմ Աստվածը: (Սաղմոս 46. 10)

## **ԲԱ՛Յ ԹՈՂ, ԼՔԻ՛Ր**

**Գ**իթի աշխատած գրախանութի տերը երկու օր է, բացակայում էր: Նա գտնվում էր արձակուրդում, և նրա օգնական Գիթը խուճապի էր մատնվել: Թեև ամեն բան սահուն էր ընթանում, բայց նա անհանգիստ էր՝ մտածելով, թե չպետք է կարողանա վերահսկել խանութի գործերը: Անհանգստությունից էլ փորձեց լավագույնն անել գործը լիարժեք տնօրինելու համար: «Հանգստացի՛ր»,<sup>-</sup> վերջապես ասաց գործատերը տեսահեռախոսային կապի ժամանակ:<sup>-</sup>Քո անելիքը իմ հրահանգներին հետևելն է, որոնք ուղարկում եմ ամենօրյա նամակներով: Մի՛ մտահոգվիր, Գիթ: Պատասխանատուն ես եմ, և ոչ թե դու»: Այլ ազգերի հետ հակամարտելիս Իսրայելը Աստծուց այսպիսի խոսք ստացավ. «Հանդարտ մնացեք» (Սաղմ. 46.10): Ըստ էություն Աստված նրանց ասաց. «Դադարեցրե՛ք տվայտանքների մեջ ընկնել, հետևե՛ք իմ ասածներին: Ես կպայքարեմ ձեզ համար»: Իսրայելի ժողովրդին չէր ասվում, որ կրավորական կամ ինքնագոհ լինեն, այլ հանդարտ մնան, հավատարմություն մեծանդամ Աստծուն՝ միաժամանակ իրավիճակի հսկողությունը և իրենց ջանքերի արդյունքները զիջելով ու թողնելով Նրան: Մենք կոչված ենք նույնն անելու: Եվ մենք կարող ենք դա անել, քանի որ Աստված, որին վստահում ենք, ինքնիշխան է ամբողջ աշխարհի վրա: Եթե Աստված կարողանում է Իր ձայնը լսել տալ, և եթե Նա կարողանում է «դադարեցնել պատերազմները, փշրել աղեղները...», ապա մենք անկասկած կարող ենք վստահել Նրա ապավինությունն ու գործությունը (հմ 1): Մեր կյանքի հանդեպ վերահսկողության բեռը՝ մեզ վրա չէ՛, այլ Աստծու:

**Աղոթք** - Ամենակարող Աստված, Դու գիտես, թե ինչն է ինձ անհանգստացնում: Չգիտեմ՝ ինչպես վարվել, բայց Դու գիտես:

Օգնի՛ր ինձ, հանձնվել քո առաջնորդությանը: Ամեն:

**Մեր վերահսկողությունից դուրս իրավիճակները թողնենք Աստծուն, որովհետև նա ամեն բանի կարող Աստվածն է:**

Աստված հին ժամանակներում...խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով, այս վերջին օրերին մեզ հետ խոսեց Որդու միջոցով: (Եբր. 1.1-2)

## ՍԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՊԱՏԳԱՍԸ

**Բ**եյսբուրի 1906 թ.-ի աշխարհի առաջնությունը մարզական թղթակից Հիու Ֆուլլերթը մի խորամանկ կանխատեսում արեց: Նա ասաց, որ «Զիկագո կորյուններ»-ը, որից հաղթանակ էին ակնկալում, պետք է պարտվեն առաջին և երրորդ հանդիպումներում և հաղթեն միայն երկրորդում: Օ՛, իսկ չորրորդին պետք է անձրև տեղա: Հիուի բոլոր կանխատեսումները կատարվեցին: Հետո՝ 1919-ին, Հիուի վերլուծական հատություններն իրեն հուշեցին, որ որոշ խաղացողներ միտումնավոր կպարտվեն աշխարհի մրցաշարի խաղերում: Հիուն կասկածեց, որ նրանց կաշառել են խաղամոլները: Մարդիկ ծաղրեցին նրան: Բայց Հիուն կրկին ճիշտ էր: Հիուն մարզարե էր: Նա պարզապես մի իմաստուն էր, որն ուսումնասիրում էր փաստերն ու ապացույցները: Երեմիան իսկական մարզարե էր: Նրա մարզարեությունները միշտ իրականանում էին: Եզան լուծ հագած Երեմիան ասաց Հուզայի ժողովրդին, որ հանձնվեն բաբելոնացիներին և ապրեն (Եբ. 27. 2,12):

Կեղծ մարզարե Անանիան հակադարձեց Երեմիային և կոտրեց լուծը (28. 2-4, 10): Երեմիան ասաց. «Լսի՛ր, Անա՛նիա, քեզ Տերը չի ուղարկել» և ավելացրեց «այս տարի դու պիտի մեռնես» (Հմ. 15-16): Երկու ամիս հետո Անանիան մեռավ (Հմ. 17): Նոր կտակարանը մեզ ասում է. «Աստված հին ժամանակներում... խոսեց մեր հայրերի հետ մարզարեների միջոցով, այս վերջին օրերին մեզ հետ խոսեց Որդու միջոցով» (Եբր. 1. 1-2): Հիսուսի կյանքի, մահվան և հարություն, ինչպես նաև Սուրբ գրությունների ու Սուրբ Հոգու առաջնորդությունը Աստծու ճշմարտությունը շարունակում է մեզ համար ուղեցույց լինել:

**Աղոթք** - Հայր, այսօր մեծ հարցեր ունեն և կարիք ունեն Հոգու առաջնորդությամբ՝ Քո ճշմարտությունը հասկանալու համար: Օգնի՛ր, որ վստահեմ Քեզ այն բաներում, որոնք չեն կարողանում տեսնել: Ամեն:

**Մեծ հարցերը խանգարում են մեզ: Կարող ենք նրանց մասին ավելին իմանալ, եթե հեկեկենք Նրա ցուցումներին:**

Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ վերափոխվեք ձեր մտքի նորոգությամբ: (Զոռմ. 12. 2)

## **ԾԻՇՏ ԶԻՍՈՒՄԻ ՆՄԱՆ**

**2**014-ին կենսաբանները Ֆիլիպիններում բռնեցին մի գույգ նարնջագույն գաճաճ ծովածիբեր: Ծովային այս արարածները, ինչպես նաև նրանց բնակության վայր նարնջագույն բուստի խուլթից մի մաս նրանք տարան Կալիֆոռնիա՝ Սան Ֆրանցիսկոյի գիտությունների ակադեմիա: Գիտնականներն ուզում էին պարզել, թե արդյոք գաճաճ ծովածիբերը ծնվել են իրենց ծնողների<sup>o</sup>, թե<sup>o</sup> շրջակա միջավայրի գույնին համապատասխան: Երբ գաճաճ ծովածիբերը ծնեցին սրճագույն ձագեր, գիտնականներն ավագանի մեջ տեղադրեցին մանուշակագույն խուլթեր: Ձագերը, որոնց ծնողները նարնջագույն էին, փոխեցին իրենց գույնը՝ համապատասխանելով մանուշակագույն խուլթերին: Բնությանմբ դյուրաբեկ լինելու պատճառով, նրանց գոյատևումը կախված է իրենց շրջապատող միջավայրին ձուլվելու՝ Աստծու տված կարողությունից: Ձուլումը բնության մեջ պաշտպանվողական օգտակար հատկություն է: Բայց Աստված հրավիրում է բոլորին փրկություն ստանալու և աշխարհին ցույց տալու, թե ինչպես ապրել: Հիսուսին հավատացողներին Պողոս առաքյալը հորդորում է, որ պատվեն Աստծուն իրենց կյանքի բոլոր ոլորտներում, պաշտեն Նրան և իրենց մարմինները մատուցեն, որպես «կենդանի զոհ» (Հռոմ. 12.1): Երբ մեզքի պատճառով դառնում ենք դյուրաբեկ, որպես հավատացյալներ՝ մեր հոգևոր առողջությունը կախված է Սուրբ Հոգուց: Այն «նորոգում» է մեր միտքը և զորացնում մեզ՝ խուսափելու Աստծուն մերժող և մեղքը փառավորող «այս աշխարհին» նմանվելուց: (Հմ. 2): Միախառնվել այս աշխարհին՝ նշանակում է ապրել սուրբ գրություններին հակառակ: Սակայն Սուրբ Հոգու գործընթացում կարող ենք նմանվել և սիրել ճիշտ Հիսուս Քրիստոսի պես:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, խնդրում եմ ամեն օր ինձ ավելի նմանեցնես Զիսուսին: Ամեն:

**Կարևոր է չհամակերպվել աշխարհի հետ: Ուսի դիմենք Ասծուն, որ մեզ վերափոխի մեր մտքի նորոգությամբ:**

Ի՞նչ ես ուզում, անեմ քեզ համար: (Պուկ. 18. 41)

### **ՈՒՆԵ՞Ս ՈՐԵՎԷ ՅԱՐՅ**

**Է** նը նախնական զննություն համար գնացել էր իր վաղեմի ծանոթ վիրաբույժի մոտ: Երբ բժիշկը հարցրեց.«Որևէ հարց ունե՞ս», նա պատասխանեց.«Այո՛, անցյալ շաբաթ գնացե՞լ ես եկեղեցի»: Պարզ է, որ հարցն ուղղակի հավատի մասին խոսակցություն սկսելու նպատակ ունենր:

Բժիշկը եկեղեցական կյանքի մեծ փորձառություն չունենր, բայց իր հոգևոր գիտակցություն մեջ հետ էլ չէր գնացել: Եվ էննի հարցադրման առիթով սկսեց նորովի արժևորել Հիսուսի ու եկեղեցու դերն իր կյանքում: Իսկ երբ էննը նրան նվիրեց մականգրված Աստվածաշունչ, նա արցունքներով ընդունեց այն:

Երբեմն վախենում ենք առճակատումից, կամ չենք ուզում առաջինը խոսել մեր հավատի մասին: Այդպիսի դեպքերում հարց տալը հիանալի միջոց կարող է դառնալ Տեր Հիսուսի մասին վկայելու համար:

Անկասկած, Հիսուսը շատ հարցեր է տվել Աստծուն, որը գիտեր ամեն բան: Թեև մենք չգիտենք Նրա նպատակները, բայց պարզ է, որ Նրա հարցերը զրդել են արձագանքել ուրիշներին: Նա իր աշակերտ Անդրեասին հարցնում է.«Ի՞նչ ես ուզում» (Հովհ.1.38), կույր Բարդուղիմեոսին՝«Ի՞նչ ես ուզում, անեմ քեզ համար» (Մարկ. 10.51, Ղուկ. 18. 41): Անդամալույծին հարցնում է. «Ուզո՞ւմ ես առողջանալ» (Հովհ. 5.6): Եվ այդ հարցերից հետո նրանցից յուրաքանչյուրի համար կատարվում են փոփոխություններ: Եթե ուզում ես մոտենալ մեկին ու խոսել հավատքի մասին, խնդրի՛ր Աստծուն, որ քեզ օգնի ճիշտ հարցեր ձևակերպել:

**Աղոթք** - Սիրելի՛ Հիսուս, խնդրում եմ օգնի՛ր ինձ, որ իմ հարցերով կարողանամ մարդկանց փոխել: Ամեն:

**Հարցերը կարող են ավելի լավ խոսակցություն սկսել, քան ուղղակի հայտարարությունները: Ի՞նչ հարց կարելի է տալ այն մարդկանց, որոնք հոգևոր օրհնության կարիք ունեն:**





Քո եղբայր Ահարոնի համար սուրբ զգեստներ պատրաստիր փառքի և պատվի համար: (ԵԼՔ 28.2)

## **ԿԱՐՄԻՐ ԶԳԵՍՏԻ ԾՐԱԳԻՐԸ**

**Կ**արմիր զգեստի ծրագիրը, որ մտահղացել է բրիտանացի արվեստագետ Կրիստի Մքլաուտը, դարձել է թանգարանների և պատկերասրահների կարևոր պատկերամուշակներից: Տասներեք տարի ութսունչորս զինեզույն մետաքսի կտորներ չընկնի ամբողջ աշխարհով, որպեսզի երեք հարյուր կանայք և մի քանի տղամարդիկ ասեղնագործեն դրանց վրա: Հետո կտորները վերածվեցին զգեստի՝ պատմելով յուրաքանչյուր արվեստագետի պատմությունները, որոնցից շատերն արդեն չկային կամ աղքատացել էին: Կարմիր զգեստի նման, Ահարոնի և նրա շառավիղների հագած զգեստները պատրաստված էին «իմաստուն միտք» (ԵԼՔ 28. 3) ունեցող բազմաթիվ մարդկանց կողմից: Քահանայական զգեստի վերաբերյալ Աստծու հրահանգները ներառում են մանրամասնություններ, որոնք պատմում են Իսրայելի հավաքական պատմությունը, ներառյալ՝ ցեղերի անունների փորագրումը եղեգնաքարերի վրա, որոնք պետք է դրվեին քահանաների ուսերին «Տիրոջ առաջ հիշատակի համար» (Հմ. 12): Պատմուճանները, ասեղնագործ գոտիները և գլխարկները քահանաներին «փառք ու շքեղություն» տվին, մինչ նրանք ծառայում էին Աստծուն և ժողովրդին առաջնորդում աստվածապաշտության (Հմ. 40): Որպես Հիսուսին հավատացողներ՝ մենք հավատացյալների քահանայություն ենք, Աստծուն ծառայող, մարդկանց երկրպագության առաջնորդող (Ա. Պետ. 2. 4-5, 9) և Հիսուսը մեր քահանայապետն է (Եբր. 4.14): Թեև մենք չենք հագնում քահանայական զգեստներ, բայց Աստծու օգնությամբ հագնում ենք «գույթ, ողորմություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն» (Կող. 3. 12):

**Աղոթք** - Հիսուս, խնդրում եմ հագցրո՛ւ ինձ կարեկցություն, բարություն, խոնարհություն, հեզություն և համբերատարություն: Ամեն:

**Կողոսացիների նամակի մեջ Պողոսի հիշած ո՞ր դարձանների կարիքն ունես այսօր: Ասված ի՞նչ ձևերով է քեզ դասրասել Իրեն ծառայելու համար:**

Եվ սրանք բոլորը հավատով վկայութուն ստացան: (Եբր. 11. 39)

## **ՀԱՎԱՏԱՐԻՄ, ԲԱՅՑ ՈՉ ՄՈՒԱՑՎԱԾ**

**Ե**րբ դեռ նոր էր մեծանում, Շոնը գրեթե չգիտեր, թե ինչ է նշանակում ընտանիք ունենալ: Նրա մայրը մահացել էր, իսկ հայրը երբեմն էր տանը լինում: Նա հաճախ մենակ ու լռքոված էր գգում իրեն: Սակայն մոտակայքում ապրող մի գուլգ օգնության ձեռք մեկնեց նրան: Ամուսինները Շոնին տարան իրենց տուն և իրենց երեխաներին ստիպեցին դառնալու Շոնի «մեծ եղբայրն» ու «մեծ քույրը», ինչն էլ Շոնին վստահեցրեց, որ նրանք իրեն սիրում են: Նրանք Շոնին տարան եկեղեցի, որտեղ նա հիմա ինքնավստահ երիտասարդ է և նույնիսկ առաջնորդ: Թեև գուլգը շատ կարևոր դեր խաղաց Շոնի կյանքը հեղաշրջելու գործում, բայց նրանց արածը լայնորեն հայտնի չէ եկեղեցու մեծամասնությանը: Բայց Աստված գիտի, և ես հավատում եմ, որ նրանց հավատարմությունը մի օր կգնահատվի և ինչպես գրված է Սուրբ Գրքում «Հավատի հերոսները» գնահատվեցին: Եբրայեցիների 11-րդ գլուխն սկսվում է մեծ անուններով, բայց շարունակում է ներկայացնել հավատքի այլ մարդկանց, որոնց հետ երբեք չենք կարող ծանոթանալ: Սակայն նրանք գնահատվեցին «իրենց հավատքի» համար (Հմ. 39): Եվ նրանց «արժանի չէր աշխարհը» (Հմ. 38):

Նույնիսկ երբ մեր բարություն գործերն աննկատ են մարդկանցից, Աստված տեսնում է և գիտի: Այն, ինչ անում ենք, կարող է թվալ մի փոքր բարի գործ կամ քաջալերող խոսք. բայց Աստված կարող է դրանք օգտագործել փառք բերելու իր անվանը, իր ժամանկին և իր ձևով: Նա գիտի, եթե նույնիսկ ուրիշները չգիտեն:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, խնդրում եմ, ցույց տուր, թե ինչ բարի գործեր ես պատրաստել ինձ համար, որ ես անեմ: Տո՛ւր ինձ հավատք, որ անեմ այդ բոլորը՝ միայն Քեզ համար: Ամեն:

**Ի՞նչ դարձ բան կարող ես անել մեկի համար: Հիշե՛նք, որ Աստված գիտի մեր սիրքը և մեր գործերը:**

Ասացին. «Վարդապետ, ուզում ենք, որ այն, ինչ քեզանից խնդրելու ենք, անես մեզ համար» (Մարկ. 10.35):

## **ՄԵՆՔ ՄԵՐ ՈՏՔԻՆ ՀԱՐՎԱԾԵԼՈՎ**

**2** 021-ին մի ճարտարագետ ցանկություն ուներ իր նետն արձակել 500 մետրից ավելի, այնքան, որքան դեռ էջր հաջողվել որևէ մեկին: Ադե հարթակի վրա պառկած՝ ոտքի ինքնաշեն աղեղով պատրաստվեց արձակել նետը՝ այն հույսով, որ այն կբարձրանա ավելի քան մեկ կիլոմետր և կապահովի նոր մրցանիչ: Խոր շունչ քաշելով՝ նա արձակեց նետը, բայց այն մեկ ոտնաչափ էլ չբարձրացավ, այլ մխրճվեց իր ոտքի մեջ՝ անասելի ցավ պատճառելով:

Երբեմն մենք էլ, մոլորված փառասիրությամբ, կարող ենք հարվածել «մեր ոտքին»: Հակոբոսն ու Հովհաննեսը գիտեին, թե ի՞նչ է նշանակում փառասիրությունից դրդված բարի բան փնտրել, բայց սխալ շարժառիթներով: Նրանք խնդրեցին Հիսուսին և ասացին. «Մեզ շնորհ արա, որ քո փառքի մեջ մեկս քո աջ կողմում նստի, մյուսս՝ քո ձախ կողմում» (Մարկ. 10. 37): Հիսուսն ասաց իր աշակերտներին, որ դուք «տասներկու աթոռների վրա կնստեք՝ Իսրայելի տասներկու ցեղերին դատելու» (Մատթ. 19. 28): Ուստի հեշտ է հասկանալ, թե նրանք ինչու այս խնդրանքն արեցին: Խնդիրն այն է, որ աշակերտները եսասիրությամբ փնտրում էին իրենց բարձր դիրքն ու գորությունը՝ Քրիստոսի փառքի մեջ: Հիսուսը նրանց ասաց, որ իրենց փառասիրությունն անտեղի է (Մարկ. 10. 38) և «Ձեր մեջ այդպես չպետք է լինի, այլ ձեզանից ով ուզում է մեծ լինել, պետք է ձեր սպասավորը լինի» (Հմ. 43): Երբ ուզում ենք բարի ու մեծ գործեր անել Հիսուսի համար. խնդրենք Նրա իմաստությունն ու առաջնորդությունը՝ խոնարհաբար ուրիշներին ծառայելու համար:

**Աղոթք** -Յիսուս, ցանկանում եմ մեծ բաներ անել Քեզ համար, բայց ճիշտ շարժառիթներով: Ամեն:

**Փառասիրությունը կարող է լավ կամ վատ լինել: Աժխատենք, որ փառասիրության մարմաջը Յիսուսի նման ծառայելու փառասիրության վերածվի:**

Քրիստոսը նրան ասաց. «Ոչ էլ ես եմ քեզ դատապարտում. զնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր»։ (Քրիստոսի 8.11)

## **ԱՍՏՎԱԾ ԾԱԾԿՈՒՄ Է ՄԵՐ ՄԵՂՔԸ**

**1** 950-ական թվականներին մի միայնակ մայր իր ընտանիքին օգնելու համար սկսեց մեքենագրուհի աշխատել։ Սակայն հարցն այն էր, որ նա այդ գործն այնքան էլ լավ չգիտեր, սխալներ էր անում։ Եվ իր սխալները թաքցնելու համար միջոց փնտրելով՝ ստեղծեց «հեղուկ թուղթ» (Liquid Paper) կոչվածը։ Այդ սպիտակ հեղուկով ծածկվում են մեքենագրական սխալները, իսկ չորանալուց հետո նույն տեղում գրվում է ճիշտը։

Հիսուսը մեզ առաջարկում է մեղքի դեմ պայքարելու ավելի հզոր ու կարևոր մի միջոց։ Ոչ թե ծածկույթ, այլ ամբողջական ներում։ Դրա լավագույն օրինակը տեսնում ենք Հովհաննու 8-րդ գլխի սկզբում՝ շնացող կնոջ պատմության մեջ (հմ. 3-4)։ Օրենքի պահապանները պահանջում են, որ Հիսուսը պատժի կնոջը։ Իսկ օրենքը պահանջում էր, որ նա քարկոծվի։ Հիսուսը, պարզապես հիշեցրեց, որ բոլորն են մեղք գործում (տե՛ս Հռոմ. 3. 23) և առաջարկեց. «Ձեզանից ով անմեղ է, թող առաջինը նա՛ քար գցի դրա վրա» (Հովհ. 8.7)։ Ոչ ոք քար չնետեց։

Հիսուսը շնացող կնոջը մի նոր սկիզբ առաջարկելով՝ ասաց. «Ոչ էլ ես եմ քեզ դատապարտում. զնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր» (հմ.11)։

Այսինքն՝ Քրիստոսը հարցին լուծում տվեց՝ ներելով կնոջ մեղքը և «մեքենագրելով» նոր ապրելակերպ։ Այդ նույն առաջարկը Նրա շնորհիվ մեզ էլ է հասնում։

**Աղոթք** - Քրիստո՛ս, շնորհակալ եմ, որ իմ մեղքերից մաքրեցիր ինձ։ Օգնիր ինձ, որ ապրեմ Քեզ հետ՝ նորոգված կյանքով։ Ամեն։

**Քրիստոսն Իր ներումով մեր կյանքի նոր դասնությունն է արձանագրում ու հրավիրում նոր վերաբերմունք ունենալ ուրիշների հանդեպ։**

Առաջվա նեղությունները մոռացվել են,....ահա ես ստեղծում եմ նոր երկինք և նոր երկիր: (Ես. 65. 16-17)

## **ԳԵՂԵՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ**

Հայտնի նկարիչ Մակոտո Ֆուջիմուրան իր «Արվեստ և Հարարման աստվածաբանություն» գրքում նկարագրում է Կինցուգի հին ճապոնական արվեստի ձևը: Դրա էությունն այն է, որ արվեստագետը կոտրված կավե անոթների բեկորները իրար է միացնում ջնարակով ու փոքրիկ ոսկե ձողիկներով: Ֆուջիմուրան գրում է.«Կինցուգին ոչ միայն շտկում կամ նորոգում է կոտրված անոթը, այլև այն դարձնում է ավելի գեղեցիկ, քան նախկինում է եղել»: Դարեր առաջ զորավարներից մեկի սիրելի գավաթը նորոգելու նպատակով կիրառված այս եղանակը ժամանակի ընթացքում դարձել է արվեստի շատ գնահատելի ձև: Եսայի մարգարեն նկարագրում է, որ Աստված հմտորեն նման վերանորոգումներ է իրականացնում աշխարհի համար: Թեև մենք կոտրված ենք մեր ապստամբություն պատճառով ու ջարդված մեր եսասիրությունից, բայց Աստված խոստանում է «ստեղծել նոր երկինք ու նոր երկիր» (65.17): Նա ծրագրում է ոչ թե նորոգել հին աշխարհը, այլ ամբողջովին նորացնել և մեր ավերակներն ու նորաձևությունը տանել թարմությունամբ ու գեղեցկությունամբ փայլող աշխարհին: Այդ նոր ստեղծագործությունը այնքան շլացուցիչ գեղեցկություն կունենա, որ «առաջվա նեղությունները կմոռացվեն,....նախկին բաները չպիտի հիշվեն ու մտաբերվեն» (Հմ.16-17): Այս նոր արարչությունամբ Աստված չի պայքարի մեր սխալները ծածկելու համար, այլ ընդհակառակը՝ Իր ստեղծագործական ուժով տգեղ բաները կգեղեցկացնի, ավերվածները կշինի: Ուսումնասիրելով մեր փշրված կյանքը՝ պետք չէ հուսահատվել: Աստված աշխատում է Իր գեղեցիկ վերանորոգման վրա:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, խնդրում եմ վերականգնի՛ր ինձ և նորոգի՛ր մեր աշխարհը: Ամեն:

**Սեր կյանքում շատ բաներ կան, որ նորոգման կարիք ունեն:** Այդ «նոր ստեղծագործության» դասկերացումը հույս է ներհնում:

Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Գոգին, որին Գայրն ուղարկելու է իմ անունով, նա ամեն բան ձեզ կուսուցանի: (Գովհ. 14. 26)

## **ԲՈԼՈՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ**

**Դ**եյլ էրնհարթ կրտսերը նկարագրում է այն սոսկալի պահը, երբ ինքը հասկացավ, որ հայրը չկա: Մրցարշավորդ Դեյլ էրնհարթ Ավագը գոհվել էր Դայթոնա- 500 մրցումների ավարտին՝ ավտովթարից: Մրցումներին մասնակցում էր նաև որդին, և հիմա նա աստիճանաբար ընկալում էր կորստյան մեծությունն ու իր հետագա անելիքները: Նա բացատրում էր, որ հոր ներկայությունն իր համար եղել է ապահովության, մշտապես կյանքի բոլոր հարցերի պատասխաններն իմանալու աղբյուր:

Հիսուսի աշակերտները սովորել էին, որ հարցերի պատասխանների համար պիտի իրեն դիմեին: Եվ հիմա՝ իր խաչելության նախօրյակին նա վստահեցրեց, որ նրանց մենակ չի թողնելու: Հիսուսն ասաց. «Ես Հորը կխնդրեմ, և ձեզ ուրիշ Մխիթարիչ կտա, որպեսզի հավիտյան ձեզ հետ լինի... ճշմարտության Հոգին» (Հովհ. 14. 16-17):

Հիսուսն այդ մխիթարությունը տրամադրեց բոլոր նրանց, ովքեր հավատում են իրեն: Նա ասաց. «Եթե մեկն ինձ սիրում է, իմ խոսքը կպահի: Եվ իմ Հայրը կսիրի նրան, և նրա մոտ կգանք ու բնակություն կհաստատենք նրա մոտ» (Հմ. 23):

Քրիստոսին հետևողներն իրենց մեջ ունեն՝ Հոգին, որ սովորեցնում է «ամեն ինչ» և հիշեցնում այն ամենը, ինչ ուսուցանել է Հիսուսը (Հմ. 26): Մենք չունենք բոլոր պատասխանները, բայց ունենք նրա Հոգին:

**Աղոթք** - Երկնավոր Գայր, օգնի՛ր ինձ, որ որոնեմ Քո պատասխանները, որոնց կարիքն ունեմ և լիովին վստահեմ Քեզ իրական խաղաղություն գտնելու համար: Ամեն:

**Շահ հարցեր կարող են մեզ խանգարել ու նեղություն  
ղասճառել, սակայն դրանց մեջ մեզ կառաջնորդի  
ձե՛սնություն Գոգին՝ Սուրբ Գոգին:**

Հագե՛ք գուրք: (Կող. 3.12)

## ԿԱՐԵԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐԱՐՔՆԵՐՈՎ

**Ն**ստարան շինելը *Ջեյմս Ուարրենի* գործը չէր: Նա դրանով սկսեց զբաղվել, երբ մի օր տեսավ, որ կանգառում ավտոբուսի սպասող կինը նստել էր գետնին: Մտածելով, որ դա անպատվաբեր է, քսանութ տարեկան երիտասարդը գտավ փայտի կտորներ, նստարան շինեց և տեղադրեց կանգառում: Այն շատ արագ կիրառություն գտավ: Տեսնելով, որ շրջանի ինը հազար կանգառներից շատերն ունեն այդպիսի նստարանի կարիք՝ *Ջեյմսը* ևս մի քանիսը պատրաստեց, դրեց կանգառներում ու վրան գրեց.«Բարի՛ եղիր»: Նրա նպատակն էր մարդկանց կյանքը մի քիչ ավելի լավ դարձնել: Այդպիսի արարքներ կատարելու գլխավոր նախապայմանը կարեկցությունն է, գթասրտությունը: Ինչպես սովորեցնում է Հիսուսը, դա այնքան ուժեղ զգացում է, որ մեզ ստիպում է քայլեր անել ուրիշների կարիքները հոգալու համար: Երբ հուսահատ մարդկանց բազմությունը հետևում էր Հիսուսին, նա «գթաց նրանց, որովհետև հովիվ չունեցող ոչխարների էին նման» (Մարկ. 6.34): Նա իր կարեկցությունը գործի վերածեց՝ բժշկելով նրանց հիվանդներին (Մատթ. 14.14): Մենք նույնպես պետք է «հագնենք գութը», հորդորում է Պողոսը (Կող. 3.12): Իսկ որո՞նք են օգուտները: Ինչպես Ուարրենն է ասում. «Դա լիցքավորում է ինձ: Դա ասես լցված օդ լինի անիվներում»: Մեր շրջապատում շատ կարիքներ կան, և Աստված դրանք հանձնում է մեր ուշադրությանը: Այդ կարիքները մեզ կարող են մղել կարեկցության արարքներ գործելու և կիրախուսեն ուրիշներին, երբ նրանց ցույց տանք Քրիստոսի հանդեպ մեր սերը:

**Աղոթք** - Սիրող Աստված, երբ տեսնում եմ ցավ ու կարիք, փափկացրո՛ւ սիրոս, որպեսզի քրիստոնեական կարեկցությամբ գործեմ: Ամեն:

**Երբ ցավ ու կարիք տեսնենք մեր շուրջը, գործի լծվենք և կատարենք գթասրտության արարքներ:**

Տերն ինձ հետ է. ես չեմ վախենում. մարդն ինձ ի՞նչ է անելու: (Մաղմ. 118. 6)

### **ՎԱԽԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ**

**Ե**րբ փոքր էի, դպրոցի բակում ամբարտավան տղաները շատ էին նեղացնում ինձ ու իմ տարեկիցներին: Երբ մենք վախից դողում էինք, մեր տանջարարները ծաղրում էին մեզ՝ ասելով. «Վախենում ես ինձնից, այնպես չէ՞: Այստեղ չկա մեկը, որ քեզ պաշտպանի»:

Իրականում այդ ժամանակ ես իսկապես վախեցել եմ, բայց դրա մեջ մի լավ բան եղել է: Անցյալում ստանալով բռունցքի հարվածներ՝ գիտեի, որ այլևս չեմ ուզում այդպիսի բան: Հետևաբար ի՞նչ պետք է անեի, ո՞ւմ պետք է վստահեի, եթե վախենում էի:

Երբ դու ութ տարեկան ես և բռնության ես ենթարկվում քեզանից մեծ մեկ ուրիշ երեխայից, վախենալը նորմալ է:

Երբ սաղմոսերգուն ենթարկվեց հարձակման, ոչ թե վախով պատասխանեց, այլ վստահ: Որովհետև գիտեր, որ միայնակ չէր կարող դիմակայել այդ սպառնալիքներին: Նա գրեց. «Տերն ինձ հետ է. ես չեմ վախենում. մարդն ինձ ի՞նչ է անելու» (Մաղմ. 118. 6): Երեխա ժամանակ, բնականաբար, չէի կարողանա հասկանալ այդ վստահության ուժը: Չափահաս տարիքում, երկար տարիներ Քրիստոսի հետ քայլելով, սովորեցի, որ Նա ավելի մեծ է, քան սարսափազդու որևէ սպառնալիք:

Մեր կյանքում հանդիպող սպառնալիքները չպետք է մեզ վախեցնեն, որովհետև տիեզերքի Արարիչը մեզ հետ է, և դա ավելի քան բավարար է:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ Դու ինձ հետ ես, և ես կարող եմ վստահել Քեզ, որպեսզի ինձ պահես Քո շնորհքով: Ամեն:

**Ինչի՞ց ես վախենում այսօր: Խնդրի՞ր Ասծուց Իր ներկայությունը, մխիթարությունը և ղափափանությունը այն ամենի համար, ինչից վախենում ես:**



Նա պիտի ողորմի քեզ, քո աղաղակի ծայնին, հենց որ նա լսի, պատասխանելու է քեզ:(Ես. 30. 19)

## **ՈՐՈՇԱԿԻ ԱՂԱՂԱԿ**

**Ե**րբ երեխան լաց է լինում, նշանակում է՝ կամ հոգնած է, կամ սոված: Բրաունն համալսարանի բժիշկներին կարծիքով՝ նորածինների լացի նրբերանգները կարող են վկայել նաև այլ խնդիրների մասին: Գիտնականները մշակել են համակարգչային ծրագրեր, որոնք չափում են լացի ձայնի բարձրությունը, հատակությունը և այլ գործոններ՝ ստուգելու երեխայի կենտրոնական նյարդային համակարգի վիճակը:

Եսային մարգարեացավ, որ Աստված լսում է Իր ժողովրդի հատակ աղաղակները, որոշում նրանց հոգեվիճակը և պատասխանում: Հուզան Աստծո հետ խորհրդակցելու փոխարեն անտեսեց Նրա մարգարեին և օգնություն որոնեց՝ Եգիպտոսի հետ դաշինք կնքելով (Ես. 30. 1-7): Աստված նրանց ասաց, որ եթե շարունակեն իրենց ապստամբությունը, դա կբերի պարտություն ու նվաստացման: Բայց Նա միաժամանակ ուզում էր «իր հաճությունը ցույց տալ և գթալ» (Հմ.18): Փրկությունը գալիս է, բայց միայն նրանց ապաշխարություն և հավատքի աղաղակների միջոցով:

Եթե Աստծո ժողովուրդն իսկապես ձայն տար Նրան, Նա կնեղեր նրանց մեղքերը և կթարմացներ նրանց հոգևոր ուժն ու կենսունակությունը (Հմ. 8-26):

Նույնը վերաբերում է Հիսուսի այսօրվա հավատացողներին: Երբ ապաշխարություն ու վստահություն մեր ձայները հասնեն մեր երկնավոր Հորը, Նա կլսի, կնեղի և կնորոգի մեր ուրախությունն ու հույսը Իր հանդեպ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, ների՛ր ինձ, որ Քեզնից բացի ուրիշ տեղ եմ փնտրում երաշխիք, ապահովություն ու պաշտպանություն: Խնդրում եմ՝ վերականգնի՛ր սերս Քո հանդեպ: Ամեն:

**Փորձում եմ աղյսամբել Ասծո դեմ և օգնություն փնտրել ուրիշ տեղ: Բայց եթե աղափարությամբ մոտենանք Իրեն, Նա կգթա մեզ:**

Եվ ասաց.«Ո՛վ Սառայի աղախին Չագար, որտեղի՞ց ես գալիս և ո՞ւր ես գնում»:(ԾՆ. 16.8)

## **ԱՍՏՎԱԾ ՏԱԼԻՍ Է ԱՆՈՒՆԴ**

**Ն**ատալյան զնացել էր այլ երկիր՝ կրթություն ստանալու: Սակայն իր ապրած տան տերը շուտով սկսեց նրա հանդեպ ֆիզիկական ու սեռական բռնություն գործել, ստիպել առանց վարձատրության խնամել իր երեխաներին: Արգելում էր դուրս գալ և հեռախոսից օգտվել: Ասել է թե՛ դարձրել էր աղախին:

Հագարը Աբրահամի ու Սառայի եգիպտացի ստրուկն էր: Ոչ ոք նրա անունը չէր տալիս, անվանում էին «իմ աղախինը» կամ «քո աղախինը» (ԾՆ. 16. 2, 5-6): Նրանք ուղղակի ուզում էին օգտագործել նրան, որպեսզի կարողանային ժառանգ ունենալ:

Որքա՞ն տարբեր է Աստված: Տիրոջ հրեշտակն առաջին անգամ Սբ. Գրքում հայտնվում է, երբ անապատում խոսում է Հղի Հագարի հետ: Հրեշտակը կամ Աստծո առաքյալն է, կամ Ինքը Աստված: Հագարը հավատում է, որ Նա Աստված է, ասում է: «Դու իմ տեսիլքի Աստվածն ես» (Հմ.13): Եթե հրեշտակը Աստված է, նա կարող է լինել նաև Աստծո Որդին, Նա, ում մասին Աստված մեզ ասում է՝ ցույց տալով նրան նախամարդեղացած տեսքով: Նա Հագարին դիմում է իր անունով. «Ո՛վ Սառայի աղախին Հագար, որտեղի՞ց ես գալիս և ո՞ւր ես գնում» (Հմ.8):

Աստված տեսավ Նատալյային, և աղջկա կյանքում հայտնվեցին հոգատար մարդիկ, որոնք փրկեցին նրան: Այժմ նա սովորում է, որպեսզի դառնա հիվանդապահուհի: Աստված տեսավ Հագարին և կանչեց նրա անունով: Աստված տեսնում է նաև քեզ: Կարող ես անտեսված լինել կամ բռնության ենթարկվել, բայց Հիսուսը կկանչի քեզ քո անունով: Գնա՛ Նրա մոտ:

**Աղոթք** - Ծնորհակալ եմ, Հիսուս, որ գիտես իմ անունը: Ես հանգստանում եմ Քո սիրով, որ ունես իմ հանդեպ: Ամեն:

**Հիսուսը գիտի քո անունը և լավ ծանաչում է քեզ: Ուստի փառալերե՛նք իրար այս ծանախությանը:**

Սեզ համար բռնեցե՛ք աղվեսներին, այգիներն ավերող փոքրիկ աղվեսներին: (Երգ 2.15)

### **ԽՆԱՄԻՐ ՊԱՐՏԵԶՂ**

**Ե**ս շատ ոգևորված էի մեր մրգի ու բանջարեղենի փոքրիկ պարտեզով: Բայց շուտով սկսեցի հողի մեջ փոքրիկ անցքեր նկատել: Հետո մեր ծառի առաջին պտուղը, նախքան հասունանալը, անհետացավ: Մի օր էլ սարսափով նկատեցի, որ նապաստակն ամբողջովին ավերել էր ելակի թուփը: Երանի՛ ավելի ուշադիր լինեի նախազգուշացնող նշաններին ու կանխելի:

Երգ երգոցում սիրային գեղեցիկ բանաստեղծությունը նկարագրում է երիտասարդ կնոջ ու տղամարդու զրույցը: Իր սիրելիին կանչելիս տղամարդը խստիվ զգուշացնում է կենդանիներին, որոնք փչացնում են իրենց սիրո այգին: «Սեզ համար բռնեցե՛ք աղվեսներին, այգիներն ավերող փոքրիկ աղվեսներին» (Երգ 2.15),- ասում է նա՝ հավանաբար նկատի ունենալով իրենց սիրավեպին սպառնացող որոշ «փոքրիկ աղվեսների» (խանդ, գայրույթ, խաբեություն կամ անտարբերություն): Քանի որ հիացած էր իր հարսնացուի գեղեցկությունը (Հմ.14), նա չէր հանդուրժում որևէ անբարենպաստ բանի առկայություն: Իր սիրելին հազվագյուտ էր, ինչպես «շուշանն է փշերի մեջ» (Հմ.2), և տղամարդը իրենց հարաբերությունը պաշտպանելու համար պատրաստ էր գործի լծվելու:

Աստուծո ամենաթանկ նվերներից են մեր ընտանիքն ու ընկերները, թեև այդ հարաբերություններն էլ երբեմն հեշտ չէ պահպանել: Համբերություն, հոգատարություն և «փոքրիկ աղվեսներից» պաշտպանվելով՝ կարող ենք վստահ լինել, որ Աստված բարի պտուղներ կտա:

**Աղոթք** - Հիսու՛ս, շնորհակալ եմ, որ սիրում ես ինձ: Ամեն:

**Եթե ուժադիր չլինենք և մեր մտերիմ հարաբերություններում հանդուրժենք փոքրիկ խանգարող հանգամանքները, մեր սիրո դարձեղ կարող է փչանալ:**

Առատաձեռն մարդը կբարգավաճի, և ոռոգողն ինքն էլ կոռոգվի: (Առ. 11. 25)

## **ՏՎՈՂԻ ՍԻՐՏ**

**Վ** իսկոնսինում գտնվելու մեր վերջին օրը ընկերուհիս եկել էր մեզ հրաժեշտ տալու և բերել էր իր չորս տարեկան դուստերը՝ Քինսլին: «Չեմ ուզում, որ գնաք», - ասաց երեխան ու փարվեց ինձ: Ես նրան տվեցի իմ հավաքածուից մի նկարազարդ հովհար և ասացի: «Երբ կկարոտես ինձ, կօգտագործես այն ու կհիշես, որ ես սիրում եմ քեզ»: «Իսկ դու ուրիշ, թղթից հովհար չունե՞ս, որ ինձ տաս», - հարցրեց Քինսլին: «Այդ մեկը կոտրված է, - ասացի, - ես ուզում եմ, որ դու ամենալավ հովհարն ունենաս»: Ես, իհարկե, չափսոսացի, որովհետև երեխային երջանիկ տեսնելը ինձ համար շատ ավելի կարևոր էր: Հետո աղջնակը մորն ասել էր, թե ինքը տխրել է, որ ինձ մոտ մնացել է կոտրված հովհարը, և ինձ ուղարկեցին մի շքեղ, մանուշակագույն հովհար: Քինսլին դրանով հավանաբար ավելի էր երջանկացել, ինչպես ես: Բավարարում ու ինքնապահպանում քաջալերող աշխարհում մենք փորձում ենք կուտակել ու դիզել՝ փոխանակ տալու, նվիրելու: Իսկ Աստվածաշունչն ասում է, թե մարդը «իր ստացվածքը ցրելով ավելացնում է» (Առ. 11.24): Մեր մշակույթն ավելի կարևորում է բարեկեցութունը, իսկ Աստվածաշունչն ասում է, որ «առատաձեռն մարդը կբարգավաճի, և ոռոգողն ինքն էլ կոռոգվի» (Հմ.25): Աստծո անսահման ու անվերապահ սերն ու առատաձեռնությունը անընդհատ լիցքավորում են մեզ: Յուրաքանչյուրս կարող ենք ունենալ տվողի սիրտ և ստեղծել անվերջ նվիրատվության շրջանակներ, որովհետև մենք ճանաչում ենք բոլոր բարի բաներ տվողին՝ Աստծուն, որը երբեք չի հոգնում առատորեն բաշխելով՝

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, օգնի՛ր ինձ, որ բաշխեմ նույնքան առատաձեռն, որքան Դու ես տվել ինձ: Ամեն:

**Տվողի սիրտ ունենալը հիանալի առափնուրթյուն է յուրաքանչյուր Բրիտանյայի համար, որովհետև մեր երկնավոր Հայր Աստվածն Ինձ առատաձեռն է մեր հանդեպ:**

Ձեր Տեր Աստվածն Աստված է վերևում՝ երկնքում, և ներքևում՝ երկրի վրա: (Զեւու 2.11)

## **ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԶՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ն ուրիվուդյան Ֆիլմերում մենք տեսել ենք բազմաթիվ լրտեսների, որոնք վարում են չքեղ ավտոմեքենաներ: Բայց Կենտրոնական հետախուզական վարչությունն նախկին ղեկավար Ջոնա Մենդեզը ներկայացնում է բոլորովին հակառակ պատկեր: Գործակալը պետք է լինի «փոքրիկ, մոխրագույն մարդ, աննկատ և ոչ թե չքեղ մեկը,- ասում է նա:- Լավագույն գործակալները նրանք են, որոնց գործակալ լինելը քիչ հավանական է»: Երբ Իսրայելի լրտեսներից երկուսը գաղտնի մտան Երիքով, Ռախաբն էր, որ նրանց թաքցրեց թագավորի զինվորներից (Հեսու 2.4): Նա , ըստ երևույթին, ամենաքիչ հավանական անձն էր, որին Աստված կարող էր գործածել որպես լրտես. քանանացի էր, կին էր և անբարոյական էր: Բայց նա սկսել էր հավատալ իսրայելցիների աստծուն. «Ձեր Տեր Աստվածն Աստված է վերևում՝ երկնքում, և ներքևում՝ երկրի վրա» (Հեսու 2.11): Նա Աստծո լրտեսներին պահեց վուշի ցողունների մեջ և օգնեց, որ փախչեն: Աստված հատուցեց նրան իր հավատի համար. «Հեսուն ողջ թողեց պոռնիկ Ռախաբին, նրա հոր ընտանիքը և նրա բոլոր մերձավորներին» (6.25): Երբեմն մեզ էլ կարող է թվալ, թե մենք ամենաանհավանական թեկնածուն ենք, որին կարող է օգտագործել Աստված: Սակայն պատմությունը լի է Աստծո կողմից փրկագնված «ոչ չքեղ» հավատացյալներով, ինչպիսին է Ռախաբը, որոնց հատուկ առաքելություն է տրված Նրա թագավորությունում: Վստահ եղե՛ք, որ Նա աստվածային նպատակներ ունի նույնիսկ ամենաքիչ հավանական մարդու համար:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ, օգնի՛ր ինձ, որ պատրաստ լինեմ ընդունելու Քո կոչումը այն առաքելության համար, որ Դու կարող ես ունենալ ինձ համար: Ամեն:

**Շաբաթական է զգալ Աստծո գործի մեջ մեր փիչ հավանական լինելը, սակայն Աստված վստահաբար հասուկ առաքելություն ունի մեզ համար:**

## Նյութերի ցանկ

Աղոթք.....	Հոււ. 2, 9, 16, 18, 21, 23, 29, Օգ. 3
Առատաձեռնութիւն.....	սեպ. 29
Աստվածաշնչի ուխտը.....	Հոււ. 28
Աստծո ընտանիքը.....	օգ. 1, 8, 15, 22
Աստծո հետ հաղորդակցութիւն.....	Հոււ. 21, սեպ. 2
Աստուծո սերն ու հոգածութիւնը.....	Հոււ. 4, օգ. 4, 10, 12, 14, 25, 27, 29, 31, սեպ. 13, 27
Աստուծուն սպասել.....	Հոււ. 28, օգ. 19, 29, սեպ. 14
Աստուծու վարդապետութիւնը.....	Հոււ. 31, սեպ. 2, 23
Աստծուն վստահել....	Հոււ. 2, 26, օգ. 10, 19, 26, 27, սեպ. 10
Արդարութիւն.....	օգ. 2, 9, 16, 23
Ավետարանչութիւն.....	Հոււ. 17, օգ. 13, 17, սեպ. 17
Բարեկամութիւն.....	օգ. 25
Գութ.....	օգ. 2, 9, 16, 23, սեպ. 13
Եկեղեցական միութիւն.....	օգ. 8, 22
Երրորդութիւն.....	սեպ. 2, 9, 16, 23
Թշնամիներ.....	Հոււ. 3
Իմաստութիւն.....	օգ. 18, սեպ. 11
Ծառայել.....	Հոււ. 14, 30, սեպ. 7, 8, 24, 30
Հակասութիւն եւ ընդդիմութիւն.....	սեպ. 16
Հալածանք.....	Հոււ. 8, 26
Հանգիստ.....	օգ. 20
Հաշտութիւն.....	սեպ. 26
Հավատքի պատմութիւններ.....	սեպ. 19
Հեզութիւն.....	Հոււ. 20
Հոգևոր աճ և այլափոխութիւն.....	Հոււ. 5, 13, օգ. 16, 17, 20, 24, սեպ. 9, 16, 18
Հոգևոր կարգապահութիւն.....	Հոււ. 29, սեպ. 12
Հոգևոր պարզեաներ.....	Հոււ. 30

Հոգու պտուղները.....	Հուլ. 1
Մարդկութիւն եւ խաթարված բնութիւն.....	սեպ. 22
Մեղք.....	օգ. 3
Մեղքերի թողութիւն.....	Հուլ. 12, 19
Մենակութիւն.....	օգ. 14
Հանցանք.....	Հուլ. 18
Հավիտենական կյանք.....	Հուլ. 4
Հույս.....	Հուլ. 6, 24, 25, սեպ. 5
Հուսահատութիւն.....	օգ. 29
Ներել ուրիշներին.....	սեպ. 26
Շնորհակալութիւն.....	Հուլ. 11
Որոշում կայացնել.....	Հուլ. 13, սեպ. 20
Ուրիշ Հավատացեալներու հետ ապրել.....	օգ. 18
Սեր՝ ուրիշների հանդեպ..	Հուլ. 3, 23, օգ. 2, սեպ. 7, 13, 24, 28
Սուրբ Գրքի սերտողութիւն եւ մեկնութիւն.....	սեպ. 18
Սուրբգրային ավետարանչութիւն աստուածաբանութիւն....	սեպ. 1. 18. 15. 22
Սուրբ Հոգի.....	Հուլ. 1, 8, 15, 17, 22, օգ. 30, սեպ. 3, 15, 23
Վախ.....	սեպ. 25
Վախճանաբանութիւն.....	Հուլ. 25
Վիշտ.....	Հուլ. 24
Տանջանք եւ ողբերգութիւն..	Հուլ. 25, օգ. 26, 28, սեպ. 1, 5
Ցեղապաշտութիւն.....	օգ. 8, 16
Քաջակերութիւն.....	Հուլ. 26, օգ. 21
Քրիստոս՝ անձը եւ գործը.....	օգ. 1, 9, 15, 30, սեպ. 21
Քրիստոսի հետ միութիւն.....	օգ. 15, 20
Քրիստոսի Համար ապրել.....	օգ. 7, սեպ. 8, 19, 30
Քրիստոսի նման ապրել.....	Հուլ. 5, 8, օգ. 5, սեպ. 6, 11, 14, 16, 18, 28
Քրիստոսի հետ նույնանալ.....	օգ. 11
Փրկութիւն.....	Հուլ. 10, 12, 27, օգ. 6, սեպ. 4, 21

## Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքուկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռախոս՝ +374 10 54 3 576, +374 10 54 35 78  
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am  
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7<sup>ա</sup>

Հեռ. +374 47 945 275

---

Անուն, ազգանուն .....

Հասցե.....

.....

Հեռախոս.....

---